



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

«ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 1-ԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
2		
ՆԱԽԱԲԱՆ	3
ՆՈՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....		4
1. ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՈՂՈՒ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՄԱՆԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		5
2. ՂԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՍԱՐՄԱՆԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	7	
Օգտագործված գրականության ցանկ	10	
ԱՆԻ ԴԱՐԱՑՅԱՆ		
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		11
1. ՍԱՐՄԱՆԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒԹՅՈՒՆԸ		11
2. ՄԱՐՈՂՈՒՄ ԵՎ ՔԱՐԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12	
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ	13	
4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ		13
5. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ		14
6. ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ	14	
7. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎՈՐՈՒՄ	15	
8. ՍԱՐՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՔՎԵՆ	16	
9. ԱՆՑՈՒՄՎՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՍԱՆ	16	
Օգտագործված գրականություն	17	
ՏԻԳՐԻՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ		
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		18
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՍԱՆ		19
1. ՍԱՐՄԱՆԴՐԱԿԱՆ	ԿԱՐԳԻ	ՀԻՄՈՒԹՅՈՒՆԸ
.....	19	
2. ՄԱՐՈՂՈՒՄ	ԻՐԱՎԱԿԱՆ	ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ
.....	20	
3. ՆԱԽԱԲԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒԾԸ		22
4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ	23	
5. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ	24	
6. ՂԱՏԱԿԱՆ ԻԱՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ		25
7. ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵԶՐԱՓԱԿԻՉ		27
ՍԱՆ		
Օգտագործված	գրականության	ցանկ
.....	28	
ՏԻՐԱՅԻ ՎԱՐԴԱՎԱՐՅԱՆ		
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ		30

2. ՆԿԱՐԱԳԱՐԱԿԱՆ ՄԱՍ	30
3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ	37
Օգտագործված գրականություն	38
ՍՊՆԱ ԴԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
1. ԱՌԱՋԻՆ ՍԱՐՍԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՅԼԵՐԸ ՍԱՐՍԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՐՔ ԲԵՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	39
2. ՀՀ ՍԱՐՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ	41
Օգտագործված գրականության ցանկ	46

ՆԱԽԱՐԱՐՆ

Հայաստանը կրկին թևակոխել է սահմանադրական գործընթացների ակտիվ փուլ: Եթե հետադարձ հայացք գցենք մեր երկորի պատմությանը անկախությունից ի վեր, ապա կնկատենք, որ չնչին բացառություններով հանդերձ գրեթե չեն դադարել այդ գործընթացները: 1995թ.-ին գործող Սահմանադրության բարեփոխումներին ուղղված գործընթացները փոփոխական ակտիվությամբ սկսվեցին 1998թ.-ին: Բարեփոխումների այդ գործընթացն իր գագարնակետին հասավ 2003թ.-ին՝ դրվելով հանրաքվեի: Առաջարկվող փոփոխությունները հանրաքվեի արդյունքում մերժվելուց հետո սահմանադրական բարեփոխումների գործընթացը չընդհատվեց: Ներկայումս շրջանառվում է սահմանադրական բարեփոխումների երեք փաթեթ՝ ներկայացված տարբեր քաղաքական ուժերի կողմից:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հրավարան ուսանողների բաժանմունքը, նպատակ ունենալով մեծացնել ընթացող սահմանադրական գործընթացների հրապարակայնությունը և մասնագիտական տարբեր խմբերի ներգրավվածությունը, առաջարկված նախագծերի շուրջ ծավալեց բանավեճ կազմակերպելով ուսանողական գիտաժողով «Սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով: Գիտաժողովի կազմակերպմանը ներգրավվեց նաև Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան և Հայաստանի իրավաբանական իիմնադրամը, իսկ աջակցողների թվում էին Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի իրավական նախաձեռնության Հայաստանի գրասենյակը և «Բուլկիմիստ» գրատունը:

Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանում գործող տարբեր բուլերի իրավաբանական ֆակուլտետների մի շարք ուսանողներ: Գրավոր փուլի 5 լավագույն գեկույցների հեղինակները, նախապես սահմանված կանոնների համաձայն, իրավունք ստացան մասնակցելու գիտաժողովի եզրափակիչ բանավոր փուլին, որը տեղի ունեցավ 2004թ.-ի նոյեմբերի 25-ին Երևանում՝ թերեյան կենտրոնում: Գիտաժողովի հաղթող ճանաչվեց ԵՊՃ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուիի Նորա Կարապետյանը, իսկ Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի Երրորդ կուրսի ուսանող Խաչիկ Հարությունյանն արժանացավ հատուկ մրցանակի իր գրավոր գեկույցում ներկայացրած հետաքրքիր գաղափարների համար:

Սույն գրքույկում գետեղվել են գիտաժողովի լավագույն հինգ գեկույցները՝ ներկայացված ԵՊՃ իրավաբանական ֆակուլտետի ուսանողներ Նորա Կարապետյանի, Տիգրան Ավետիսյանի, Տիգրայ Վարդագարյանի, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի ուսանող Անի Ղարաջյանի և Կառավարման ակադեմիայի ուսանող Սոնա Հարությունյանի կողմից:

Իրավաբան ուսանողների ակտիվ մասնակցությունը գիտաժողովին հիմք է տալիս հուսալու, որ նրանք հետագայում կա գործնական հետաքրքրություն և մասնակցություն կցուցաբերեն Հայաստանում ընթացող իրավական բարեփոխումներին և իրավունքի գերակայության վրա հիմնված պետության կերտման գործին:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պետությունը փորձում է դառնալ Եվրոպական ընտանիքի լիարժեք անդամ, իսկ դրա համար անհրաժեշտ է համապատասխանել այն չափանիշներին, որոնք ներկայացվում են ՀՀ-ին: Չափանիշներից մեկն էլ ներպետական օրենսդրությունն է:

Յուրաքանչյուր պետության օրենսդրության հիմքը նրա Սահմանադրությունն է: Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված իրավական ակտ է, իիմանական օրենք, պետականության, հայտնի իմաստով նաև՝ ամբողջությամբ վերցված հասարակության յուրօրինակ հատկանիշը: Սահմանադրությունը պետական և հասարակական կյանքի իրավաբանական հիմքն է, իրավունքի ազգային համակարգի գլխավոր աղբյուրը, օրինականության, իրավակարգի և իշխանության ինստիտուտների կայունության երաշխիքը¹:

Սահմանադրությունը այն հիմնաքարն է, որի վրա կառուցվում է անբողջ իրավական համակարգը, Սահմանադրությունն է, որ կանխորոշում է տվյալ պետության իրավական համակարգի բնույթն ու էությունը, դրա զարգացումը:

ՀՀ Սահմանադրությունն ընդունվել է 1995թ-ին: ՀՀ Սահմանադրության հիմքում դրված են ժողովրդավարական սկզբունքներ, այն արտացոլում է մեր հասարակության և պետականության զարգացման միանգամայն նոր փուլ, ամրագրում սահմանադրական կարգերի նոր հիմքերը:

ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է երկրի սահմանադրական կարգի, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին նորմեր, պետական մարմինների առանձին տեսակների իրավական վիճակի, նրանց փոխհարաբերությունների, Սահմանադրության ընդունման և փոփոխման կարգի մասին նորմեր:

ՀՀ Սահմանադրության ընդունումը մի մեծ քայլ էր դեպի իրավական, ժողովրդավարական պետություն: Այս Սահմանադրությունն առաջինն է մեր նորանկախ III հանրապետության պատմության մեջ և իր մեջ ներառում է առաջադիմական բազմաթիվ տարրեր. դրա հիմքում դրված են ժողովրդավարական սկզբունքներ:

ՀՀ նոր Սահմանադրության կառուցվածքն ու բովանդակությունը պայմանավորել են մարդու իրավունքների, քաղաքացիական հասարակության, իրավական պետության, իշխանության տարանջատման գաղափարները: Դրա հիմքում՝ որպես ելակետ դրված են անձի իրավունքների ու ազատությունների, մարդու իիմանական իրավունքների միջազգային ստանդարտները: Սակայն չպետք է մոռանալ այն ժամանակաշրջանը, երբ ընդունվել է ՀՀ Սահմանադրությունը: Այդ ժամանակ երկիրը գտնվում էր բարդ քաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական իրավիճակում և դա չէր կարող իր որոշակի ազդեցությունը չունենալ երկրում կատարվող իրադարձությունների, այդ թվում՝ Սահմանադրության վրա, քանի որ յուրաքանչյուր նոր Սահմանադրությունը արտացոլում է երկրում առկա պատմական իրադրությունը, հասարակական պահանջմունքները, տարբեր սոցիալական խնդերի շահերը: Նույնը վերաբերում է նաև 1995թ. Սահմանադրությանը: Լինելով առաջինը մեր նորանկախ հանրապետության պատմության մեջ՝ ինչպես նաև՝ իր վրա կրելով ընդունման ժամանակաշրջանի ազդեցությունը, ՀՀ Սահմանադրությունը չէր կարող կատարյալ լինել և գերծ լինել թերություններից: Անցած 9 տարիները վեր հանեցին Սահմանադրության ինչպես առավելությունները, այնպես էլ թերությունները, և այսօր, կապված մեր պետության զարգացման և Եվրոպական կառուցների ներկայացրած պահանջների հետ, հասունացել է ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը:

Մեր Սահմանադրությունը դասվում է «կոչտ» Սահմանադրությունների թվին, և կատարվող փոփոխությունները պետք է հավակնեն վերջնական լինելու: Դրանք պետք է առավելացնեն ապահովեն Սահմանադրության կայունությունը, և չպետք է ստեղծվի այնպիսի արատավոր պրակտիկա, որ յուրաքանչյուր իշխանափոխություն իր հետ բերի նաև սահմանադրական փոփոխություններ: Հիմնական օրենքը ստեղծվում է երկարատև ժամանակաշրջանի համար: Դրանում կատարվող ամեն մի փոփոխություն առաջ է բերում փոփոխություններ իրավական համակարգությունը, և Սահմանադրության կայունությունը իրավական համակարգի ներդաշնակ գործելու պայմաններից է, և Սահմանադրության հոդվածների հաճախակի փոփոխությունները ծայրահետ անցանկալի են: Պետության հիմնական օրենքը պետք է այնպես կառուցված լինի, որ այնտեղ իրենց արտացոլումը գտնեն հասարակության, քաղաքացու և պետության փոխհարաբերությունների հիմքերը կազմող հիմնարար, անանց նշանակություն ունեցող սկզբունքներ: Դրա համար անհրաժեշտ է Սահմանադրության մեջ ամրագրել այնպիսի դրույթներ, որոնք

¹ Խաչատրյան Հ.Մ., ՀՀ առաջին Սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 5

անկախ հասարակական գարզացումներից ու քաղաքական, տնտեսական իրավիճակի փոփոխություններից՝ լինեն արդիական և գործեն արդյունավետ: Սահմանադրությունը պետք է ամրագրի առավել կարևոր, իիմնարար իրավական դրույթները, որոնք ելակետային և որոշիչ են իրավունքի առանձին ճյուղերի համար, և խուսափի այնպիսի հասարակական հարաբերությունների կարգավորումից, որոնք իրենց եռթյամբ մշտափոփոխ են, սահմանադրական կարգավորման հիմնահարցեր չեն, և կարելի է հաջողությամբ կարգավորել ընթացիկ օրենսդրությամբ:

Սահմանադրական կայունության հնարավոր լինելը ապացուցում է ԱԱՆ սահմանադրական պրակտիկան:

Այսօր մշակվել և հանրության դատին են ներկայացվել սահմանադրական փոփոխությունների 3 փաթեթներ՝ ԱԱԿ կուսակցության, իշխող քաղաքական կուսակցիայի, «Ազգային ժողովավարների դաշինք» կուսակցության կողմից: Դեռևս պարզ չէ, թե որ նախագիծն է դրվելու հանրաքվեի, և կարժանանա՞ այն արդյոք հասարակության հավանությանը, թե՞ նրան «կժպտա» նախորդ բարեփոխումների նախագծի բախտը, այնուհանդերձ, պետք է նշել, որ շրջանառության մեջ դրված բոլոր նախագծերն եւ ամրագրում են իիմնարար արժեքներ, անդրադառնում մարդու իրավունքներին, փոփոխություններ նախատեսում պետական նարմինների համակարգում, իշխանության առանձին թերի լիազորությունների մեջ: Ազնիայտ է, որ այս բոլոր հարցերին անդրադառնուլ գիտական հոդվածի սահմաններում, ապահովելով պատշաճ մակարդակ, անհնար է: Գիտակցելով այս հանգամանքը՝ մենք գերադասում ենք մեր ուշադրությունը սկեռել միայն դատական իշխանության և դրա իրականացման սկզբունքների վրա: Կփորձենք ընդգծել այն առաջադիմական գաղափարները, որոնք տեղ են գտել նախագծերում և վեր հանել այն դրույթները, որոնք ընդունվելու դեպքում հնարավոր է, որ բացասական ազդեցություն ունենան: Մենք չենք անդրադառնա նաև սահմանադրական դատարանին (թեև նա էլ է դատական իշխանություն իրականացնում), քանի որ Սահմանադրական դատարանը և սահմանադրական արդարադատությունը խիստ առանձնահատուկ են և միայն այս հարցի շուրջ կարելի է առանձին հոդված գրել:

Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ 3 նախագծերն եւ ունեն իրենց թերի և լավ կողմերը, ուստի, կարծում ենք, լավագույն տարբերակը կլիներ միավորել 3 նախագծերի առավել հաջողված առաջարկությունները և խուսափել առանձին թերություններից: Սա այնքան էլ դժվար խնդիր չէ, քանի որ առաջին՝ 3 նախագծերի իիմքում ընկած գաղափարները մինյանցից էականորեն չեն տարբերում, երկրորդ՝ 3 նախագծերն էլ նախընտրում են կառավարման գրեթե նույնական համակարգ. նույնն են պետական իշխանության իիմքում ընկած իիմնական սկզբունքները, և երրորդ՝ 3 նախագծերն էլ հետապնդում են մի նպատակ՝ բարելավել Սահմանադրությունը, այն լիարժեքորեն ներդաշնակեցնել հասարակական գաղացմանը, ժողովրդավարական գործընթացներին և արձագանքել համամարդկային ձեռքբերումներին:

1. ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՎԱՐՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՔԸՆԵՐԸ ԵՎ ՍԱՐՍԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր կողմից հենց դատական իշխանությանը անդրադառնալը պայմանավորված է նրանով, որ նախ՝ մարդու իրավունքների առավելագույն սահմանափակումներ հնարավոր են հենց այս ոլորտում, և առանձնահատուկ կարևորություն են ստանում դրանց սահմանադրահիմնական երաշխիքները, երկրորդ՝ հենց դատական իշխանության իրականացումից է մեծապես կախված պատժի անխուսափելիության սկզբունքի իրացումը, որն անդրադառնում է հանցավորությունից՝ հասարակության ամենամեծ վնաս հասցնող արարքներից հասարակության պաշտպանվածության և դրա արդյունքում հասարակությունում իրավակարգի պահպանման վրա: Հանցագործության կանխման արդյունավետությունը կախված է ոչ թե պատժի դաժանությունից, այլ դրա անխուսափելիությունից², ինչը հնարավոր է բացառապես անկախ և ուժեղ դատական իշխանության առկայության պայմաններում, քացի այդ՝ դատական իշխանության անկախությունը տվյալ երկրի ժողովրդավական լինելու չափանիշներից մեկն է, և, վերջապես, կայացած դատական համակարգն է այն զապաշապիկը, որը թույլ չի տալիս պետական նարմիններին իրենց գործունեության ընթացքում դուրս գալ իրավունքի սահմաններից: Այն հանգամանքը, որ քաղաքացիները, նրանց կազմավորումները և միավորումները, բոլոր պետական և մունիցիալ մարմինները, ինը՝ պետություն՝ ի դեմք իշխանության և կառավարման բարձրագույն մարմինների, պարտավոր են կատարել դատարանների որոշումները³, արդեն խոսում է դատական իշխանության յուրահատուկ, մյուսներից էականորեն տարբերվող դերի մասին:

Սահմանադրական փոփոխությունների իիմնավորումներում նշվում է. «Նոր մոտեցումներ են պահանջում դատական իշխանության անկախության և համակարգային ամբողջականության

²Беккария Ч.О. О преступлениях и наказаниях, М.,1939, էջ 308-309

³ Конституционное право зарубежных стран. Учебник для вузов. Под ред. М. В. Баглай, М.,1999, էջ 329

սահմանադրական երաշխիքներն ապահովելու հիմնահարցերը: Սահմանադրորեն պետք է երաշխավորվի դատական իշխանության իրական անկախությունը» (ՄԱԿ կուսակցություն), իսկ մյուս տարբերակի (իշխող քաղաքական կոալիցիա) հեղինակները՝ որպես իրենց տարբերակի առավելություն, նշում են, որ իրենց կողմից առաջարկվող փոփոխությունները սահմանում են գործուն մեխանիզմներ՝ դատական իշխանության անկախության և անաշառության ապահովման ուղղությամբ:

Ի տարբերություն վերը նշված տարբերակների՝ որոնք առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դատական իշխանությամբ՝ «Ազգային ժողովրդավարների դաշինքը» Սահմանադրության «Դատական իշխանություն» և դրան իր որոշակի դրույթներով առնչվող «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխներում փոփոխություններ չի նախատեսել (գուցե գտնելով, որ ՀՀ դատական համակարգը կատարյալ է և փոփոխությունների կարիք չի գործ, իսկ Սահմանադրության II գլուխն անթերի, սպառիչ, պատշաճ է կարգավորում մարդու իրավունքներին առնչվող հարաբերությունները):

Մենք կանդրադառնամք մարդու իրավունքների և ազատությունների գլխին և դրանցում նախատեսվող փոփոխություններին և լրացուներին, որովհետև մի շարք սահմանադրական իրավունքներ և դրանց սահմանափակունները կապված են դատական իշխանության հետ:

Այսպես՝ Սահմանադրության 18-րդ հոդվածը կարգավորում է անձի ազատության իրավունքի հետ կապված հարցերը, իսկ օրինական կարգով ազատության իրավունքի սահմանափակունքները, որպես կանոն, իրականացվում են քրեական դատավարության ընթացքում: Սահմանադրական բարեփոխուների 2 (ՄԱԿ կուսակցության և իշխող քաղաքական կոալիցիայի) տարբերակներն ել լրացրել ու գարգացրել են 18-րդ հոդվածի բովանդակությունը, սակայն ամեն մի նախագիծ տարբեր չափերով. Եթե իշխող քաղաքական կոալիցիայի նախագծում ազատությունից և անձեռնմխելիությունից գրկելու կամ սահմանափակելու հիմքերը նախատեսելը թողնված է օրենքին, ապա ՄԱԿ կուսակցության նախագիծն, այս հարցում ամբողջովին կրկնելով անցյալ տարի հանրաբեկի դրված սահմանադրական փոփոխությունների նախագիծը, սպառիչ թվարկում է ազատությունից գրկելու կամ այն սահմանափակելու դեաբերը (ընդ որում հիմքերը նույնական ամբողջովին նույնական են չընդունված նախատեսված դեաբերին):

Մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրական պետք է գնահատել ազատությունից գրկելու դեաբերի սպառիչ թվարկումը, քանի որ դրա միջոցով մարդու իրավունքներից մեկի պաշտպանությունը ավելի է ամրանում՝ բարձրանալով սահմանադրական մակարդակի, բայց մյուս կողմից ել Սահմանադրությունը չպետք է ծանրաբեռնվի այնպիսի կառուցակարգերով, որոնց նախատեսումը և իրականացումը միանգամայն հնարավոր է օրենքի մակարդակով. Սահմանադրությունը պետք է կարգավորի միայն այն հարաբերությունները, որոնք հիմնարար նշանակություն ունեն, ելակետային են իրավունքի առանձին ճյուղերի համար: Այս առումով, կարծում ենք, սահմանադրական մակարդակով բավարար է զուտ սկզբունքի սահմանումը՝ դրա մանրամասնումը թողնելով օրենքին, ուստի, ըստ մեզ, գերադասելի է իշխող քաղաքական կոալիցիայի մերկայացրած նախագիծի մոտեցումը, առավել ևս, եթե հաշվի առմենք, որ ՄԱԿ կուսակցության մոտեցումը պարունակող նախագիծը արդեն մի անգամ մերժվել է հասարակության կողմից: Այլ հարց է, որ այնպիսի նորանուժություններ, ինչպիսիք են յուրաքանչյուր ձերբակալվածին իրեն հասկանալի լեզվով իր ձերբակալման պատճառների և ներկայացվող մեղադրանքի մասին տեղեկացնելը, ձերբակալության մասին ձերբակալվածի ընտանիքին կամ նրա կողմից ընտրված անձին տեղեկացնելը, ձերբակալված յուրաքանչյուր անձին 48 ժամվա ընթացքում դատարան բերնան ենթարկելը (թեև ավելի լավ կլիներ դատարան ներկայացնելը, քանի որ բերնան ենթարկելը հարկադրանքի միջոց է, իսկ դատարանին ներկայացնելը նրա իսկ շահերից է բխում, հետևաբար՝ որպես կանոն, հարկադրաբար չի լինում), նրա վերաբերյալ 24 ժամում որոշում կայացնելը (ՄԱԿ կուսակցության, իշխող քաղաքական կոալիցիա), ողջունելի են: Դրական պետք է գնահատել նաև այն, որ 2 տարբերակների համաձայն էլ մարդուն չի կարելի ազատությունից գրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները, (այսպիսի նորմ կա նաև Բուլղարիայի, Խոականի Սահմանադրություններում), կամ, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապօրինի ձերբակալման, խուզարկման, կալանավորման կամ նշանակված խափանման այլ միջոցի որոշման կամ կալանքի տակ պահելու համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վճարի համարթեք հատուցման (ի դեպ, զուտ տեխնիկական առումով ավելի ծիշտ կլիմեր «օրենքով սահմանված հիմքերով և կարգով» արտահայտությունը տանել նախադասության վերը՝ ինաստի շփոթից խուսափելու համար, հակառակ դեպքում հասկացվում է, որ վճար է պատճառվել օրենքով սահմանված հիմքերով և կարգով, մինչդեռ համարթեք հատուցման է օրենքով սահմանված հիմքերով և կարգով):

ՄԱԿ կուսակցության նախագիծի 15-րդ հոդվածում կա ևս մեկ նորարարություն, համաձայն որի՝ «Մարդուն կարելի է կալանավորել կամ այլ խափանման միջոց ընտրել միայն» (ընդգծումը մերին է-Շեղինակ) դատարանի որոշմամբ: Կալանավորման դեպքում դատարանի որոշումը պարտադիր է: Սա հանրաճանաչ սկզբունք է՝ ամրագրված միջազգային պայմանագրություն և իր արտացոլումն է գտել

տարբեր երկրների Սահմանադրություններում (Խտալիա, Չեխիա, Բուլղարիա): Նման մոտեցումը միանգամայն տրամաբանական է, քանի որ ազատությունը հիմնարար իրավունքներից է, և դրանից զրկելու դեպքում անձը զրկվում է իր իրավունքներից կամ սահմանափակվում է նրա իրավունքներից շատերը, և, բնականաբար, նման կարևոր իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ, բայց ի՞նչ կլինի, եթե յուրաքանչյուր խափանման միջոց կիրառվի դատարանի որոշմամբ: Այս դեպքում մենք փորձում ենք ավելի կարոլիկ լինել, քան Յորմի պատճեն՝ Նախ՝ Էականորեն կմեծանա դատարանների ծանրաբեռնվածությունը և նրանք իրենց հիմնական ֆունկցիայի՝ արդարադատություն իրականացնելու փոխարեն հիմնական գործառույթ կդարձնեն դատական վերահսկողությունը, ընդ որում, միանգամայն անտեղի, երկրորդ՝ մեծապես կխոչընդոտվի հետաքննության և նախաքննության մարմինների աշխատանքը, որանց օաքերատիվությունը, մեծ վնաս կհասցվի նրանց ինքնուրույնությանը, և, վերջապես, ինչքանո՞վ է ընդունելի, օրինակ՝ անձից չեռանալու մասին ստորագրություն վերցնելու կամ երաշխավորություն կիրառելու համար ստանալ դատարանի համաձայնությունը: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը ևս դատարանի համաձայնությունը պահանջում է միայն կալանավորելիս և ձերբակալելիս: Մնացած դեպքերի մասին նա լրում է: Նույն մոտեցումն ունեն նաև ՈԴ Սահմանադրությունը (հոդված 22), ԱԱԾ Սահմանադրությունը (փոփոխություն II), Բուլղարիայի Սահմանադրությունը (հոդված 30) և այլն:

Առանց պատշաճորեն հավաքված ապացույցների անհնար է բնականոն դատավարությունը, դատական իշխանության իրականացումը: Ապացույցների հավաքման պրոցեսում կարևոր նշանակություն ունի նաև խուզարկությունը, որը նույնպես առնչվում է մարդու հիմնարար իրավունքներին, դրանց սահմանափակմանը:

Խուզարկությանը նվիրված են Սահմանադրության 18-րդ (անձնական խուզարկություն) և 21-րդ (բնակարանի խուզարկություն) հոդվածները: 18-րդ հոդվածի տեքստում կատարված փոփոխությունը անձին հնարավորություն է տալիս կալանավորման, ձերբակալման և խուզարկման օրինականությունն և հիմնավորվածությունը վիճարկել վերադաս դատական ատյանում (փոփոխությունների 2 տարբերակներ): Կալանավորման և բնակարանի խուզարկման առումով «վերադաս դատական ատյան» հասկացությունն օգտագործելը հասկանալի է, բայց ձերբակալման, անձին խուզարկելու պարագայում, կարծում ենք, «վերադաս դատական ատյան» արտահայտությունը այնքան էլ ցանկալի չէ օգտագործել, քանի որ այս դեպքում ձերբակալման ու անձին խուզարկելու համար դատարանի բոլոր դպրությունը չի պահանջվում: Ավելի նպատակահարմար է համապատասխան գործողության հիմնավորվածությունը բողոքարկել ոչ թե վերադաս, այլ առաջին ատյանի դատարանում, հետևաբար, կարելի էր ձևակերպումը տալ հետևյալ կերպ: «բողոքարկել դատական կարգով», թեև, ըստ մեզ, լավագույն լուծումը կլիներ իրավունքների և ազատությունների դատական պաշտպանություն ապահովել բոլոր դեպքերում, այսինքն բողոնել գործող Սահմանադրության 38-րդ հոդվածի 2-րդ մասը (այս կետից հրաժարվել են 2 նախագծերն ել), չնեղացնել դատական պաշտպանության իրավունքը:

Ինչ վերաբերում է բնակարանի խուզարկությանը, ապա այս հարցը կարգավորող հոդվածը բողոնվել է անփոփոխ: Բնակարանը կարող է խուզարկել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Միայն դատարանի որոշմամբ բնակարանի խուզարկության հնարավորության նախատեսումը առ այսօր իրարաներժ կարծիքների տեղիք է տալիս և տեսաբան, և պրակտիկ իրավաբանների մոտ: Սույն հարցի կապակցությամբ սահմանադրական մոտեցումը քննադատողները՝ որպես իրենց տեսակետի հիմնավորում, ներկայացնում են այն փաստարկը, որ խուզարկությունն արդյունավետ կարող է լինել միայն այն դեպքում, եթե կատարվում է օպերատիվ, գաղտնի, հանկարծակի, իսկ դատարանի կողմից խուզարկության կատարման բոլոր տարրերը հարցի քննարկման՝ օրենքով սահմանված կարգն անխոսափելիորեն հանգեցնում է թվարկված հատկանիշների կորստյան և չի նպաստում նշանական կարևորագույն քննական գործողությունների արդյունավետ իրականացմանը: Պատահական չէ, որ նման կոշտ մոտեցում չունի նաև ՈԴ Սահմանադրությունը (հոդված 25): Բնակարանի անձեռնմխելիության իրավունքի անհարկի սահմանափակումից զերծ մնալու համար, ըստ մեզ, միանգամայն բավարար է այն, որ բնակարանի խուզարկությունը մինչև դատարանի որոշումը կատարվի միայն անհետածգելի և օրենքով նախատեսված խիստ որոշակի դեպքերում:

2. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անշուշտ, միայն մարդու՝ դատական իշխանության իրականացմանն առնչվող իրավունքների ապահովումը բավարար չէ դատական իշխանության արդյունավետ գործունեության համար: Առավել

⁴ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդիանություն մաս, Դասագիրք բուհերի համար. Գ.Ս.Ղազիմյանի խմբագրությանը, Երևան, 2000, էջ 144

հիմնարար, էական նշանակություն ունի դատական իշխանություն իրականացնող մարմինների՝ դատարանների ձևավորման, դատավորների ընտրության և նրանց վերաբերող հարցերի սահմանադրական կարգավորումը:

Դատարանը էական ազդեցություն է ունենում սոցիալական, տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի, մարդու կարգավիճակի, նրա իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության վրա: Ցուրաքանչյուր ոք պետք է հաստատած վստահ լինի, որ դատարանին դիմելը կավարտվի անկախ, օրյեկտիվ, արդարացի որոշումով⁵:

Նման վստահություն կարող է առկա լինել միայն այն պարագայում, եթե դատական իշխանությունը անկախ է, և նրա վրա որևէ կողմնակի ազդեցություն բացառված է: Դատական իշխանության՝ նման հատկանիշներով օժտված լինելը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որոնցում առաջնային տեղ են գրավում դատարանակազմական հարցերը: Սահմանադրական փոփոխությունների նախագծերը (ԱՎԿ կուսակցություն և իշխող քաղաքական կուլիցիա) անդրադարձել են այդ հարցերին հատկապես փոփոխություններ նախատեսելով Արդարադատության խորհրդին առնվոր դրույթներում: Իշխող քաղաքական կուլիցիայի նախագիծը ի տարբերություն գործող Սահմանադրության, Արդարադատության խորհրդի կազմում տեղ չի հատկացրել գլխավոր դատախազին, այլ դատախազներին, արդարադատության նախարարին, որը ոչ միայն այլևս ի պաշտոնե Արդարադատության խորհրդի փոփոխագիծ չէ, այլև ընդհանրապես չի մտնում այդ խորհրդի կազմի մեջ: Սա արվել է դատական իշխանությունը գործադիրից առանձնացնելու և վերջինիս ազդեցությունից այն գերծ պահելու համար: Բացի այդ, Արդարադատության խորհրդուր, ըստ իշխող քաղաքական կուլիցիայի փոփոխությունների, այլևս չի մասնակցի դատախազական համակարգի կազմավորմանը: Կարծում ենք, որ սա իսկապես դրական քայլ կլինի դատական իշխանության՝ որպես իշխանության առանձին թևի կայացման և նրա առանձին անկախության ապահովման ճանապարհին, բայց, ըստ մեզ, հեղինակները կանգ են առել այդ ճանապարհի կեսին. այսպես, ավելացվող 94.1 հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Արդարադատության խորհրդուր շարունակում է գլխավորել Հանրապետության նախագահը: Սրան գումարելով այն հանգամանքը, որ դատավորների նշանակումը շարունակում է կատարվել Հանրապետության նախագահի կողմից, կարելի է ասել, որ ըստ եռթյան, փոփոխությունների դեպքում էլ միանգամայն ճիշտ կլինի այն կարծիքը, որ դատարանակազմական բնույթ ունեցող դրույթները հնարավորություն են տալիս գործադիր իշխանությանը միջամտել դատական կորպուսի կազմավորման հարցերի լուծմանը⁶: Անշուշտ, փոփոխությունների հեղինակները որպես կովան կրերեն արտասահմանյան երկրների օրինակը, հատկապես Ֆրանսիայի, որտեղ նույնպես դատավորները նշանակվում են նախագահի կողմից՝ Մագիստրատուրայի Բարձրագույն խորհրդի երաշխավորությամբ (որին ընդհանուր գծերով նաև է ՀՀ Արդարադատության խորհրդուր): Բայց նշենք, որ սահմանադրական իրավունքի մասնագետները նշում են, որ Ֆրանսիայի դատական համակարգը անկախ չէ գործադիր իշխանությունից:

Մեկ փաստ ևս. Արդարադատության խորհրդուր, ի տարբերություն գործող Սահմանադրության, ըստ այս փոփոխությունների՝ այլևս չի առաջարկում վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների, վերաբննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածուներին, մինչդեռ Հանրապետության նախագահը 55-րդ հոդվածի համաձայն՝ կշարունակի նշանակել վերոիիշյալ անձանց: Ակնհայտ է, որ այս դեպքում նախագահը նշանակումը կատարում է միանձնյա, և այդ դեպքում դատական իշխանության՝ Հանրապետության նախագահից անկախ լինելու մասին խոսելը միանգամայն ավելորդ է: Մի հանգամանք ևս. Եթե գործող Սահմանադրությամբ նախագահից դատական համակարգի կախվածությունը բացատրվում է նրանով, որ դատական մարմինների անկախության երաշխավորը Հանրապետության նախագահն է (հոդված 94), (ինչպես և Ֆրանսիայում). ըստ փոփոխությունների՝ դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով: Նման նորմ պարունակում էր նաև փոփոխությունների՝ հանրավելի դրված տարբերակը, այսինքն՝ Հանրապետության նախագահը, չկրելով նույնիսկ դատական համակարգի երաշխավորության ծանրությունը, իր ձեռքում է պահում դատական համակարգի վկա ազդելու նախկին լժակմերը և դրանց բվին ավելացնում է նորերը: Այսպիսով խախտվում է նաև ԱՎԿ-ի գլխավոր Ասամբլեայի կողմից 1985թ-ի դեկտեմբերի 13-ին ընդունված «Դատական մարմինների անկախության իիմնարար սկզբունքներով» սահմանված՝ այլ պետական մարմինների կողմից դատական գործունեության իրականացնելու կամ այդ գործունեությանը միջամտելու արգելը⁸, քանի որ այս նախագծով Հանրապետության նախագահի համար բարենպաստ նախադրյալներ են ստեղծվում միջամտելու դատական մարմինների գործունեությանը:

5 Հ.Ս. Խաչատրյան, ՀՀ առաջին Սահմանադրությունը, Երևան, 1997, էջ 267

6 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Դատագիրք բուհերի համար. Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Երևան, 2000, էջ 155

7 Հ.Ս. Դիլանդյան. ՀՀ դատարանակազմությունը և իրավասպահ մարմինները, Երևան, 2000, էջ 204

Սահմանադրությունը և օրենքներն են հանդիսանում դատարանների անկախության երաշխավորը նաև ՄԱԿ կուսակցության կողմից ներկայացված սահմանադրական փոփոխությունների տարբերակում, բայց այստեղ այդ դրույթի առկայությունը արդարացված է, քանի որ միանգամայն այլ է Արդարադատության խորհրդի կազմավորման կարգը: Ըստ այդ նախագծի 94.1-րդ հոդվածի՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են ՀՀ դատարանների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով ընտրված 6 դատավորներ, Ա՛ կողմից նշանակված երկուական փաստաբան ու իրավաբան-գիտնական և արդարադատության նախարարն ու գլխավոր դատախազն՝ ի պաշտոնե: Արդարադատության խորհուրդն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ: Արդարադատության խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկված անդամները չեն կարող խորհրդի նախագահ լինել:

Կարծում ենք, Արդարադատության խորհրդի նման կազմը լավագույնն է և ունի մի շարք առավելություններ.

- հանրապետության Նախագահը, զգխավորելով Արդարադատության խորհուրդը, գրկում է դատական իշխանության վրա որևէ կերպ ազդելու հնարավորությունից,
- դատական իշխանությունը ավելի ինքնուրույն է դառնում,
- դատական իշխանություն կազմավորման գործում իր լուման է ներդնում նաև օրենսդիր իշխանությունը՝ նշանակելով փաստաբաններին և իրավաբան-գիտնականներին,
- գործադիր իշխանությունը ամբողջովին ձեռնպահ չի մնում իշխանության կազմավորման գործընթացում՝ իր մասնակցությունը թերելով արդարադատության նախարարի ու գլխավոր դատախազի միջոցով,
- այնուամենայնիվ գործադիր իշխանությունը ներկայացնության կողմից չի կարող դեկավարվել Արդարադատության խորհուրդը՝ սահմանադրական արգելվի պատճառով, արդյունքում դատական իշխանությունը չի կարող կախման մեջ դրվել գործադիրից,
- Արդարադատության խորհուրդը գրխավորում է իր կազմից ընտրված նախագահը, ինչը առավելագույն ապահովում է սույն մարմինների անկախությունը,
- դատական համակարգի կազմավորմանը մասնակցում են ինչպես դատախազական ինստիտուտը, այնպես էլ փաստաբանական ինստիտուտը:

Դատավորների անկախության սահմանադրահիմներին այս նախագծի 128-րդ հոդվածը ավելացրել է ևս մեկը՝ սահմանական, որ դատավորի և Սահմանադրական դատարանի անդամի գործունեությանը միջամտելու արգելվում է և պատժվում է օրենքով: Ամեն դեպքում, այս նախագիծը ևս Արդարադատության խորհրդի լիազորությունների շարքից հանելով հանրապետության Նախագահին վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները կամ եղանակացնություններ տալու լիազորություններ, հանրապետության Նախագահի լիազորությունների շարքում թողել է վերոհիշյալ անձանց նշանակելու իրավագործությունները՝ դրանով իսկ ամբողջովին չբացառելով հանրապետության Նախագահի ազդեցությունը դատական իշխանության վրա: Կարծում ենք, նման փոփոխությունը անհարկի է, և Արդարադատության խորհրդի այս լիազորությունը պետք է պահպանվեր:

Սահմանադրական բարեփոխումները, ինչպես արդեն մասամբ երևաց, փոփոխության են ենթարկել Արդարադատության խորհրդի լիազորությունների շրջանակը, ինչպես նաև դատավորին պատասխանատվության ենթարկելու կարգը: Այսպես՝ երկու նախագծերն ել Արդարադատության խորհրդին գերծ են պահում դատախազական համակարգի կազմավորման հետ կապված հարցերի լուծմանը մասնակցություն ունենալուց. իշխող քաղաքական կուլտիւրայի ներկայացրած նախագծում Արդարադատության խորհուրդը գրկված է դատավորներին որակավորման դասեր շնորհելու վերաբերյալ հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու լիազորությունից, այնինչ միանգամայն տրամաբանական է հենց այս մարմնին ննան լիազորությունով օժտելու: Բացի այդ, որպես Արդարադատության խորհրդի 2-րդ լիազորություն նշվում է, որ Արդարադատության խորհուրդը եղանակացնություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածուների վերաբերյալ: Եթե գործող Սահմանադրությունը մատնանշում է, որ թեկնածուները ներկայացվում են արդարադատության նախարարի կողմից, ապա այս նախագծից չի երևում, թե ում կողմից են ներկայացվում այդ թեկնածուները: Կարծում ենք, ավելորդ չեր լինի իրավաբանական տեխնիկայի առումով հենց Սահմանադրությամբ կարգավորել այս հարցը՝ այս չքողնելով ընթացիկ օրենսդրությանը:

Ինչ վերաբերում է ՄԱԿ կուսակցության նախագծին, ապա այս նախագիծը իր հերթին արդարադատության նախարարի լիազորություններից կրծատել է ներման հարցերին մասնակցելու լիազորությունը՝ թողնելով այն միայն հանրապետության Նախագահի հայեցողությանը:

Դատական իշխանության անկախության առումով կարևորվում է նաև այն կարգը, որը վերաբերում է դատավորներին որպես մեղադրյալ ներգրավելուն, նրանց պատասխանատվության ենթարկելու հարցերին: Այս հարցի վերաբերյալ նախագծերի մոտեցումները տարբեր են: Այսպես՝ իշխող քաղաքական

կոալիջիան այս հարցում որդեգրել է նույն մոտեցումը, ինչ սահմանադրական փոփոխությունների՝ հանրաքվեի տարբերակը՝ սահմանելով, որ Արդարադատության խորհուրդը գլխավոր դատախազի առաջարկով Հանրապետության Նախագահին եղրակացություն է տալիս դատավորին որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության հարց հարուցելու համաձայնություն տալու մասին:

ՄԱԿ կուսակցության նախագիծը դատավորին պաշտոնանկ անելը հնարավոր է համարում բացառապես Սահմանադրական դատարանի եղրակացության հիման վրա (այս առիթով՝ Սահմանադրական դատարանի լիազորություններին ավելացվել է նաև նման եղրակացություն տալու լիազորություն): Ինչ վերաբերում է դատավորին որպես մեղադրյալ ներգրավելուն կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվությանը, ապա ՄԱԿ կուսակցության նախագծում չի նախատեսված գլխավոր դատախազի մասնակցությունը:

Կարծում ենք, դատավորների լիազորությունների դադարեցման կարգի նման փոփոխումը դրական պետք է գնահատել, քանի որ դատավորի լիազորությունների դադարեցումը կախված չէ մեկ մարմնից: Լիազորությունները դադարում են արդարադատության նախարարի առաջարկով Սահմանադրական դատարանի եղրակացության հիման վրա, **Արդարադատության խորհրդի որոշմամբ:** Դատավորների լիազորությունների դադարեցման նախատեսվող կարգը գերադասելի է գործողից:

Որպես դատավորների գործունեության նոր երաշխիք՝ սահմանադրական փոփոխությունների 97-րդ հոդվածը նախատեսում է, որ դատավորը չի կարող որպես մեղադրյալ ներգրավվել կամ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկվել առանց Սահմանադրությանը նախատեսված մարմնի համաձայնության:

Արգելվում է նաև դատավորի ծերբակալումը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա կատարվում է հանցագործության վայրում (իշխող քաղաքական կոալիջիա) կամ նրանից անմիջապես հետո (ՄԱԿ կուսակցություն) և բխում է գործի քննության շահերից: Այս դեպքում էլ որոշակի մեխանիզմներ են նախատեսված: Հանցագործության վայրում դատավորին ծերբակալելիս անմիջապես տեղեկացվում են Հանրապետության նախագահը, Սահմանադրական դատարանի նախագահը և համապատասխան դատարանի նախագահը: Թեև առաջին հայացքից կարող է թվալ, որ առանց Արդարադատության խորհրդի համաձայնության՝ դատավորին ծերբակալելու դեպք նախատեսելով՝ բուլացնում ենք նրա պաշտպանվածությունը, քայլ, նախ՝ անմիջապես Հանրապետության նախագահին, Սահմանադրական դատարանի նախագահին, համապատասխան դատարանի նախագահին տեղեկացնելու պարտականությունը թույլ չի տալիս առանց բավարար հիմքների դատավորին ծերբակալել, և երկրորդ՝ այն հանգանանքը, որ դատավորը ծերբակալվում է միայն հանցագործության վայրում (կամ դրանից անմիջապես հետո), շատ կարևոր է, որովհետև հանցագործության կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո հանցագործության վայրում գտնվելն արդեն իսկ հիմնավոր կասկածների տեղիք է տալիս: Անշուշտ, այս նորմն ուղղված է քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի ապահովմանը՝ անկախ անձի պաշտոն զբաղեցնելու հանգամանքից:

Սահմանադրական բարեփոխումների շուրջ կրթերն այսօր մեր հանրապետությունում գնալով թեժանում են: Զափազանց շատ շահեր են բախվում այս դաշտում, և երբեմն դրանք ներդաշնակեցնելն ու համաձայնեցնելը բավականին բարդ է:

Հուսով ենք, որ փոփոխությունների որ տարբերակն էլ դրվի քննարկման, կրխի մեր պետության, հասարակության շահերից ու կապահովի նրանց աննախընթաց զարգացումը: Որպեսզի փոփոխությունները ծառայեն իրենց նպատակին, դրանք նախևառաջ պետք է բարեփոխումներ լինեն և ուղղված լինեն Սահմանադրությունը կատարյալ դարձնելուն, և ոչ թե պետական առանձին մարմինների ուժեղացմանը և մյուսների բուլացմանը, սոցիալական առանձին խմբերի դիրքերի ամրապնդմանը, քանի որ Սահմանադրությունը հանդիսանում է յուրաքանչյուր պետության հրավական համակարգի միջուկը: Այդ պատճառով մենք պետք է զգտենք, որ մեր Սահմանադրությունը դառնա ավելի ժողովրդավարական ու առաջարեն, որպեսզի մարդու իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, իսկապես դրվեն օրենքների հիմքում, կամխորոշեն դրանց բնույթը: Միայն այդպիսի սահմանադրությունը կարող է ապահովել կայունություն հասարակությունում և պետությունում պայմանավորելով դրանց գորգացումը:



Օգտագործված գրականության ցանկ

Նորմատիվ ակտեր և այլ փաստաթղթեր

- ՀՀ 1995 թ. Սահմանադրություն
- ՈԴ 1993 թ. Սահմանադրություն
- ՀՀ Սահմանադրական բարեփոխումների նախագիծ, Երևան, 1-ը փետրվարի, 2002

4. ՀՅ Սահմանադրական փոփոխությունների նախագիծ՝ ԱԱԿ Կուսակցություն
5. ՀՅ Սահմանադրական փոփոխությունների նախագիծ՝ իշխող քաղաքական կոալիցիա՝ ՀՀԿ, ՀՅԴ,
«Օրինաց Երկիր» կուսակցություններ
6. ՀՅ Սահմանադրական փոփոխությունների նախագիծ՝ «Ազգային ժողովրդավարների դաշինք»

Տեսական աղբյուրներ

1. Խաչատրյան Հ.Մ., ՀՅ առաջին Սահմանադրությունը, Երևան, 1997
2. Ս.Ա. Դիլբանյան, ՀՅ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Երևան, 2000
3. Նայաստանի Նամրապետության քրեական դատավարություն, Ընդիանուր մաս, Դասագիրք բուհերի համար; Գ.Ս. Ղազինյանի խմբագրությամբ, Երևան, 2000
4.  1939
5.  2,  1939
6.  2002
7.  2000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1991թ. նորանկախ Հայաստանի Հանրապետությունը հռչակեց պետական կառավարման նոր կարգ, ինչից էլ հետևում էր նոր, պրոգրեսիվ իրավական համակարգի անհրաժեշտությունը: Հրապարակի վրա էին ընդամենը Հայաստանի անկախության մասին հռչակագիրը և մի քանի օրենք, որոնք ըստ էության, այնքան էլ չէին հեռացել խորհրդային իրավական համակարգից, իսկ Հայկական ԽՍՀ Սահմանադրությունը գրեթե չէր գործում: Այսպիսով՝ անժխտելի է, որ 1995թ. Սահմանադրության ընդունումը պատճական անհրաժեշտություն էր: Սահմանադրությունը հիմնարար նշանակություն ունեցավ հանրապետության իրավական համակարգի ստեղծման համար: Այն ամփոփեց նախորդ տարիներին հանրապետությունում ծավալված պետական շինարարության փորձը և ամրագրեց պետական իշխանության կազմակերպման և ժողովրդակիշխանության հիմնական սկզբունքները:

Հետագա տարիներին Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ պետություն, միջազգային իրավունքում դեռևս «սկսնակ» սուբյեկտ, անցավ (և շարունակում է անցնել) զարգացման փուլեր: Այդ էտապները ներառում են և սոցիալական, և տնտեսական, և բնականաբար, իրավական բնագավառները: Սոցիալական իրականությունը բացահայտեց իրավական համակարգի և առաջին հերթին՝ Սահմանադրության թերություններն ու բացքունքները: Հասունացավ նոր՝ առավել կատարյալ Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը: Առաջին փորձը կատարվեց 2003թ. մայիսին: Ինչպես ցույց տվեցին հանրաքվեի արդյունքները, Սահմանադրության առաջարկվող նախագիծը, իր բարեփոխումներով հանդերձ, չէր արտահայտում պետության և հասարակության շահերը գլոբալ առումով, և ի վերջո, չէր իրագործի իր հիմնական նպատակը, այն է՝ իրավական հիմքով տալ հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտների հնարավորինս ընդունելի և կիրառելի կողմնորոշչները:

Համաժողովրդական հանրաքվեի արդյունքում առաջարկվող նախագիծ մերժումից հետո քաղաքական ուժերը ծեռնամուխ եղան նոր նախագծերի կազմնանը: Այս առումով ողջունելի է և հուսադրող այն փաստը, որ աշխատանքում ներգրավվել է ողջ քաղաքական դաշտը, և արդյունքում առաջարկվել են նախագծեր թե՛ իշխող քաղաքական կողայիշիայի, թե՛ քաղաքական ընդունություն ներկայացնող պատգամավորի և թե՛ իրեն միջանկյալ քաղաքական ուժ հռչակած կուսակցության կողմից: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրելու, որ քաղաքական ուժերի համագործակցության արդյունքում հանրաքվեի կառաջարկվի մեկ ամփոփ Սահմանադրություն, որը կարտահայտի հասարակության բոլոր խավերի և պետության՝ որպես քազմաթիվ ազգային և միջազգային խնդիրների ու պատասխանատվության կրողի շահերը:

Իդեալական Սահմանադրությունը պետք է ամրագրի իր՝ իրավական, քաղաքական և գաղափարական գործառնությունների իրականացման սկզբունքներն ու երաշխիքները: Բնականաբար, առաջարկվող նախագծերում այս հարցերը տարաբնույթ լուծումներ են ստանում: Երբեմն հեղինակները տվյալ հարցի նկատմամբ դրսնորում են ճիշտ նույն մոտեցումը, երբեմն նրանց տեսակետները ճիշտ հակառակն են: Որպես ընդհանուր սկզբունք, վերլուծվելիք նախագծերի վերաբերյալ պետք է նշել, որ ընդիանուր առմամբ ՀՀԿ, ՀՅԴ, «Օրինաց երկիր» կուսակցությունների և ՄԱԿ կուսակցության առաջարկած նախագծերը միմյանց հարում են և դրանց միջև տարածայնություններ հազվադեպ են ծագում: Իսկ պրակտիկայում առաջարկած նախագիծը հաճախ միանգամայն տարբեր լուծումներ է առաջարկում: Նախագծերի առավել ամբողջական վերլուծությունը կիրականացվի գեկույցի հետագա տեքստում՝ ըստ գործող Սահմանադրության և նախագծերի գլուխների ու հոդվածների:

Զեկույցը տեխնիկապես առավել ոյուրընթեռնելի դարձնելու համար կօգտագործվի հետևյալ պայմանական համարակալումը.

- 1) իշխող քաղաքական կողայիշիայի նախագիծ՝ «Նախագիծ 1»,
- 2) ՄԱԿ կուսակցության նախագիծ՝ «Նախագիծ 2»,
- 3) պրակտիկայում առաջարկած նախագիծ՝ «Նախագիծ 3»:

1. ՍԱՐՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՔՆԵՐԸ

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ ընդունված է հետևյալ բնորոշումը. սահմանադրական կարգը մարդու և քաղաքացու իրավունքների պահպանումն ու պետության կողմից Սահմանադրությանը համապատասխան գործելն է: Փորձենք վերլուծել, թե առաջարկվող նախագծերը որքանով են բավարարում տեսությանը ներկայացվող պահանջը:

«Նախագիծ 3»-ը միակն է, որն առաջարկում է լրացրումներ 1 և 2 հոդվածներին: Ընդ որում հոդված 1.1-ում ուշադրության է արժանի «ՀՀ... ինքն է որոշում ...» միտքը, ինչը մեկ անգամ ևս ընդգծում է

սուվերենության սկզբունքը: Հոդված 2.1-ում ողջունելի է համաժողովրդական հանրաքվեներին վերապահված խնդիրների ամբողջությունը: Բոլոր նախագծերում միանշանակորեն ընդունվում, ամրագրում է մարդու իիմնական իրավունքներն ու ազատությունները որպես անօտարելի և բարձրագույն արժեք ճանաչելու կարևորագույն սկզբունքը: Հոդված 5-ի վերաբերյալ, թերևս, առավել ընդունելի է «Նախագիծ 1»-ի տարրերակը, որը լակոնիկ ձևով հստակեցնում է գործող Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքը: Եթագա հոդվածները երեք նախագծում ել ընդհանուր առնամբ գաղափարային հակասություններ չունեն և տարրեր ձևակերպումներով ընդգծում են ժողովրդավարական հանրածանաչ սկզբունքները: Այդ իսկ պատճառով փորձենք անրադառնալ նորանուծություններին: Մասնավորապես՝ «Նախագիծ 3»-ի հոդված 7-ը մանրամասնում է իշխող քաղաքական կուսակցությունների կարգավիճակը և անուղղակիրեն մատնանշում դրանց՝ քաղաքական պատասխանատվության կանխավարկածը: Միևնույն ժամանակ նույն հոդվածը թույլ է տալիս աններելի բացքողում՝ անտեսելով կուսակցությունների ֆինանսական գործունեության հրապարակայնության սկզբունքը:

Առաջարկվող նախագծերում առաջընթաց քայլ է ՀՀ առաքելական եկեղեցու և գինված ուժերի իրավական կարգավիճակի ամրագրումը: Ոչ պակաս կարևոր է շուկայում մենաշնորհի վիճակի չարաշահման, անբարեխիղ մրցակցության սահմանադրութեն ամրագրումը: Միևնույն ժամանակ «Նախագիծ 2»-ը սահմանում է, որ «Պետության ու հասարակության շահերից ելնելով՝ մրցակցության սահմանափակումը մենաշնորհի հնարավոր տեսակներն ու դրանց բոլյատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով»: Իսկ «Նախագիծ 3»-ը արտահայտում է հետևյալ միտքը: «Սեփականության իրավունքի իրականացումը... չպետք է գոլի պետությանը օրենքով ամրագրված իր խնդիրների և ծրագրերի իրականացման հնարավորությունից»: Թերևս վերջին դրույթը կարող է հիմք ծառայել ոչ վաղ անցյալի վարչականացման տնտեսության հատկանիշների ի հայտ գալու համար, բայց ակնհայտ է, որ հեղինակն այն նախատեսել է՝ հաշվի առնելով սոցիալական իրավանությունը:

Նախագծերի ակնհայտ առավելություններից է «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում տեղական ինքնակառավարման սկզբունքն ընդգրկելը: Այս առումով ամհամականալի է «Նախագիծ 3»-ում մարգերի փոխարեն շրջանները որպես վարչատարածքային միավորներ անրագրելը: Այս գլխում է ընդգրկվել նաև և որոշակիրեն մանրանասնվել ՀՀ քաղաքացիության հարցը: Սակայն, զարմանալիորեն, կրկին դուրս է մնացել երկքաղաքացիության ծեծված հարցը: Միայն «Նախագիծ 3»-ը 11.3 հոդվածով սահմանում է. «ՀՀ-ում չքննակվող ազգությամբ հայերը ՀՀ-ում կարող են ստանալ երկքաղաքացիության կարգավիճակը»: Իսկ ՀՀ-ում բնակվող ՀՀ քաղաքացիները... Այս առումով չեղ խանգարի հիշեցնել օրենսդրին, որ 2003թ. առաջարկվող նախագծի մերժման պատճառներց մեկն էլ երկքաղաքացիության հարցի անտեսումն էր:

2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գործող Սահմանադրությունը նախատեսում է մարդու և քաղաքացու բավական մեծաթիվ իրավունքներ, ազատություններ ու պարտականություններ, որոնք ունեն տարրեր բովանդակություն: Այդ բոլոր իրավունքները և ազատությունները իրենց համակցությամբ կոչված են ապահովելու մարդու ազատությունը և անվտանգությունը, ամենից առաջ, իշխանությունների կամայականություններից: Փորձենք վերլուծել, թե նախագծերը, գործող Սահմանադրության համեմատությամբ, ինչպիսի լրացուցիչ և առավել կատարյալ սկզբունքներ ու երաշխիքներ են առաջարկում այս բնագավառում:

Նախ և առաջ պետք է նշել, որ հույժ գարմանալի է «Նախագիծ 3»-ում տվյալ գլուխը ընդգրկելը: Փաստորեն՝ հեղինակը համարում է, որ այս ոլորտում գործող Սահմանադրությունը կատարյալ է և ոչ մի փոփոխության կարիք չի գործ: Մինչդեռ սոցիալական իրավանությունը հակառակն է հաստատում, ինչն էլ դրսևորվում է մյուս երկու նախագծում առաջարկվող փոփոխություններում: Ի սկզբանե «Նախագիծ 1»-ը և «Նախագիծ 2»-ը սոլիդար են մարդու արժանապատվությունը՝ որպես նրա ազատությունների ու իրավունքների անքակտելի հիմք ճանաչելու, ինչպես նաև դրա հարգվելը և պաշտպանվելը պետության կողմից ամրագրելու հարցում: Եթագա հոդվածներում ևս նախագծերը հաճախ դրսնորում են ընդհանուր մոտեցումներ: Որպես ակնհայտ առավելություն պետք է նշել «Նախագիծ 2»-ի հոդված 14-ը. «ՀՀ-ում մահապատիժն արգելված է»:

Շատ կարևոր է, որ նահախագծերը նախատեսում և հստակեցնում են այնպիսի սկզբունքներ, որոնք անմիջականորեն կապվում են քրեականական և, հատկապես, քրեադատավարական հարաբերությունների հետ: Վերջինս ուղակիրուեն առնչվում է անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ: Այս պատճառով չափազանց կարևոր է Սահմանադրությունում ամրագրել այդ սահմանափակման հարցերը (Նախագծերի 15-23 հոդվածները): Այս շարքում պետք է առանձնացնել մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի և նրան դիմելու իրավունքի ամրագրումը: Սակայն այս շարքում գոյություն ունի հետևյալ բացքողումը. նախագծերի

հոդված 22-ը արդարացիորեն ամրագրում է. «Յուրաքանչյուր որ ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշմամբ»: Սակայն ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 284-ի 8-րդ մասը նախատեսում է դեպքեր, երբ դատարանի որոշումը պարտադիր չէ: Այսպիսով՝ ստուգում է հակասություն: Քանի որ քրեական դատավարության օրենսգրքի դրույթն անհիմն չէ, ապա հարկավոր է այն ամրագրել նաև Սահմանադրությունում:

Դաշորդ նկատված թերությունը վերաբերվում է հոդի սեփականության իրավունքին: Ենթադրվում էր, որ նախագծերը, ի տարբերություն գործող Սահմանադրության, հոդի սեփականության իրավունքի արգելվ պետք է սահմանեն ոչ միայն այլ պետության քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, այլև օտարերկրյա իրավաբանական անձանց համար:

Դետագա փոփոխությունները կարելի են գնահատել միայն դրականորեն:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՅՔ

Գործող Սահմանադրության գլուխ 3-ի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ ՀՀ Նախագահը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում պետական իշխանության նարմինների համակարգում և անհնջականորեն չի մտնում այդ իշխանության ճյուղերից և ոչ մեկի մեջ: Իսկ Նախագահի և օրենսդիր ու գործադիր իշխանությունների կարգավիճակի համեմատական վերլուծությունը բույլ է տալիս ՀՀ-ը սահմանել դրան խառը (կիսանախագահական կառավարման տիպի հանրապետություն): Փորձենք պարզել, թե առաջարկվող նախագծերը որքանով են պահպանել կամ փոփոխել վերոնշյալ սկզբունքները:

Երեք նախագիծն էլ ամրագրում են Նախագահի առանձնահատուկ կարգավիճակը՝ սահմանելով, որ ՀՀ Նախագահը պետության գլուխն է: Տարածայնությունները վերաբերում են լիազորություններին: Սահմանադրության 55 հոդվածի 2-րդ կետի առումով «Նախագիծ 2»-ի հոդված 59-ը առաջարկում է Աժ-ի կողմից վերստին ընդունած օրենքը ստորագրել կամ չստորագրել Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա: Դա փաստորեն, բացառում է օրենքի չստորագրումը քաղաքական շարժարիներով:

«Նախագիծ 3»-ը, Սահմանադրության 74.1 հոդվածով նախատեսվածի փոխարեն առաջարկում է այլ հիմանավորում նախագահի կողմից Աժ-ի լիազորությունները կրատելու համար: Այդ նորմը կարող է հանդիսանալ երաշխիք Աժ-ի արդյունավետ գործունեության համար:

«Նախագիծ 3»-ը գրկում է Նախագահին կառավարություն կազմավորելու հնարավորությունից՝ այդիպիսով մերժելով կառավարման խառը տիպը: Թերևս մեր իրականության մեջ դա արդարացված չէ՝ հաշվի առնելով, որ միանշանակորեն չի կարող ընդունվել ոչ գործադիր իշխանություն նարմնավորող նախագահը, ոչ էլ այն հանգամանքը, որ կառավարությունը պատասխանատու լինի միայն խորհրդարանին, իսկ Նախագահական ինստիտուտը ունենալով ձևական բնույթ:

«Նախագծեր 1-ը և 2-ը» ընդհակառակը, ընդարձակում են Նախագահի լիազորությունները: Մասնավորապես, եթե Սահմանադրության հոդված 55.8-ի համաձայն, Նախագահը գլխավոր դատախազին նշանակում է վարչապետի առաջարկությամբ, ապա, ըստ նախագծերի, ոչ միայն գլխավոր դատախազին, այլև նրա օգնականներին նշանակում և ազատում է միայնակ:

Այս և հետագա լիազորությունների առումով պետք է հաշվի առնել, որ 2003թ. հանրաքեի ներկայացված նախագծի մերժման գլխավոր պատճառը Նախագահի լիազորությունների ընդարձակումն էր: Այստեղ խախտվում է նաև իշխանությունների՝ հակակշռների և զսփինների սկզբունքը: ճիշտ է, Նախագահը չի պատկանում իշխանության որևէ ճյուղին, սակայն պետք է համագործակցի դրանց հետ հավասարության, այլ ոչ թե գերակայության սկզբունքով: Թերևս անհրաժեշտ է ամրագրել, որ Նախագահը, ելնելով հարցի բնույթից, խորհրդակցի կամ օրենսդրի, կամ գործադիր իշխանության հետ: Օրինակ՝ նշանակի դատախազ՝ վարչապետի առաջարկությամբ և դատավորներ՝ Աժ-ի համապատասխան հանձնաժողովի առաջարկությամբ:

4. ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր երկրում պառլամենտը հանդես է գալիս որպես տվյալ ազգի, ժողովրդի քաղաքական ավանդույթների, սովորույթների, քաղաքական կուլտուրայի մակարդակի յուրօրինակ մարմնավորողը: Որպես Ազգային ժողովի սահմանադրավական կարգավիճակի ամրագրում առավել կատարյալ է «Նախագիծ 2»-ի տարբերակի (հոդված 85), որտեղ ընդգծվում է Աժ-ի՝ պետական իշխանության բարձրագույն ներկայացուցական մարմին լինելու հանգամանքը:

Նախագծերն առաջարկում են Աժ պատգամավորների թվաքանակի տարրերակները: Այս առումով կարևոր է, թերևս, ոչ այնքան ընդհանուր թվաքանակը, այլ համամասնական և մեծամասնական կարգով ընտրված պատգամավորների թվաքանակի հարաբերակցությունը: Ելելով քաղաքական պատասխանատվության երաշխիքներից ՀՀ-ում առավել ընդունելի է «Նախագիծ 3»-ը, որը խորհրդարանականներին առաջադրում է պատասխանատվության խիստ պահանջներ:

Կարևոր է, որ նախագծերը նախատեսում են ավելացնել մշտական հանձնաժողովների թիվը, իսկ «Նախագիծ 2»-ը սահմանում է դրանց՝ խորհրդարանական վերահսկողության գործառույթը (հոդված 97):

Ինչ վերաբերում է Նախագահի կողմից Աժ-ի լիազորությունների ժամկետը կրծատելու հիմքերին, ապա այստեղ անընդունելի է «Նախագիծ 2»-ի հոդված 99-ի «Դ» ենթակետը, այն է՝ եթե Աժ հավանություն չի տալիս Վարչապետին պաշտոնանկ անելու մասին Յանրապետության Նախագահի առաջարկին: Այս դրույթը ուժնահարում է ժողովրդավարության սկզբունքը:

Առաջընթաց քայլ է օրենսդրական նախաձեռնության իրավունք վերապահել Յանրապետության Նախագահին («Նախագիծ 1, 2»):

Աժ-ի լիազորությունները լրացվել են ժամանակի պահանջներից ելելով: Մասմավորապես՝ դա վերաբերում է մարդու իրավունքների պաշտպան նշանակելուն:

«Նախագիծ 1»-ը ամրագրել է ՀՀ Կենտրոնական բանկի վերահսկիչ պալատի կարգավիճակը: Դա, իհարկե, ողջունելի է, սակայն, որքանո՞վ է արդյոք նպատակահարմար այդ ինստիտուտներն ամրագրել «Օրենսդիր իշխանություն» վերտառությամբ գլուխ ներքո: «Նախագիծ 1»-ը հոդված 83.3-ով ամրագրում է որոշ դրույթներ, որոնք պարունակվում են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում: Փաստորեն, այդ դրույթներին տրվում է առանձնահատուկ կարևորություն:

«Նախագիծ 2»-ի առավելություններից է Աժ-ի կողմից կառավարությանը անվտահույթուն հայտնելու պայմանների հստակեցումը:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրափական կարգավիճակով կառավարությունը կարևոր տեղ է գրավում ինչպես պետական իշխանության մարմինների, այնպես էլ գործադիր իշխանության մարմինների համակարգում: Առավել ևս, որ կառավարությունը միաժամանակ բարձրագույն քաղաքական մարմին է, որը գլխավորում է հանրապետության գործադիր իշխանության միասնական համակարգը և իրականացնում համագօգային, համապետական կառավարում: Նախագծերը, ի տարրերություն Սահմանադրության, առավել հստակեցնում են գործադիր իշխանությունը մարմնավորող կառավարության կարգավիճակը: «Նախագիծ 2»-ը կառավարության կազմում առաջարկում է նորույթ՝ փոխարչապետի ինստիտուտուր: Սակայն այդ նորամուծությունը դժվար թե արդարացված լինի՝ առաջին հերթին պայմանավորված ՀՀ ունիտար կառուցվածքով և փոքր տարածքով: «Նախագիծ 2»-ն առաջարկում է նաև հետևյալ նորամուծությունը: Կառավարությունը կազմավորվում է Աժ-ի կողմից, իսկ դրա չիրականացման դեպքում՝ Յանրապետության Նախագահի կողմից: Նման սահմանադրական դրույթը կարող է քաղաքական գծնաժամի տեղիք տալ, նամանավանդ, եթե դրան գումարվում է Աժ-ի կողմից կառավարության գործունեության հայեցակարգը սոսկ որպես ի գիտություն ընդունելը («Նախագիծ 2» հոդված 115): Այսպիսով, առավել նպատակահարմար է ընդունել արտասահմանյան երկրների հետևյալ փորձը. Յանրապետության Նախագահն առաջարկում է վարչապետ, իսկ խորհրդարանը տալիս է կան չի տալիս համաձայնություն առաջարկված թեկնածության վերաբերյալ: Հետագա կարգերը կարգավորվում են Սահմանադրությամբ: Նման մոտեցումը երաշխավորում է նաև կառավարության պատասխանատվությունը թե՝ Նախագահի, թե՝ խորհրդարանի առջև:

«Նախագիծ 2»-ը ճիշտ մոտեցում է առաջարկում մարգերում տարածքային կառավարման վերաբերյալ (հոդված 119): Իսկ «Նախագիծ 1»-ը լրացնում է այդ սկզբունքը հոդված 94-ի հետևյալ դրույթով. Երևանի քաղաքապետը օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ արվել նաև Երևանի ավագանու կողմից:

Ինչ վերաբերվում է կառավարության լիազորություններին, ապա առավել ընդունելի է «Նախագիծ 1»-ի առաջարկած տարրերակը:

6. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դատական իշխանությունը կոչված է ապահովելու քաղաքացիների իրավունքների ու ազատությունների համակողմանի պաշտպանությունը, ինչպես նաև լուծելու օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների միջև ծագող հակասությունները: Դատական իշխանությունը նպատակ է սահմանադրական կարգի, ժողովրդավարության, օրինականության և իրավակարգի ամրապնդմանը, որով և

ընդգծվում է վերջինիս առաջատար տեղը իշխանության ճյուղերի համակարգում: Փորձենք պարզել, թե ինչ են առաջարկում նախագծերը դատական իշխանության խնդիրների լիարժեք իրականացման համար: Փաստորեն, «Նախագիծ 3»-ը գործող Սահմանադրությամբ ամրագրված դատական իշխանության կարգավիճակը համարում է անթերի, քանի որ չի առաջարկում որևէ փոփոխություն կամ լրացում այդ բնագավառում: «Նախագիծ 2»-ը առաջարկում է դատական իշխանության առավել լիարժեք բնորոշում, մասնավորապես՝ դատական իշխանությունը պաշտպանում է մարդկանց, իրավաբանական անձանց և պետության իրավունքներն ու շահերը (հոդված 122): Միևնույն նախագիծը նաև ընգծում է դատավարության նպատակը, այն է՝ ծննդրության բացահայտումը (հոդված 125):

Արդարադատության խորհուրդը հանդես է գալիս որպես դատական մարմինների անկախության երաշխիքի ապահովման միջոց: Այս առօւմով, թերևս իդեալական կլիներ «Նախագիծ 1»-ի և «Նախագիծ 2»-ի կողմից առաջարկվում տարբերակների «ընդիհանուր հայտարարք», այն է՝ 6 դատավոր ընտրվեին ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից, մեկական փաստաբան և իրավաբան գիտնական նշանակվեին ՀՀ Նախագահի և ԱԺ-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարը ու գլխավոր դատախազը ընդգրկվեին ի պաշտոնե, իսկ խորհրդի նախագահի ընտրվեր անդամների կողմից:

Կարևոր է, որ նախագծերը կարգավորում են դատավորներին քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկվելու հետ կապված հարցերը:

Պետք է որպես թերություն արձագանքել «Նախագիծ 2»-ի կողմից դատավորի և Սահմանադրական դատարանի անդամի ապարադաբականացված լինելու դրույթի բացթողումը: Նման նորմի բացակայության դեպքում դատական իշխանության վրա կարող են կիրառվել քաղաքական բնույթի ծննդումները: Մինչդեռ արդարադատությունը պետք է իրականացվի՝ անկախ դրա արդյունքում ծագող քաղաքական կամ այլ բնույթի հետևանքներից:

Կարևոր է Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության իրականացման ամրագրումը: Սահմանադրական դատարանի լիազորությունները բավական լիարժեք են ներկայացված «Նախագիծ 2»-ի հոդված 131-ում:

Գործող Սահմանադրության ակնհայտ թերություններից է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների սահմանափակ լինելը: Նախագծերն ընդարձակել են դրանց թիվը, ինչպես նաև հստակեցրել դիմելու հիմքերը: Այս առօւմով պետք է կարևոր լուրաքանչյուր մարդու, մարդու իրավունքների պաշտպանի, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի, ինչպես նաև դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավունքը: Մասնավորապես՝ դատարաններն անհրաժեշտության դեպքում ստիպված չեն լինի անցնել «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ընթացակարգով: «Նախագիծ 1»-ը նաև սահմանում է գործերի քնննան կարգ՝ կախված դիմող սուբյեկտից (հոդված 107):

«Նախագիծ 2»-ը տրամաբանորեն դատախազության, վերահսկիչ պալատի և կենտրոնական բանկի վերաբերյալ դրույթներն ամրագրում է առանձին գլուխներով՝ չընդգրկելով դրանք իշխանության որևէ թերում:

Դատախազության առօւմով հստակեցվել են դրա լիազորությունները, ինչը շատ կարևոր է Սահմանադրության և քրեական դատավարության օրենսգրքի միջև հակասություններից խուսափելու համար:

7. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տեղական ինքնակառավարումը ժողովրդավարական ցամկացած հասարակարգի հիմքերից մեկն է: Այն բնակչության ինքնուրույն և պատասխանատու գործունեության ոլորտ է, որը նպատակառությամբ է անմիջականորեն կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով տեղական նշանակության հարցերի լուծմանը՝ ելնելով բնակչության շահերից, նրա պատմական և այլ տեղական ավանդույթներից: Փորձենք պարզել, թե նախագծերն ինչքանով են լուծում վերոհիշյալ խնդիրները: Նախ, ի տարբերություն գործող Սահմանադրության՝ երեք նախագծերն են ամրագրում են տեղական ինքնակառավարման հասկացությունը՝ ընդգրկելով, որ այն ապահովիչը ու երաշխավորվում է պետության կողմից: «Նախագիծ 3»-ի առանձնահատկությունն այն է, որ բացառվում է տարածքային կառավարումը: Սակայն փորձը ցույց է տալիս, որ ՀՀ մարզերում հաջողությամբ իրականացվում է տարածքային կառավարում, ինչը չի խանգարում տեղական ինքնակառավարման իրականացմանը:

Տեղական ինքնակառավարման լիարժեք իրականացման համար համայնքն ամրագրված է որպես իրավաբանական անձ, որն ունի սեփականության իրավունք և այլ գույքային իրավունքներ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը ամրագրում էր համայնքի պարտադիր պատվիրակված լիազորությունները: Նախագծերը դրանք ամրագրում են սահմանադրական մակարդակով: Ընդ որում, ամրագրվում է նաև պատվիրակված լիազորությունների՝ պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորումը: Շատ կարևոր է, որ նախագծերն ամրագրում են համայնքի՝ դրա տարածքում գտնվող

հոդի նկատմամբ սեփականության իրավունքը, բացառությամբ պետական կարիքների համար անհրաժեշտ և ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հոդերի:

Հաջորդ կարևոր սկզբունքը համայնքների կողմից իրենց բյուջեն ինքնուրույնաբար ձևավորելն է:

Կարևոր է նաև, որ նախագծերը նույկերպ են սահմանում համայնքի ավագանու լիազորությունները:

Ի տարբերություն գործող Սահմանադրության՝ նախագծերը ամրագրում են, որ Երևան քաղաքը համայնք է: Այսինքն՝ մայրաքաղաքում իրականացվում է միայն տեղական ինքնակառավարում: Նման մոտեցումը, թերևս, արդարացված է, հաշվի առնելով, որ Երևանի տարածքը փոքր է ցանկացած մարզի տարածքից: Բացի այդ, Երևանում են գտնվում պետական կառավարման կենտրոնական մարմինները: Այստեղից էլ, փաստորեն, բխում է «Նախագիծ 1»-ի հոդված 94-ի այն դրույթը, որ Երևանի քաղաքապետը օրենքով նախատեսված դեպքերում կարող է պաշտոնանկ արվել նաև Երևանի ավագանու կողմից:

Տեղական ինքնակառավարման արդյունավետության կարևոր երաշխիք են առաջարկում «Նախագիծ 1»-ը և «Նախագիծ 2»-ը. համայնքի ընդիմանութ գործունեության օրիանականությունն ապահովելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, իրականացվում է իրավական հսկողություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ-ի օրենքի այլ դրույթներ ևս, օրինակ, կառավարության կողմից համայնքի դեկավարին պաշտոնանկ անելու դեպքում նարգավետի լիազորությունը՝ մինչև համայնքի նորմնութիւն դեկավարի՝ իր պարտականությունների ստանդումը, ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով նշանակել համայնքի դեկավարի պաշտոնակատար, ամրագրված են նախագծերում: Նորույթ է նաև «Նախագիծ 1»-ի կողմից առաջարկվող՝ համայնքների միավորնան և բաժանման հնարավորությունը, որը պետք է կանոնակարգվի օրենքով:

8. ՍԱՐՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԿԱՆՐԱՔՎԵՆ

«Նախագիծ 1»-ն առաջարկում է փոփոխություններ և լրացումներ գործող Սահմանադրության 8-րդ գլխի համար: Դրանց առումով հարց է ծագում սահմանադրական փոփոխությունների՝ ոչ հանրաքվեի տարբերակով ընդունում նախատեսող դրույթի վերաբերյալ: Թերևս, ինչպես Սահմանադրության, այնպես էլ դրանում փոփոխությունների ընդունումը պետք է իրականացվի միայն համաժողովրդական հանրաքվեի միջոցով:

9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՂՐՈՒՅԹՆԵՐ

Թեև նախագծերից ոչ մեկը չի առաջադրում անցումային դրույթներ (հեղինակները դրան ձեռնամուխ կլինեն բարեփոխումների փաթեթը քննարկելուց հետո), սակայն Սահմանադրության նախագծի վերջնական տարբերակում պետք է նշվեն հետևյալ պարտադիր դրույթները:

- Որոշակի ժամանակահատվածում, որը կամրագրվի նախագծի վերջնական տարբերակում, ազգային ժողովը պետք է ուսումնասիրի և հանապատասխանեցնի գործող օրենքները Սահմանադրության փոփոխություններին.
- Որոշակի ժամանակահատվածում, որը կամրագրվի նախագծի վերջնական տարբերակում, Ազգային ժողովը պետք է ընդունի Սահմանադրության նախատեսված բոլոր օրենքները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Նախագծերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանք հիմնականում հասնում են իրենց իսկ առաջարած նպատակներին, այն է հիմնական օրենքը ներդաշնակեցնել արդի աշխարհում ընթացող ժողովրդավարական գործընթացներին, արձագանքել համամարդկային ձեռքբերումներին, դրանց համընթաց արտացոլել հայ ազգային՝ պետական, պատմական և ժամանակակից զարգացումները, ամրագրել պետականաշխնության լավագույն կառուցակարգերը: Ցավոք, գեկույցի ծավալային սահմանափակումը թույլ չի տալիս ինչպես հարկն է վերլուծել առաջարկվող նախագծերը, մեջբերել միջազգային փորձը, արտահայտել սեփական կարծիքը:

«Նախագիծ 1»-ի հիմնավորումնում հակիրճ և ստույգ սահմանված են այն հիմնական ուղղությունները, որտեղ աշխատել են փոփոխություններ կատարել հեղինակները: Իհարկե, բարելավիւմները ակնհայտ են, սակայն դեռևս ոչ մի ժամանակահատվածում և ոչ մի վայրում չի ստեղծվել բացարձակապես կատարյալ իրավական փաստաթուղթ: Այստեղ արժե հիշել այն հանրածանաչ սկզբունքը, համաձայն որի՝ նպատակին հասնելու երաշխիքը ոչ այնքան սահմանված դրույթներն են, որքան դրանց անշեղ կատարումը: Սա վերաբերում է ողջ իրավական համակարգին և, իհարկե, առաջին

հերթին, Սահմանադրությանը: Մասնավորապես, Հայաստանի Հնարապետության՝ որպես իրավական պետության գերխնդիրը պետք է դառնա մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ոչ թե պարզապես դեկարատիվ ամրագրումը, այլ իրական ապահովումը: Սրանից անմիջականորեն բխում է ընտրական իրավահարաբերությունների գերխնդիրը. չէ՞ որ հենց Սահմանադրության հիման վրա ընդունված ընտրական օրենդրությունը և վերջինիս խիստ համապատասխան ընտրական գործընթացը կարող են ապացուցել, որ իսկապես գոյություն ունեն իրավունքի գերակայություն և օրենքի հշխանություն:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ն որդեգրել է կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականություն, մեծ նշանակություն են ձեռք բերում իշխանությունների տարանջատման և փոխադարձ հակակշռման մեխանիզմները:

Սահմանադրության վերջնական նաժագիծը կազմելիս հեղինակները պետք է սերտ համագործակցեն Սահմանադրական դատարանի հետ: Բանն այն է, որ գոյություն ունեն ամրագրված, սակայն Սահմանադրության հետ հակասության պատճառով դեռևս չվավերացված միջազգային պայմանագրեր: Դրանց թվին է դասվում, օրինակ, Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը:

Նախագծերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, թերևս, առավել հաջողված գլուխները «Սարդու և քաղաքացու իրավունքներն և ազատությունները» և «Տեղական ինքնակառավարումն» էին: Բացի այդ, այս ոլորտներուն հեղինակները հաճախ միակարծիք էին:

Պետք է նշել, որ երբեմն հատկապես «Նախագիծ 1»-ը առաջարկում էր նույն դրույթները, որոնք գոյություն ունեին 2003թ. հանրաքվեի ներկայացված նախագծում: Երբեմն դա արդարացված էր, երբեմն՝ ոչ: Սակայն պետք է ջանալ, որ նախագծի վերջնական տարբերակը չարժանանա նախորդի ճակատագրին: Վերջինիս ձախողումը, իհարկե, նախ և առաջ պայմանավորված էր դրա անկատարությամբ, բայց չպետք է մոռանալ նաև ոչ պատշաճ քարոզչության մասին: Իսկ պատշաճ քարոզչություն ասելով՝ պետք է հասկանալ լայնածավալ բացատրական աշխատանքներ հասարակության լայն խավերի հետ և ինֆորմացիայի տարածում:

Հուսանք, որ նոր Սահմանադրության շնորհիվ, ինչպես նշում են «Նախագիծ 1»-ի հեղինակները, մեր երկրում լուրջ առաջընթաց կարձանագրվի հանաշխարհային ընտանիքի լիիրավ անդամ լինելու, ժողովրդավար հասարակարգ կառուցելու, հայ ազգային պատմական և նշանակությային արժեքներ կրելու և պահպանելու պետության պատրաստականության ուղղությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. Խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003
2. 1995թ. ՀՀ Սահմանադրություն
3. Իշխող քաղաքական կուլիցիայի սահմանադրական փոփոխությունների նախագիծ
4. Միավորված աշխատանքային կուսակցության սահմանադրական փոփոխությունների նախագիծ
5. «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության սահմանադրական փոփոխությունների նախագիծ

ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական հարավունակություններն իրենց զարգացման ներկայիս դիալեկտում պահանջում են հեռահար սոցիալ-քաղաքարական ուղենիշների մշակում՝ առավել հստակ, ճկուն և գործուն իրավական կառուցակարգերով։ Համապարփակ այս գործընթացներն էլ, շոշափելով հասարակական տարբեր խավերի շահերը և գիտականորեն հիմնավորվելով, իրենց պողիտիվ և վերջնական արտացոլումը պետք է ստանան օրենսդրության (հրավունքի) համակարգում։ Ընդամենը՝ յուրաքանչյուր օրենսդրական կառույցի, հայեցակարգի իրավական ելակետն ու չափանիշը պետք է լինի հանրային շահը, իսկ յուրաքանչյուր բարեփոխիչ-իրավական ընթացակարգ որպես մոլի ուժ ու ազդակ պետք է ունենա սոցիալական, տնտեսական, իրավական ոլորտներում նորմատիվ փոփոխությունների անհրաժեշտությունը։ Սոցիալական պատվերը՝ որպես ազդարար և խթան։

Հետխորհրդային հայ իրավական մտքի տենդագին որոնումները նորովի բացահայտեցին համաշխարհային իրավական մշակույթի գանձարանը մարդսիստական գաղափարախոսությունից նորազատ ազգային ոգու հայելում։ Սոցիալ-քաղաքական բուռն իրադարձությունների խառնարանում ծնունդ առաջ հայ և արտասահմանյան իրավական-քաղաքական մտքի աննախադեպ սինթեզը՝ 1995թ. ՀՀ Սահմանադրությունը, պիտի դեռ ազգային-պետական շինարարության հիմնաքարերը և հասարակությունը դուրս բերեր զարգացման համաշխարհային մայրուղի։ Իրավաբանական-գաղափարական նորմատիվ ուղեցույցի կիրառման տասը տարիների ընթացքում մի կողմից՝ կարևորվեց Սահմանադրության՝ որպես ՀՀ օրենսդրության առանցքի և միջուկի դերը՝ աննախնիքաց ծավալ և որակ հաղորդելով իրավաստեղծնանը, մյուս կողմից՝ Սահմանադրությունը հասարակության կողմից ընկալվեց որպես իրավական մշակույթի նվաճում, հումանիտար արժեք։ հասարակական և պետական պրակտիկան վեր հանեցին սոցիալ-քաղաքական հոդմերի հանդեպ Սահմանադրության խոցելի կողմերը։

Որպես միջազգային տարաբնույթ և բազմաբովանուակ գործընթացների բաղկացուցիչ՝ ՀՀ ներպետական կյանքն էլ, բնականաբար, պետք է արտացոլի սահմանադրական-հանրային (մարդու իրավունքների պաշտպանություն և դրա ապահովման երաշխիքների սահմանում, իրենց ծևով և ընդգրկումով աննախադեպ վերպետական կազմավորումների ստեղծում), տնտեսական-առևտորային (ներպետական կապիտալի միջազգայնացում, տնտեսական ազատ գոտիների և անդրազգային տնտեսական կազմակերպությունների ստեղծում), քրեական պայքար ահարեկչության, կոռուպցիայի դեմ), մշակութային-գաղափարական (ազգային մշակույթների փոխներթափականցում), էկոլոգիական (շրջակա միջավայրի պահպանման հիմնախնդիրներ) և համաշխարհային զարգացման այլ միտումները։ Բացի այդ, ՀՀ-ը՝ որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ, ներգրավվել է միջազգային և տարածաշրջանային քաղաքական, տնտեսական, մշակութային համակարգերում, ինչն էլ, իր հերթին, բերում է նորմատիվ արժեքային նոր շեշտադրումների շունչը և, որպես հետևանք, օրենսդրության (այդ թվում՝ սահմանադրական) կատարելագործման հարակա խնդիրը։

Միևնույն ժամանակ երկրում առկա հասարակական-տնտեսական ծանր վիճակը (գործազրկություն, արտագաղթ, գաղափարական-ավանդական արժեհամակարգերի փլուզում և այլն) ստիպում են հասարակության զգալի մասին բարեկավող կյանքի մեկնակետը փնտրել նաև սահմանադրական բանաձևներում⁹ (սահմանադրական փոփոխությունների նյութական-գաղափարական նախադրյալներ)։ Եկ չնայած այն հանգամանքին, որ որոշ հեղինակներ¹⁰ հիմնավորում են գործող իրավական նորմերի հետևողական կենսագործման արդյունքում բարեկեցիկ կյանքին հասնելու իրական հնարավորությունները, այնուամենայնիվ, սահմանադրական փոփոխությունների անցկացումը՝ որպես հասարակական կյանքի վերափոխման ճանապարհ, անհրաժեշտ է համարվում ոչ միայն իշխանական շրջանակներում¹¹։ թե ինչպես հասարակությունը կարձագանքի սահմանադրական փոփոխություններին, պայմանավորված է, անշուշտ, այն հանգամանքով, թե որքանով վերջիններս համահունչ կլինեն հանրային հարածում պահանջմունքներին, շահերին ու նկրտումներին և որքանով կարտահայտեն ազգային արժեքների պահպանման համատեքստում ինտեգրացիոն գործընթացներին ՀՀ մասնակցության օրինաչափությունը՝ «... ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդիանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին...»։

9 Այդ մասին են վկայում 2003թ. մայիսի 25-ի համարվելի արդյունքները. ՀՀ մոտ 563.000 քաղաքացիներ արտահայտվել են սահմանադրական փոփոխությունների օգտին։

10 Տե՛ս, օրինակ, Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի սահմանադրական գարգացման որոշ հիմնահարցեր, Եր., 2003թ., էջ 91

11 Իրավական պետության իմքերի ամրապնդման նպատակով սահմանադրական բարեփոխումների անցկացումը ՀՀ գործող Նախագահի նախընտրական ծրագրի կարևորագույն խնդիրներից է։

Զեկույցում փորձ է արվում իրավականորեն հիմնավորելու գործող Սահմանադրության որոշ դրույթների փոփոխման անհրաժեշտությունը՝ իրապարակում առկա սահմանադրական փոփոխությունների նախագծերի (հշտո՞ք քաղաքական կոալիցիայի նախագիծ /այսուհետ՝ կոալիցիայի նախագիծ/, Ազգային ժողովրդավարների դաշինքի /ԱԺԴ/ նախագիծ, Միավորված աշխատանքային միության /ՄԱԿ/ նախագիծ) իրավական վերլուծության հիման վրա. փոփոխման անհրաժեշտությունը քննարկվում է գործող Սահմանադրության և միջազգային իրավական ակտերի նորմերի, պատմական-տեսական հայեցակարգերի համեմատական-համակարգային շրջադիտման պրիզմայով, ինչպես նաև առանձին դեպքերում դրանք հարադրելով ՀՀ սոցիալ-քաղաքական հրողություններին, առանց որոնց հաշվառման սահմանադրական փոփոխությունները կմատուցվեն որպես կյանքից կտրված, անշունչ ու անմարմին իրավական-տեսական երևույթ:

«Ես երբեք չեմ խորհում ապագայի մասին. նա ինքը է գալիս ավելի շուտ», - նախանշում էր Ա. Ենշտեյնը. ուրեմն և այս բանաձևի շրջանակներում պետք է նկատի ունենալ, որ և գործող, և փոփոխված սահմանադրությունները կարող են դիտվել միայն որպես հասարակական-իրավական կյանքի հզոր իմաստը և ոչ երբեք հանգրվան:

Վերջնական հանգրվան՝ երբեք:

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Զեկույցում սահմանադրական նորմերի իրավական վերլուծությունը և համադրումը նախագծերի համապատասխան առաջարկությունների հետ իրականացվում է ըստ գործող Սահմանադրության նորմերի հաջորդականության: Յարկ է նշել, որ գեկույցը չի հավակնում սպառչչ կերպով անդրադառնալու բոլոր առաջարկություններին և փոփոխություններին. ուշադրության կիզակետում են այն ինստիտուտները, որոնք մեր կողմից գնահատվել են որպես առաջնահերթ և եական հասարակական հարաբերությունների սահմանադրական կարգավորման ուղեծրում:

1. ՍԱՐՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Յատկանշական է, որ Սահմանադրության 1-ին հոդվածը 11 հոդվածով լրացնելու առաջարկությամբ է հանդես գալիս ԱԺԴ-ի նախագիծը, որի 1-ին հոդվածում տրվում է ՀՀ որպես ներպետական և միջազգային իրավունքի սուբյեկտի ծավալուն բնորոշումը: Յանձնման մոտեցում է առկա նաև ՄԱԿ-ի նախագծում. «Պետությունը ժողովորի պաշտոնական ներկայացուցիչն է և արտահայտում է նրա կամքն ու շահերը: Պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք ծառայում են ժողովորին, հաշվետու և պատասխանատու են նրա առջև» (2-րդ հոդված):

Յարկ է նշել, որ վերոհիշյալ բնորոշում-ուղեցույցները նորություն չեն պետադրավական պրակտիկայում. պետության բնութագիրն ու գործունեության նպատակներն էր ամրագրում նաև 1978թ. ՀՍՍՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) 1-ին հոդվածը¹²: Յետաքրքիր առաջարկ է ներկայացնում ԱԺԴ-ի նախագիծի 2-րդ հոդվածը, որն անմիջական ժողովրդավարության ինստիտուտների և ընթացակարգերի շրջածիր է ուղղորդում հասարակական կյանքի և պետադրավական ոլորտի հիմնահարցերը՝ հշտականության համակարգի ընդհանուր կառուցվածքի և գործունեության որոշում, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ապահովում, այլ պետությունների հետ հարաբերությունների կարգավորում և այլն:

Իրավական պետությունում մարդու իրավունքների և ազատությունների հրչակումը որպես բարձրագույն և անօտարելի արժեք ունի ոչ միայն (ոչ այնքան) իրավական, որքան սոցիալ-քարոյահոգեբանական նշանակություն. իրավական պետության անկյունաքարային արժեքներ են մարդը՝ կատարյալին հասնելու անդուլ մոլումով, «նախածին մեղքի» իր բաժնով. ազատությունը՝ որպես գիտակցված անհրաժեշտություն՝ նրա գոյության հոգևոր հեմքը, իրավունքը՝ որպես ազատության իրացման սոցիալական կառուցակարգ:

Այս առումով անժխտելի է կոալիցիայի և ՄԱԿ-ի նախագծերում (1-ին հոդվածներ) ամրագրված այս հավատամքը: Ել առավել խորը գաղափարական և կիրառական նշանակություն ունի այդ իրավունքների՝ որպես պետության և ժողովրդի գործունեության սոցիալ-իրավական չափ ու չափորոշչի:

12 Ինչ խոսք, իրավական տեսական դրույթների, իրավաբանական-փիլիսոփայական հայեցակարգերի իրավական ամրագրումը սահմանադրական տեքստում դրական նոր՝ նորմատիվ կիրառական մակարդակի է հասցնում դրանց պատմական-սոցիալական նշանակությունը՝ հագեցնելով դրանք ժողովրդավարական բովանդակությամբ և մշակույթով, սակայն մյուս կողմից՝ Սահմանադրության 1-ին հոդվածի պարագայում աննպատճակահարմար է թվում հիմնական օրենքը ծանրաբեռնել հավելյալ-տեսական սահմանումներով:

ամրագրումը. «Իշխանություն իրականացնելիս պետությունը և ժողովուրդը սահմանափակված են այդ իրավունքներով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»¹³:

Իրավունքի՝ որպես սոցիալական շահերի օբյեկտիվ ու անհրաժեշտ կարգավորիչի և կողմնորոշիչի գերակայության և օրենքի՝ որպես իրավունքի ինստիտուցիոնալ ու պողիսիվ անդրադարձի իշխանության ամրագրումը ևս իրավական պետության և ժամանակի անդարձելի իրամայական է: (Ի դեպ, իրավունքը որպես գործնականում ուղղակիորեն կիրառվող կառուցակարգ են դիտարկում կուալիցիայի նախագծի 57 հոդվածի 13-րդ կետը և ՍԱԿ-ի նախագծի 73, 74 հոդվածները):

Իրավաբանական գրականության մեջ քննադատվում է Սահմանադրության 6-րդ հոդվածը. «ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացվելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Յանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են»:

Նախ՝ միջազգային իրավունքը, մասնավորապես՝ «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969թ. Վիեննայի կոնվենցիան¹⁴ պայմանագրերի կնքումը դիտում է որպես իրավական գործողությունների, ընթացակարգերի համակցություն, որու անհրաժեշտ է պայմանագրին ուժի մեջ մտնելու համար, այսինքն՝ կնքումն իր մեջ ներառում է վավերացման գործընթացը:

Երկրորդ՝ Սահմանադրության 6-րդ հոդվածը ներպետական իրավական համակարգի բաղկացուցիչ մաս է դիտարկում միայն վավերացված պայմանագրերը՝ դրանով իսկ իրավական համակարգից կարծես դրւու մոլելով վավերացման ոչ ենթակա (հաստատվող) միջազգային պայմանագրերը:

Երրորդ՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը¹⁵ նախատեսում է պայմանագրին ուժի մեջ մտնելու մի քանի ընթացակարգեր (վավերացում, հաստատում, պայմանագրին միացում), ինչպես նաև վավերացվող միջազգային պայմանագրերի շրջանակն ըստ սուբյեկտի, որոնց մասին Սահմանադրությունը լրում է:

Այսպիսով՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքը պարունակում է Սահմանադրությանը որոշ անհամապատասխանություններ, և սահմանադրական օրինականության ապահովման համար անհրաժեշտ է, որքան էլ պարադրսալ հնչի, Սահմանադրությունը համապատասխանեցնել օրենքին¹⁶: Կուալիցիայի նախագծի 3-րդ և ՍԱԿ-ի նախագծի 4-րդ հոդվածները ճշգրտել և խմբագրել են վերոնշյալ հոդվածը:

Ուշագրավ է այն փաստը, որ երեք նախագծերն էլ կարևորում են ՀՀ գինված ուժերի ապաքաղաքականացվածությունը՝ որպես հասարակական կյանքի ապառազմականացման և ժողովրականացման ապահովման երաշխիք:

Դայաստան-սփյուռք կապերի համակողմանի խորացումը և ընդլայնումը պայմանավորել են հայկական սփյուռքի՝ որպես սահմանադրական կատեգորիայի ամրագրումը (կուալիցիայի նախագծի 9-րդ հոդված):

Երեք նախագծերն էլ ՀՀ սահմանադրական կարգի հիմունք են համարել տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգը՝ իհարկե տարասեռ կոնցեպտուալ մոտեցումներով:

2. ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻճԱԿԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ սոցիալ-քաղաքական կյանքում ներհակ մոտեցումներ և բուռն սոցիալական արձագանք է առաջացնում երկրադարձիության հիմնահարցը: Խնդիրն, ինչ խոսք, բազմաշերտ է և ունի պատմական-իրավական արմատներ:

Երկրադարձիության արգելմանն էր ուղղված դեռևս 1963թ. Եվրախորհրդի կողմից ընդունված «Բազմաքաղաքացիության դեպքերի կրծատման և բազմաքաղաքացիության դեպքում զինվորական պարտականությունների մասին կոնվենցիան» երկրադարձիությունը համարելով անբնական երևույթ և պայքարելով դրա դեմ: Սակայն հետագայում, միգրացիոն գործընթացներով և բնակչության աճով

13 Անմիջականորեն գործող իրավունք նպատակային նշանակությունը, իրավաբանական ուղղված-ծույքունը բացահայտում է ՈԴ-1993թ. Սահմանադրության 18 հ.-ը: ՀՀ պայմանաներում նորմերի անմիջական գործողությունն ունի գործնական կարտորություն. քավական է հիշատակել քրեականավարական օրենսդրության դրու դրույթների (օր.՝ 109 հոդ. 3-րդ մաս, 228 հոդ. 6-րդ մաս և այլն) իրացման հակասահմանադրական պրակտիկան:

14 Կոնվենցիան ուժի մեջ է մտել 27.01.1980թ., ՀՀ-ն այն վավերացրել է 23.10.1996թ.:

15 Ընդունվել է ԱԺ կողմից 28.07.2000թ.:

16 Տես Կոնституционная реформа в РА и проблемы взаимодействия международного и внутренегосударственного права, В. В. Кочарян, Պետություն և իրավունք N3(17) 2002թ. էջ 20

պայմանավորված, փոխվեց Վերաբերմունքը Երկրադաքացիության նկատմամբ. այդ մասին է վկայում 1994թ. մայիսի 14-ին Եվրախորհրդի կողմից ընդունված «Քաղաքացիության մասին կոնվենցիան»¹⁷:

ՀՅ պարագայում խմբին առավել քան զգայում է՝ հաշվի առնելով աշխարհասկյուր հայության մայր հայրենիքի հետ կապն ամրապնդելու հանգամանքը և, միաժամանակ, ՀՅ բնակչության քաղաքական ինքնուրույնության (հատկապես ընտրական գործընթացներում) ապահովման անհրաժեշտությունը¹⁸: Այնուամենայնիվ, արտասահմանադրական մոտեցումների այս քայլման մեջ անտեսվում է ծրագրային-հիմնարար մեկ այլ ակտի՝ 1990թ. օգոստոսի 23-ի «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 4-րդ կետում ամրագրված այն հեռահար դրույթը, ըստ որի՝ արտերկրի հայությունը ՀՅ քաղաքացիության իրավունք ունի:

Վերոշարադրյալը հիմք է տալիս եգրակացնելու, որ Երկրադաքացիության ընդունումը ոչ այնքան քաղաքական, սոցիալ-տնտեսական հիմնախնդիր է, որքան իրավական (նորմատիվ) անհրաժեշտություն¹⁹:

Կոալիցիայի նախագծի և ՍԱԿ-ի նախագծի 15-րդ հոդվածները ամրագրում են արևմտյան դատավարագիտության մեջ հայտնի Habeas Corpus ընթացակարգը. «Զերբակալված յուրաքանչյուր ոք պետք է 48 ժամվա ընթացքում բերման ենթարկվի դատարան, որը պետք է ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում որոշում կայացնի նրա նկատմամբ կալանք կամ այլ խափանման միջոց ընտրելու կամ նրան ազատելու Վերաբերյալ»²⁰: Վերոհիշյալ դրույթը վճռորոշ երաշխիք է անձի անձեռնմխելիության և ազատության պաշտպանության համակարգում և արտահայտում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը (ՀՅ-ն այն վավերացրել է 2002թ.): Կոալիցիայի նախագծի 15-րդ հոդվածի 6-րդ մասը և ՍԱԿ-ի նախագծի 15-րդ հոդվածի 10-րդ մասն ուղղակիորեն արտացոլում են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի²¹ 11-րդ հոդվածը. «Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ նա ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները»:

Կարչարարության ոլորտում պայականագրելու համար բնակչությանը պաշտոնատար անձանց կամայականություններից՝ կոալիցիայի նախագծի և ՍԱԿ-ի նախագծի 27-րդ հոդվածները ամրագրում են պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց գրավոր դիմումներ, առաջարկություններ ու բողոքներ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու յուրաքանչյուրի իրավունքը:

Պետական (վարչական) շինարարության պրակտիկայում կարևոր նշանակություն ունեցավ քաղաքացիական ծառայության համակարգի մշակումը և ներդնումը պետական ծառայության ոլորտ՝ որպես վարչական իշխանության կառուցակարգի շարունակականությունն ապահովող ինստիտուտ. Վերջինս և ՍԱԿ-ի, և կոալիցիայի նախագծերում ստացել է սահմանադրահրավական ամրագրում (31-րդ հոդվածներ):

Քաղաքական-իրավական կարևոր հիմնախնդիրներից է նաև հողի նկատմամբ սեփականության իրավունքի սուբյեկտների հարցը: «Հայաստանի անկախության մասին» հռչակագրիը (7-րդ կետ) հողը և այլ բնական պաշարները համարեց ժողովորի սեփականությունը: Սահմանադրության 28-րդ հոդվածը այդ իրավունքը, օրենքով նախատեսված առանձին բացառություններով հանդերձ, վերապահեց միայն ՀՅ քաղաքացիներին, որպիսի մոտեցումը ծիչու է թվում ոչ միայն ՀՅ սակավահողության պարագայում, այլև պետության ազգային և էկոլոգիական անվտանգության պահովման տեսանկյունից²²: Նման մոտեցումը

17 Այդ մասին առավել մանրամասն տես՝ Վ. Ն. Այվազյան, Մարդու իրավունքներ, Եր., 2002թ., էջ 73

18 Երկրադաքացիության կողմնակիցների այն պնդումներին, թե Երկրադաքացիության ընդունմամբ հնարավոր կիֆնի գարգացնել ՀՅ տնտեսությունը՝ ներգրավելով օտարերկրյա կապիտալը, Երկրադաքացիության հակասակրդները հակասաստարկում են՝ դրանում տեսնելով ազգային պետության համար սպասնալիք (այդպիսում մուտքային գերազանցությունը կամ անհամար ժամանակը) և հենվելով «Օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՅ օրենքի վրա (ընդունվել է Գև կողմից 17.06.1994թ.): Վերջինն ամրագրում է օտարերկրացիների՝ ՀՀ-ում գտնվելու կացույթան 4 կարգավիճակ. ըստ որում կացույթան հասուկ կարգավիճակը, որը տրվում է առավելագույն ծագումով հայ օտարերկրացիներին, նրանց՝ ՀՅ տնտեսական և վշտիրային կյանքին ներգրավելու համար սահմանում է՝ ՀՅ քաղաքացիների իրավունքներից գրեթե չտարբերվող իրավունքներ: Դեռ ավելին՝ ՀՅ մի շարք օրենքներ («Օտարերկրյա ներդրումների մասին» 04.06.1994թ. օրենքը, «Չափութահրակի մասին» 30.09.1997թ օրենքը) նախատեսում են օտարերկրյա ներդրումների համար գրծումներության արտօնյալ պայմաններ:

Երկրադաքացիության կողմնակիցների այն համարում են նաև իրավական գործուն միջոց՝ ՀՅ-ից բնակչության արտագաղթը կանխելու և արտերկրի հայության մայր հայրենիքի հետ կապելն ամսավնելու համատեքսում՝ ՀՅ վերապահնելու հակառակ ռեակցիան:

19 ԱԺԴ-ի նախագծի 15 հոդվածը ուղղակիորեն ամրագրում է Երկրադաքացիության սկզբունքը, իսկ ՍԱԿ-ի նախագիծը բացառապես է վերաբերվում դրան (այդ մասին է վկայում 30-րդ հոդվածի 2-րդ մասը). մնացին կոալիցիայի նախագիծը, վերացնելով Երկրադաքացիության արգելքը, կարելի է ենթադրել, խնդիրը տեղափոխում է օրենսդրական որոր:

20 ընթացակարգի պատմական արմատների և էվոլյուցիայի մասին տես՝ Չերնիլովսկий Յ. Ա. Առօնական պատմական արմատների և էվոլյուցիայի մասին, 1996թ., մ. ստ. 251

21 Դաշնագիրն ուժի մեջ է մտել 12.10. 1966թ., ՀՀ-ն այն վավերացրել է 01.04.1991թ.:

22 Հատկանշական է այս կապակցությամբ ՈՒ-Դ Սահմանադրության մոտեցումը. չնայած հողային հսկայական պաշտոնների առկայությանը՝ Սահմանադրությունը ճանաչում է հողի նկատմամբ միայն ՈՒ-Դ քաղաքացիների սեփականության իրավունքը (տես՝ ՈՒ-Դ Սահմանադրության 36 հոդվ.):

պահպանվել է նաև ՄԱԿ-ի նախագծում, մինչդեռ կոալիցիայի նախագծի 32-րդ հոդվածը հողի նկատմամբ օտարերկրացիների և ապաքաղաքացիների սեփականության իրավունքի սահմանափակումը միայն հնարավոր է հաճարում՝ դրանով իսկ հակասելով անկախության հռչակագրի ոգուն:

Սահմանադրական փոփոխությունների առանցքային կետերից մեկը, մեր կարծիքով, պետք է լիներ քաղաքացիների աշխատանքի իրավունքի ուղղակի ամրագրումը: Այս կապակցությամբ բերվող այն փաստարկներին, թե շուկայական տնտեսության պայմաններում պետությունը չի կարող ապահովել (երաշխավորել) իր քաղաքացիներին աշխատանքով, անհրաժեշտ ենք համարում հակադրել այն հանգամանքը, որ աշխատանքի իրավունքը սահմանադրորեն ամրագրել են շուկայական տնտեսություն ունեցող պետությունները ևս²³: Աշխատանքի իրավունքը նախատեսում է նաև «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» 1966թ. միջազգային դաշնագիրը (հոդված 6), որին ՀՀ-ը միացել է 01.04.1991թ.: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը (1-ին հոդված) հռչակում է ՀՀ-ն սոցիալական պետություն։ Սոցիալական պետության հայեցակարգի միջուկն են կազմում պետության պատասխանատվությունը հանրային բարեկեցության ապահովման համար, տնտեսական բարիքների բաշխումը արդարության ոգով՝ ապահովելու համար յուրաքանչյուրի մարդավայել գոյությունը, իր քաղաքացիներին նվազագույն կենսամիջոցներով ապահովելու պետության պարտականությունը²⁴: Սահմանադրության նման ամրագրման պարագայում (նախագծերում ևս բացակայում է վերոհիշյալ դրույթը) հարցականի տակ է դրվում սոցիալական պետության գաղափարը:

Արձագանքելով օրենսդրության էկոլոգիզացիայի համաշխարհային միտումներին՝ կոալիցիայի նախագծի և ՄԱԿ-ի նախագծի 36-րդ հոդվածները ամրագրել են մարդու կարևորագույն էկոլոգիական իրավունքը՝ ապրելու առողջությանը և բարեկեցությանը նպաստող միջավայրում, և հստակեցրել պետության էկոլոգիական գործառույթը. «Պետությունը վարում է ներկա և ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականությունը»²⁵:

Կոալիցիայի նախագծի 45-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է իրավունքի տեսության կողմից անընդունելի մի դրույթ՝ «Ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով», որը կազմալուծման վտանգի տակ է դնում գործադրի մարմինների (և ոչ միայն) նորմաստեղծ գործունեությունը²⁶:

Քաղաքացիական շրջանառության և, հատկապես դատավարական պրակտիկայի համար կարևոր է իրավաբանական անձանց սահմանադրական կարգավիճակի հստակեցումը (կոալիցիայի նախագծի 51-րդ հոդված, ՄԱԿ-ի նախագծի 52-րդ հոդված):

Դարձ է նշել, որ և գործող Սահմանադրության, և նախագծերի տեքստերը բովանդակում են հատկապես սոցիալ-տնտեսական իրավունքների ապահովման երաշխիքների թույլ համակարգ՝ ի տարրերություն ՀՍՍՀ 1978թ. Սահմանադրության (Հիմնական օրենքի)²⁷:

Բացի բառագրական փոփոխություններից (ՄԱԿ-ի նախագծի 53, 84, 113, 135 և կոալիցիայի նախագծի 52, 66, 88, 109 հոդվածները վերաբերում են Սահմանադրության 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ գլուխների վերնագրերի փոփոխմանը), երեք նախագծերն ել ամրագրում են պետական իշխանության թևերի միջև փոխհարաբերությունների՝ որակապես նոր համակարգ՝ հակակշիռների և զսպումների նորատիպ կառուցակարգով, պետական և հասարակական ոլորտում հանրային իշխանության մարմինների կարգավիճակի և նպատակային գործունեության (գործառույթների) հստակեցմամբ: Սակայն պրակտիկայում այդ նորմերի իրացման հետևանքների անկանխատեսնիությունը ստիպում է առավել գգույշ և վերլուծաբար նոտենալ դրանց:

23 Տե՛ս, օրինակ, Բառակայի, Բասմանյայի, Ծավողնիայի սահմանադրություն»նշC Խթմ» ՀՅ՝ Конституционное право зарубежных стран. под ред. М. В. Баглай, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. 2000г., М. аշխատության մեջ

24 Տե՛ս Конституционное право зарубежных стран. под ред. М. В. Баглай, Ю. И. Лейбо, Л. М. Энтина. 2000г. М., стр. 489

25 Այս համատեքստում է դիմում ՀՀ կողմից «Երակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործմբացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» 1998թ. կոնվենցիայի (Օրինակ կոնվենցիա) վավերացումը 14.05.2001թ.:

26 Ցուրաբանչյուր իրավական նորմ վարքագիր սոցիալական կանոն է, որը սահմանում է իրավունքի սուբյեկտների բոլոյատերի կամ պարտադիր վարքագիր չափը. ըստ որում՝ իրավական նորմի որոշակիության հատկանիշը ներարտում է իրավունքի սուբյեկտների միջև իրավունքի և պարտականության բաշխումը այնպես, որ իրավագոր կողմից վարքագիր բոլոյատերի չափը երաշխավորվում է մյուս՝ պարտավոր կողմից վարքագիր չափով՝ պարտականությամբ (իրավական նորմի հատկանիշների, կառուցվածքի, գործառույթների մասին տես Տեօրիա գույքաւորության և պարտականության մատչելիության մասին» 1997թ. Վայում Արամի պարտականությունը՝ Ա. Վ. Մալյոկ, Հ. Ի. Մացուզով, 1997թ., стр. 351, Խրապանուկ Բ. Ի. Տեօրիա գույքաւորության և պարտականության մատչելիության մասին» 1993թ., стр. 172, կամ իրավունքի տեսության այլ դասագրեր):

Ենշպես գիտենք, ուղարկության մասնակիության իրավական համակարգում, որին պատկանում է ՀՀ իրավական համակարգը, իրավական նորմը արտահայտվում և ամրագրվում է նորմատիվ ակտի ձևով: Նշանակում է՝ յուրաքանչյուր նորմատիվ ակտ պարունակում է վարքագիր համապարտադիր կանոններ, և քանի որ նորմատիվ ակտեր են ինչպես սահմանադրությունը, օրենքները, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերը, ուստի վերջիններս ևս կարգավորության միջև հարաբերությունները՝ ինքը պարտականության անբաժանելի բաղադրիչով: Այլ հարց է, որ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է իրականացվի նորմատիվ ակտերի տարբերակված մակարդակներում

27 Տե՛ս Հայկական ՍՍՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) 33, 38-44 հոդվածները

3. ՆԱԽԱԳԱԴԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Երեք նախագծերն էլ ՀՀ նախագահին հրչակում են պետության գլուխ։ դրանով իսկ կարծես թե հստակորեն ուրվագծվում են քաղաքական այս ինստիտուտի գործառութավորնան շրջանակները։

Պետության գույխը բնորոշվում է որպես պաշտոնական անձ (մարմին), որը, որպես կամոն ծևականորեն, գրադեցնում է բարձրագույն տեղը պետական մարմինների ենթակարգությունում՝ իրականացնելով երկրի բարձրագույն ներկայացուցչությունը ներքաղաքական և միջազգային հարաբերություններում²⁸։

ԱժԴ-ի, ՄԱԿ-ի և կոալիցիայի նախագծերի՝ նախագահի իրավասությունը սահմանող նորմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ զայրմների և հակակշիռների նոր մոդելները նախագահին օժուում են նոր լիազորություններով հատկապես գործադիր ոլորտում։

ԵՎ կոալիցիայի (57-րդ հոդվածի 5-րդ կետ), և ԱժԴ-ի (17-րդ հոդված), և ՄԱԿ-ի (63-րդ հոդված) նախագծերը նախագահին վերապահել են լիազորություն օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ կատարել պետական պաշտոններում։ Եթե դրան հավելենք նախագծերում այն դրույթի ամրագրումը, որ գործադիր իշխանությունն իրականացնում են, ՀՀ կառավարությունից բացի, օրենքով նախատեսված գործադիր իշխանության գործառույթներ իրականացնող այլ մարմիններ (ՄԱԿ-ի նախագծի 114-րդ, կոալիցիայի նախագծի 89-րդ հոդվածներ), ապա պարզ կդառնա, որ լիազորությունների նման շրջանակը եապես փոխում է նախագահի դերը նաև իշխանության համակարգում հնարավորություն տալով նրան իր ձեռքում կենտրոնացնել գործադիր ապարատը։

Նախագահը միանձնյա նշանակում և ազատում է գլխավոր դատախազին (կոալիցիայի նախագծի 57-րդ հոդվածի 9-րդ կետ և ՄԱԿ-ի նախագծի 66-րդ հոդված) և կարող է միանձնյա պաշտոնանկ անել պաշտպանության և արտաքին գործերի նախարարներին (ՄԱԿ-ի նախագծի 62-րդ հոդված)։ Ի դեպ, ԱժԴ-ի նախագիծը նախատեսում է գլխավոր դատախազի նշանակումը՝ Աժ-ի հետ համաձայնեցնելով։

Կոալիցիայի նախագիծը (84 հոդված) և ՄԱԿ-ի նախագիծը (109 հոդված) նախագահին համարում են ՀՀ գինված ուժերի գերագույն գլխավոր իրամանատարը. ըստ որում՝ Աժ նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է հանրապետության նախագահը։

Սոցիալ-քաղաքական կյանքում թննդատությունների տեղի տված՝ Աժ-ն արձակելու նախագահի գրեթե բացարձակ լիազորությունը սահմանափակելու և սահմանադրական կարգավորման ոլորտ ուղղորդելու անհրաժեշտությամբ է պայմանավորված այն դրույթի ամրագրումը (ՄԱԿ-ի նախագծի 60 հոդված, կոալիցիայի նախագծի 57 հոդված), ըստ որի՝ նախագահը կարող է կրծատել Աժ լիազորությունների ժամկետը միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով (ՄԱԿ-ի նախագծի 99 և կոալիցիայի 78 հոդվածներ): Մի կողմից՝ նշված դրույթը, անշուշտ, իրական երաշխիք է նախագահի այս լիազորության նպատակային իրականացման համար (Սահմանադրությունը նախատեսում է միայն իրադրային-ժամկետային իրավական արգելքներ), մյուս կողմից, սակայն, կարող են ստեղծվել սոցիալ-քաղաքական ճգնաժամերից (օրինակ՝ Աժ-Նախագահ տարածայնության առաջացում) դուրս գալու անհնարինության նորմատիվ հիմքերը։

Ազգային ժողովի և նախագահի փոխհարաբերությունների նոր հարթություն են ձևավորում ՄԱԿ-ի նախագծի 58 և կոալիցիայի նախագծի 79 հոդվածները՝ նախագահին վերապահելով օրենսդրական նախաձեռնության իրավունքը։ Այս դեպքում, ըստ եռթյան, դժվարանում է Աժ նախագահ հակակշիռների կառուցակարգի գործողությունը, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ օրենսդրական ողջ գործընթացը փաստորեն դառնում է Աժ-ի և նախագահի համատեղ գործունեությունը։ Նոր ընթացակարգ է նախատեսում կոալիցիայի նախագծի 91-րդ հոդվածը, ըստ որի՝ նախագահը կարող է կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով, որպիս հանգամանքը մի կողմից՝ կառավարության ակտերի օրինականության ապահովման գործուն երաշխիք է, մյուս կողմից՝ վկայում է կառավարության նկատմամբ պետության գլխի՝ դեռևս պահպանված «խնամակալության» առկայության մասին։

Կոալիցիայի նախագիծը (61-րդ հոդված) նախատեսում է նախագահի հրաժարականի բարեցված ընթացակարգ. «ՀՀ նախագահը իր հրաժարականը ներկայացնում է Աժ։ Տասնօրյա ժամկետը լրանալուց անմիջապես հետո հրաժարականը կրկին ներկայացնելու դեպքում հրաժարականը հանարվում է ընդունված, և Սահմանադրությամբ սահմանված կարգով ու ժամկետում անցկացվում է արտահերթ ընտրություն»։

²⁸ Տե՛ս Կոնստитուցիոնիօ պարագաները առաջարկում են պատության գլխի հոչակմանը հնարավոր կիմեր նախագահին գործունեությունը գործադիր իշխանության համակարգի՝ չի կառավարում համար իշխանության երեք ճյուղերի միջև հավասարակշռությունը, որի երաշխավորը ինըն իմքը՝ նախագահին է։

«ՈՒԺԵՂ նախագահի» մողելի կողմնակիցները նշում են, որ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծնան և սոցիալ-քաղաքական հեղարեկումներից հասարակությանը ապահովագրելու հարցում վճռորոշ դեր և նշանակություն ունի նաև նախագահի քաղաքական ակտիվության աստիճանը, որն ունի իրավական (սահմանադրական) հիմքեր: Միևնույն ժամանակ հասարակական կյանքի քաղաքական դինամիկայում, ինչպես վկայում է պատմությունը, «անձնավորված» իշխանությունը հաճախ վերածվում է ավտորիտարիզմի²⁹:

4. ՕՐԵՆՍՈՒՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն նշել ենք, նախագծերն առաջարկում են սահմանադրորեն ամրագրել ԱԺ լիազորությունները կրօնատելու դեպքերը. դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝

ա) Աժ-ն չի կատարում Սահմանադրությանը անրագրված իր գործառույթները՝ դրսերելով անգործություն (կուալիցիայի նախագծի 78-րդ հոդվածի 2-րդ մաս, ՄԱԿ-ի նախագծի 99-րդ հոդվածի ա), բ), գ) կետեր),

բ) Աժ-ի և նախագահի միջև կառավարության (վարչապետի) գործունեության կապակցությամբ առաջացած տարածայնությունները լուծելու նպատակով (կուալիցիայի նախագծի 78-րդ հոդված 1-ին մաս, ՄԱԿ-ի նախագծի 99-րդ հոդվածի 1-ին մաս, դ) կետ):

Նախագծերն օգտագործուն են ՀՀ Սահմանադրության անձանոթ, նոր հասկացություն՝ արտակարգ հրավիժակ (ՄԱԿ-ի նախագծի 8-րդ հոդված, կուալիցիայի նախագծի 86-րդ հոդվածի 11-րդ կետ), սակայն այս հասկացությունը ժամկետային և երաշխիքային առումով հատակ ամրագրում չի ստանում նախագծերում:

Որպես պատգամավորների գործունեության ապահովման երաշխիք՝ կուալիցիայի նախագծի 70-րդ հոդվածի 3-րդ մասը և ՄԱԿ-ի նախագծի 89-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում են առանց Աժ-ի համաձայնության պատգամավորին ձերբակալելու անթույլատրելիությունը, բացառությամբ այն դեպքերի, եթե ձերբակալությունը կատարվում է հանցագործության վայրում և բխում է գործի քննության շահերից:

Ըստ նախագծերի՝ սահմանադրական նոր կարգավիճակ են ստանում Վերահսկիչ պալատը՝ որպես բյուջետային միջոցների և պետական սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնող անկախ մարմին (կուալիցիայի նախագծի 86-րդ հոդվածի 2-րդ մաս, ՄԱԿ-ի նախագծի 134-րդ հոդվածի 2-րդ մաս), Աժ-ի խորհուրդը՝ որպես Աժ ընթացիկ գործունեությունը կազմակերպող մարմին (կուալիցիայի նախագծի 83-րդ հոդված), Մարդու իրավունքների պաշտպանը³⁰՝ որպես պետական իշխանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանություն իրականացնող սուբյեկտ-երաշխիք (կուալիցիայի նախագծի 85-րդ հոդվածի 4-րդ կետ, ՄԱԿ-նախագծի 109-րդ հոդվածի 6-րդ կետ):

ՄԱԿ-ի նախագծի 106 հոդվածի 1-ին մասը նախատեսում է ՀՀ սահմանադրական իրավունքի նոր ինստիտուտ՝ «խորհրդարանային անձեռնմխելիության իրավունք», որի ուժով չի թույլատրվում առանց Աժ նախագահի համաձայնության՝ զինված կազմակերումների մուտքը Աժ-ի տարածք, ինչպես նաև ձերբակալության, խուզարկության կամ կալանավորման կատարում Աժ-ի տարածքում:

Աժ և կառավարության փոխհարաբերությունների տարածին մողելներ են առաջարկում ԱժԴ-ի, ՄԱԿ-ի և կուալիցիայի նախագծերը: Դարկ է նշել, որ եթեք նախագծերն ել բովանդակային առումով չեն անդրադարձնում Աժ և կառավարության հարաբերություններին սոցիալական հնչեղություն հաղորդող «հարց ու պատասխանի» ինստիտուտին, որի արդյունավետությունը, սակայն, բարձր չէ³¹:

5. ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

29 Նախագահին՝ որպես բյուջե սոցիալ-տնտեսական չարիքների դեմ պայքարող մարմին և դժբախտությունների համադարձան դիտելը բնորոշ է զարգացող երկրների մեծ մասին, որտեղ փորձ է արվում հիմնավորելու բարի քաղաքով և չար նախարարների միջնախարյան դրվագին:

30 Ի դեպքում սկանդինավյան համարվող այս ինստիտուտի պատմական արմատները Հին Հռոմում են, որտեղ համանման գործունեություն էր իրավանացնում ժողովրդական տրիբունը (Վերջինիս դերի և գործառույթների մասին տես Ն. Ա. Մաշկին, Հին Հռոմի պատմություն, 1951թ., Եր., էջ 177):

31 Այս առումով առավել նպատակահարմար կյենք այս փոխարինել հարցապնդման ընթացակարգով, որի արդյունքում ընդունվող Աժ-ի որշումները նորմատիվ հիմք են ստեղծում սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համար: Նման ընթացակարգ գործում է մասնավորապես Ֆրանսիայի, Շապոնիայի, Գերմանիայի իրավական իրավանությունը (տես Կոնստитуցիոնное право зарубежных стран, под ред. М. В. Баглай, Ю. И. Лейбо, Л. М. Энтина, 2000г. М.):

ԱժԴ-ի նախագիծը կառավարության ձևավորման հարցում հիմնովին ձևափոխում է Աժ-ՀՀ Նախագահ-կառավարությունը եռակողմ հարաբերությունների ներկայիս մոդելը. նախագիծի 19-րդ հոդվածի համաձայն՝ Աժ-ն նշանակում է վարչապետին, վարչապետի ներկայացման՝ կառավարության անդամներին, հաստատում կառավարության կառուցվածքը, կազմը, գործունեության ուղղությունները: Գործադիր իշխանության բարձրագույն մարմնի ձևավորման նման սխեմայում ՀՀ Նախագահի բացակայությունը, փաստորեն, իրավական իիմք է ստեղծում կառավարությանը ազատելու Նախագահի նորմատիվ «խնամակալությունից»:

Համանման մոտեցում է որդեգրել նաև ՄԱԿ-ի նախագիծը. «...Աժ-ն իր նիստում պատգամավորների ընդիհանուր թվի ձայների մեջամասնությամբ նշանակում է վարչապետին»: «Եթե Սպային ժողովը, -շարունակում է 115 հոդվածը, - հնգօրյա ժամկետում չի նշանակում վարչապետ կամ հավանություն չի տալիս կառավարության գործունեության հայեցակարգին, ապա Աժ-ի նախագահը անհապաղ դիմում է Հանրապետության Նախագահին կառավարություն կազմավորելու խնդրանքով»:

Որպես իրավական գործուն երաշխիք՝ ՄԱԿ-ի նախագիծի 60-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում (99 հոդված) Աժ-ի լիազորությունների ժամկետը կրճատելուց հետո գործող վարչապետը պաշտոնական ենթակա չէ: Սակայն 99-րդ հոդվածի դ) կետը (Նախագահի կողմից Աժ-ի լիազորությունների ժամկետի կրճատումը, եթե վերջինս հավանություն չի տալիս վարչապետին պաշտոնանկ ամելու՝ հանրապետության Նախագահի առաջարկին), Աժ-ն որոշակիորեն կախման մեջ է դնում ՀՀ Նախագահից՝ դրանով իսկ կասկածի տակ դնելով վարչապետի և Աժ գործունեությունն ընդիհանրապես:

Զապումների և հակակշիռների համատեքստում կուղիցիայի նախագիծը (91-րդ հոդված) և ՄԱԿ-ի նախագիծը (116-րդ հոդված) հստակեցրել են կառավարության գործունեության իրավական ոլորտը՝ վերջինիս վերապահելով ինքնուրույնություն և հարաբերական անկախություն ակտեր ընդունելու («կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը») և գործունեության իրականացման ձևի կազմակերպման («կառավարության նիստերը հրավիրում և վարում է վարչապետը: կառավարության նիստ կարող է իրավիրել և վարել ՀՀ Նախագահը») հարցերում:

ՄԱԿ-ի և կուղիցիայի նախագծերը (համապատասխանաբար 103 և 81 հոդվածներ) վերացրել են Աժ-ի և կառավարության գործունեության հատման իրավական մի կարևոր հանգույցակետ. խոսքը Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված պատվիրակված օրենսդրության ինստիտուտի մասին է: Հայրենական սահմանադրագիտության մեջ այս խնդիրը իրարամերժ նոտեցումների տեղիք է տվել. մասնավորապես՝ որոշ հեղինակներ նշում են, թե Սահմանադրության մեջ նման նորմի առկայությունը կարելի է գնահատել որպես անվստահություն պրոֆեսիոնալ հիմունքներով մշտապես գործող օրենսդիր մարմնի նկատմամբ³².

- Վերոհիշյալ տեսակետը չունի, սակայն, ծանրակշիռ և հիմնավոր փաստարկում, որովհետև
- պատվիրակված օրենսդրության ինստիտուտը գոյություն ունի մի շարք պետություններում և³³: Պրոֆեսիոնալ-մշտական հիմունքներով գործող օրենսդիր մարմնին զուգահեռ, վերջինիս կողմից սահմանված ժամկետներում և իրավասության շրջանակներում, պատվիրակված իրավական ակտեր (օրդինանս, դեկրետ և այլն) ընդունելու լիազորությամբ է օժտված նաև կառավարությունը, որպիսի հանգամանքը ամենակին չի նվազեցնում պաշտոնատի օրենսդրական գործունեության նշանակությունը,
 - հասարակական հարաբերությունների ներկայիս դիմանիկան պահանջում է իրավական կարգավորիչների օպերատիկ վերապով նշանակում և կիրառում, սակայն տևական օրենսդրական գործընթացի պայմաններում էապես դժվարանում է հասարակական հարաբերությունների գործուն և ժամանակին կարգավորումը, մինչեւ կառավարությունն իր ընդարձակ և ամենահաս ապարատով կարող է պահովել այս հիմնախնդիրի օպտիմալ լուծումը,
 - Սահմանադրությամբ, նաև նախագծերում, նշում է այնպիսի իրավիճակների մասին (ռազմական դրություն, արտակարգ դրություն), որոնք օբյեկտիվորեն Աժ-ին կարող են զոկել նիստ գումարելու (հետևաբար՝ օրենքներ ընդունելու) հնարավորությունից: Այս դեպքում անխուսափելիորեն առաջանում է կարգավորիչ-ֆունկցիոնալ մարմնի իրավաստեղծ գործունեության անհրաժեշտությունը. այս պարագայում պատվիրակված օրենսդրությունը անփոխարինելի իրավական կառուցակարգ է:

Հետևաբար՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի վերացումը նախագծերի տեքստում պետք է դիտել որպես ժամանակավետ և անպատճակահարմար:

Կուղիցիայի նախագիծը (95-96 հոդվածներ) և ՄԱԿ-ի նախագիծը (119 հոդված) տարածքային կառավարման մարմիններն ընդորկել են գործադիր իշխանության հանակարգը նախատեսող գլխում,

³² Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան. Եր., 2003թ., էջ 481

³³ Տե՛ս, օրինակ, Ֆրանսիայի, Իտալիայի, ԽՍՀՄիայի սահմանադրությունները (տե՛ս Конституционное право зарубежных стран, под ред. М. В. Баглай, Ю. И. Лейбсо, Л. М. Энтина. 2000г. М.)

ինչը կարևոր նախադրյալ է համայնքների լիարժեք կայացման և տեղական ինքնակառավարման գարգացման համար:

6. ՂԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ կուլիցիայի նախագիծը (98 հոդված), և ՄԱԿ-ի նախագիծը (123 հոդված) հստակեցնում են արդարադատություն իրականացնող մարմինների շրջանակը: Միևնույն ժամանակ վերացվում է ՀՀ-ում երդվալների դատարանի կազմակերպման և գործունեության նորմատիվ հնարավորությունը՝ վերջնականապես փակելով «ժողովրդավար արդարադատություն» տանող այս ճանապարհը:

Կուլիցիայի նախագիծի 100-րդ և ՄԱԿ-ի նախագիծի 125-րդ հոդվածները սկրունքորեն նոր մոտեցում են որդեգրել դատական իշխանության անկախության երաշխավորման սուբյեկտի հարցում. «Դատարանների անկախությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ և օրենքներով»:

«Օրենքը լրակյաց դատավոր է. դատավորը խոսող օրենքն է», - ենթատեքստում շեշտում են նախագծերը արդարադատության հավերժորեն արդի ընկալումը:

Իհարկե, դատական իշխանության երաշխավորի (ըստ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի՝ որպես այդպիսին հանդես է գալիս Արդարադատության խորհուրդը գլխավորող ՀՀ Նախագահը) ապանձնայնացունը անորոշ է դարձնում պատասխանատու սուբյեկտի հարցը, մյուս կողմից, սակայն, սկզբունքորեն նոր այդ հայեցակարգը, վկայակոչելով ՀՀ ողջ օրենսդրությունը՝ որպես ապավեն ու նեցուկ, հակամետ է բարձրացնելու դատական իշխանության դերը իշխանության համակարգում և հետինակությունը հասարակական կյանքում:

Պետական իշխանության մարմինների համակարգում առանձնահատուկ դեր և նշանակություն ունի Արդարադատության խորհուրդը (Ախ)` որպես դատական իշխանության կազմակերպմանն անմիջականորեն և գործառութավորմանն անուղղակիրեն առնչվող մարմին: Այս կապակցությամբ կուլիցիայի նախագիծը առաջարկում է ՀՀ Նախագահի գլխավորությամբ Ախ-ի նոր մոդել՝ կազմված ընտրովի դատավորներից, նշանակովի իրավաբան գիտնականներից: Ինչպես տեսնում ենք, արդարադատության նախարարը և դատախազությունը, ըստ նախագիծի, որևէ կերպ չեն մասնակցում Ախ-ի գործունեությանը:

Յետաքրքիր մոդել է առաջարկում ՄԱԿ-ի նախագիծը (126 հոդված). Ախ-ի 4 անդամ նշանակում է Աժ-ն, իսկ ՀՀ Նախագահն ընդգրկված չէ Ախ-ի կազմում: Փոփոխված են նաև Ախ-ի որոշ գործառություններ. ըստ կուլիցիայի նախագիծի (102 հոդված) Ախ-ն գլխավոր դատախազի առաջարկով եզրակացություն է տալիս դատավորին որպես մեղադրյալ ներգրավվելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթակելու հարց հարուցելու համաձայնություն տալու մասին. ՄԱԿ-ի նախագիծի 127 հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա Ախ-ն պաշտոնանկ է անում դատավորին:

Ներկայում անվիճարկելի է Սահմանադրական դատարանի դերը և անհրաժեշտությունը մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների համակարգում և պետական իշխանության մարմինների հակակշռելիության կառուցակարգում: Ընդգծելու համար այս ինստիտուտի ժողովրդավարական և սոցիալական նշանակությունը՝ կուլիցիայի նախագիծը (106-րդ հոդված) նախատեսում է Սահմանադրական դատարանի (ՍԴ) նոր լիազորություններ. ՍԴ-ն որոշում է Աժ-ի, ՀՀ Նախագահի, կառավարության, վարչապետի նորմատիվ-իրավական ակտերի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության հարցը: ՄԱԿ-ի նախագիծի 131-րդ հոդվածը, բացի վերոհիշյալից, ամրագրում է ևս երկու կարևոր լիազորություն. ՍԴ-ն

ա) լուծում է պետական իշխանության մարմինների և վերջիններիս ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև առաջացած վեճերը և այդ կապակցությամբ մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը և օրենսդրությունը.

բ) եզրակացություն է տալիս հանայնքի դեկավարի պաշտոնանկության և /կամ հանայնքի ավագանու լիազորությունների ժամկետը կրծատելու՝ օրենքով նախատեսված հիմքների առկայության մասին:

Այս լիազորություններն ընդգծում են ՍԴ-ի գերակա և հաշտարար դերը հանրային իշխանության կառուցվածքում:

Զգալիորեն փոփոխված է ՍԴ դիմելու սուբյեկտների կազմը: Բացի Սահմանադրության 101 հոդածով նախատեսված սուբյեկտներից, կուլիցիայի նախագիծի 107 և ՄԱԿ-ի նախագիծի 132 հոդվածների համաձայն՝ ՍԴ կարող են դիմել:

□ տեղական ինքնակառավարման ներկայացւցական մարմինները (ավագանի)՝ իրենց սահմանադրական իրավունքներին առնչվող՝ պետական մարմինների սահմանադրական լիազորությունների գերազանցումը վիճակելու հարցով: Նման լիազորության վերապահումը կարևոր երաշխիք է տեղական ինքնակառավարման համակարգի կայացման և վերջինիս իրավասության ոլորտմերը պետության իրավասության շրջանակներից սահմանագատելու և պաշտպանելու համար,

- յուրաքանչյուր ոք՝ որոշակի գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը և վիճարկվում է իր նկատմամբ կիրառված օրենքի այս կամ այն դրույթի հակասահմանադրականությունը: Այս դրույթը մարդու իրավունքների համակողմանի պաշտպանության ապահովման ամենագործում երաշխիքներից է՝ ներդաշնակելով մարդու իրավունքները և ազատությունները որպես բարձրագույն արժեք ճանաչելու գաղափարին,
- դատարանները և գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով: Այս ընթացակարգի սահմանմամբ զգալիորեն մեծանում են իրավակիրառ պրակտիկայի իրավաչափության ապահովման և արդարացնելու արդարադատության իրականացման հնարավորությունները՝ ի տարբերություն գործող դատավարական օրենսդրությամբ ամրագրված երկարատև ու անարդյունավետ կառուցակարգի,
- Մարդու իրավունքների պաշտպանը՝ ԱԺ-ի, ՀՀ Նախագահի, կառավարության, վարչապետի նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության երկրորդ գլխի դրույթների սահմանադրականության հարցերով: Իր սոցիալական նպատակների և գործունեության իրավական բովանդակության գնահատմամբ պետական իշխանության համակարգից ըստ եռթյան դուրս դիտարկվող և համրային հնչեղություն ու անհրաժեշտություն ունեցող այս ինստիտուտն իր գործունեությունը առավել արդյունավետորեն կարող է իրականացնել սահմանադրական կարգավիճակ և իրավասության լայն շրջանակ ունենալու պարագայում: Դրա իրականացման ապահովման երաշխիքների համալիրում վերոնշյալ դրույթը դիտարկվում է որպես իրավական բաղկացուցիչ:

Իրավաբանական (հատկապես քրեադատավարական) գրականության մեջ հիմնավորվում է Սահմանադրության 103-րդ հոդվածի ճշգրտման անհրաժեշտությունը: Խոսքը մասնավորապես վերաբերում է 103 հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, որը նախատեսում է օրենքով նախատեսված դեպքերում և կարգով քրեական հետապնդում հարուցելու՝ դատախազության լիազորությունը: Խնդրո առարկայի նման կարգավորման պարագայում առաջանում է հակասություն Սահմանադրության, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի³⁴, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի³⁵ միջև և որպես հետևանք՝ ըստ եռթյան հակասահմանադրական պրակտիկան³⁶: Առաջարկվող փոփոխությունները (ՍԱԿ-ի նախագծի 134 և կոալիցիայի նախագծի 108 հոդվածներ) ուղղված են հարցի կարգավորմանը:

7. ՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արտահայտելով «Տեղական ինքնակառավարման մասին» 1990թ. Եվրոպական խարտիայի (ՀՀ-ը այն վավերացրել է 2001թ.) հիմնական սկզբունքներն ու նպատակները՝ երեք նախագծերն ել սահմանում են տեղական ինքնակառավարումն ապահովող նյութական, կազմակերպական, իրավական երաշխիքներ:

Դոկտրինալ աղբյուրներում նույնիցիպալ (տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման) համակարգը մեկնաբանվում է որպես կառավարման հարաբերականորեն ապակենտրոնացված ձև³⁷:

Ներկայումս ընթացող ապակոնցենտրացման և ապակենտրոնացման գործընթացները իրենց իրավական ամրագրումն են ստացել ՍԱԿ-ի և կոալիցիայի նախագծերի տեքստում. այդ մասին է վկայում տարածքային կառավարմանը վերաբերող նորմերը Սահմանադրության 7-րդ գլխից հանելու և 5-րդ գլխում (Գործադիր իշխանություն) նախատեսելու առաջարկը, որով հստակեցվում է տեղական ինքնակառավարման նարմինների լիազորությունների շրջանակը (մակարդակը) և դրանց փոխհարաբերությունները պետական իշխանության հետ³⁸:

Կոպլիցիայի նախագծի 115 հոդվածը և ՍԱԿ-ի նախագծի 14-րդ հոդվածը նախատեսում են տեղական ինքնակառավարման նարմինների լիազորությունների քառամյա ժամկետ:

Սունիցիպալ համակարգի համակարգի հապես տարբերվող մոդել է առաջարկում ԱԺԴ-ի նախագիծը (104-րդ հոդված), որը նախատեսում է տեղական ինքնակառավարում իրականացնել ՀՀ վարչատարածքային

³⁴ Ընդունվել է ԱԺ կողմից 03.08.1998թ.

³⁵ Ընդունվել է ԱԺ կողմից 01.07.1998թ.

³⁶ Տվյալ դեպքում խնդիրը «քրեական հետապնդում հարուցել», «քրեական գործ հարուցել» և «քրեական հետապնդում իրականացնել» հասկացությունների մեջ է, որոնց տեսական հիմնավորումը տրված է իրավաբանական գրականության մեջ (տե՛ս Գ. Ս. Ղազինյան, Ս. Ա. Դիլբանյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2003թ., էջ 297):

³⁷Տե՛ս Ա. Շ. Հարությունյան, ՀՀ մունիցիպալ իրավունք, Եր., 1999թ., էջ 90

³⁸ Հետաքրքիր է, որ իշխանությունների տարանջատման արդեն «հնացած» տեսությունը վերափոխելու կոչն առաջինը արեց համրային-իրավական պրակտիկան դեռևս 19-րդ դարի կեսերին... 1831թ Թեղիական Սահմանադրությունը հոչակում էր մունիցիպալ իշխանությունը [համրային] իշխանության շորրորդ ճյուղ:

բոլոր միավորներում՝ շրջաններում և համայնքներում, որոնք և հանդիսանում են տեղական ինքնակառավարման փոխգործակցող և հարաբերականորեն ինքնուրույն նակարդակներ:

Մունիցիպալ համակարգի վիճահարույց խնդիրներից է եղել և մնում երևան քաղաքի իրավական կարգավիճակը:

Դամապետական նշանակություն ունեցող երևանում պետք է գործի կառավարման այնպիսի մողել, որը հնարավորինս կրացարի (կնվազեցնի) մի կողմից՝ ՀՀ Նախագահից երևանի քաղաքապետի կազմակերպական և քաղաքական կախվածության, մյուս կողմից՝ նրանց միջև հակասությունների ժագման դեպքում իշխանական-քաղաքական ծգնաժամի առաջացման հնարավորությունները:

Ըստ ԱժԴ-ի նախագծի 47-րդ հոդվածի՝ երևան քաղաքում և քաղային համայնքներում ինքնակառավարումն իրականացվում է քաղաքային և քաղային ավագանիների, քաղաքապետի և քաղապետի ուղղակի ընտրության միջոցով:

Յուրահատուկ հակակշռող կառուցակարգ է առաջարկում ՄԱԿ-ի նախագծի 144-րդ հոդվածը. ըստ այդ՝ Աժ-ն Կառավարության առաջարկով և ՍԴ-ի եզրակացության հիմնա վրա որոշում է ընդունում երևան համայնքի դեկավարի պաշտոնակության և/կամ երևան համայնքի ավագանու լիազորությունների ժամկետի կրծատնան մասին: Այդ դեպքում ՀՀ Նախագահը ոչ ավելի, քան 90 օր ժամկետով նշանակում է երևան համայնքի դեկավարի պաշտոնակատար:

Կուալիցիայի նախագծի 121 հոդվածը (1-ին մաս) նախատեսում է սահմանադրական փոփոխությունների իրականացումը, բացառությամբ Սահմանադրության մի շարք հոդվածների, նաև օրենսդրական ճանապարհով, որի նախաձեռնությամբ կարող են հանդես գալ Աժ պատգանավորների ընդհանուր թվի առնվազն 1/3-ը կամ ՀՀ Նախագահը: Այս դեպքում փոփոխություններ նախատեսող օրինագիծը ընդունվում է Աժ պատգանավորների ընդհանուր թվի առնվազն 2/3-ով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՍԱՍ

Alea jacta est.³⁹

Սահմանադրական փոփոխությունների համառոտ ակնարկը, այսպիսով, որոշ չափով բացահայտում է Սահմանադրության դրական և բացասական կողմերը նախազծերի համեմատ, որոնց համեմատական-համակարգային վերլուծությունը եզրահանգում է հետևյալ ընդհանուրություններին.

- անհրաժեշտ է մշակել և ամրագրել Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքների իրացման առավել գործուն իրավական (սահմանադրական) երաշխիքների հաղորդելով Սահմանադրությամբ ժողովրդավարական նոր որակներ.
- պետական իշխանության համակարգում իշխանության երեք թևերի միջև հակակշռման և գաղումների կառուցակարգերի նախատեսում և գործունեության իրավական-կազմակերպական ինքնուրույնության հստակեցում.
- հանրային իշխանության լոկալ համակարգերի (տեղական ինքնակառավարման մարմինների) գործունեության համար նյութական և կազմակերպական իրական և էական երաշխիքների սահմանում.
- Սահմանադրության որոշ դրույթների իրավաբանական ճշգրտման անհրաժեշտություն (օրինակ՝ Սահմանադրության 5, 6, 103 և այլ հոդվածներ):

Ծիշտ է, հասարակության զարգացման գործունները (տնտեսական օրինաչափություններ, քաղաքական գործընթացներ, սոցիալական մշակույթ և այլն) հիմնականում արտադրավական են, սակայն Սահմանադրությունը ևս՝ որպես սոցիալական-պետական ծրագիր և մեթոդաբանական ուղղուցույց, իրավաչափորեն ներազդելով հասարակական հարաբերությունների վրա, կարող է ուղղորդել դրանք առաջընթացի ճանապարհով՝ զարգացման հեռանկարներ ուրվագծելով հասարակական կյանքի համար ընդհանրապես, նվազեցնելով տնտեսության անկման և քաղաքական ճգնաժամների իրավակորությունները:

Խոսքը ժողովրդինն է. ձայն բազմաց՝ ձայն աստծո:

Օգտագործված գրականության ցանկ

Իրավական ակտեր

Նորմատիվ ակտեր (նախագծեր)

1. 1995թ. ՀՀ Սահմանադրություն
2. Դայաստանի անկախության մասին հոչակագիր 23.08.1998թ.
3. Իշխող քաղաքական կուլյուշիայի սահմանադրական փոփոխությունների նախագիծ
4. Միավորված աշխատանքային կուսակցության սահմանադրական փոփոխությունների նախագիծ
5. «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության սահմանադրական փոփոխությունների նախագիծ
6. ՈԴ 1993թ. Սահմանադրություն
7. Խոտլիայի 1947թ. Սահմանադրությունը
8. ԳՖՀ 1949թ. Սահմանադրությունը
9. ՀԱՍՏ 1978թ. Սահմանադրություն
10. Միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենք (28.07.2000թ.)
11. Օտարերկրյա ներդրումների մասին ՀՀ 1994թ. օրենք (04.06.1994թ.)
12. Շահութահարկի մասին ՀՀ 1997թ. օրենք (30.09.1997թ.)
13. Դատախազության մասին ՀՀ 1998թ. օրենք (03.08.1997թ.)
14. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրը (01.07.1998թ.)
15. Օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին ՀՀ օրենք (17.06.1994թ.)

Միջազգային իրավական ակտեր

1. Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիա
2. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիր

³⁹ Վիճակը նետված է (լատ.):

3. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիր
4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Եվրոպական կոնվենցիա
5. Բազմաբաղաքացիության դեպքերի կրօնատման և բազմաբաղաքացիության դեպքում գինվորական պարտականությունների մասին 1963թ. կոնվենցիա
6. Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին 1998թ. կոնվենցիա (Օրիուսի կոնվենցիա)
7. Քաղաքացիության մասին 1994թ. կոնվենցիա

Տեսական աղյուրներ

1. ՀՀ սահմանադրական իրավունք, պատ. Խմբ. Ն. Ա. Այվազյան, Եր., 2003
2. Ա. Գ. Վաղարշյան, Դայաստամի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Եր., 2003
3. Վ. Ն. Այվազյան, Մարդու իրավունքներ, Եր., 2002
4. Ն. Ա. Մաշկին, Յին Յոռմի պատմություն, Եր., 1951
5. Գ. Ս. Ղազինյան, Ա. Ս. Դիլբանյան, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Եր., 2003
6. Ա. Շ. Դարությունյան, ՀՀ Սումիցիպալ իրավունք, Եր., 1999
7. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը ՀՀ պատմությունը և դրա կատարությունը, Եր., 1996
8. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը ՀՀ պատմությունը և դրա կատարությունը, Եր., 2000. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը, Եր., 2000.
9. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը ՀՀ պատմությունը և դրա կատարությունը, Եր., 1997
10. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը ՀՀ պատմությունը և դրա կատարությունը, Եր., 1993
11. ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը ՀՀ պատմությունը և դրա կատարությունը ՀՀ Սահմանադրությունը և դրա կատարությունը, Եր., 1996

Պետություն և իրավունք N3(17) 2002թ.

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այլևս պատմություն է անցածը, պատմություն է մեր ժողովրդի անցած ուղին՝ լի զարգացնանք խոշնորոշող արգելքներով, լի պատմական սև էջերով։ Մեկ է, հայկական լեռնաշխարհի հողին ի սկզբանե տիրացած մեր ժողովուրդը քայլում է դեպի առաջ՝ ինքը կերտելով իր իսկ պատմությունը, ինքը ստեղծելով սեփական զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ։ Եվ այսպես՝ հազարամյակներ։ մինչև 21-րդ դար։ Այսօր հայ ժողովուրդն ունի իր պետականությունը, բարիդրաժիական և ջերմ հարաբերություններ է հաստատել այլ պետությունների հետ, ունի իր իրավագիտական կազմը։ Իրավական համակարգը և քայլում է ժամանակին համընթաց ու բավարարում է քաղաքացիական հասարակության առաջադրվող պահանջները։

«Կա պետություն՝ կա իրավունք, չկա պետություն՝ չկա իրավունք»։ Դեկավարվելով այս սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս հայ ժողովրդի, ստեղծել է իր Սահմանադրությունը, որն ունի գերակայություն ողջ իրավական համակարգի նկատմամբ և օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով։ Դրանով են կարգավորվում մի կողմից՝ մարդու և հասարակության, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև առաջացող հարաբերությունները, ինչպես նաև հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները։ Հայաստանի Հանրապետությունն արագ ինտեգրվում է միջազգային կառույցներին, և դրանով նրա առջև դրվում են որոշակի պահանջներ, դրվում են միջազգային պարտավորություններ, որոնք, ըստ 1969թ. Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայուն ամրագրված սկզբունքների, պետք է կատարվեն բարեխնդորեն։ Բայց այդ՝ բազում արհավիրքներ տեսած հայ ժողովուրդը շարունակում է զարգանալ, և դրանով իսկ պայմանավորվում է պահանջը՝ կարգավորելու առավել կարևոր հասարակական հարաբերությունները իրավաբանորեն բարձր մակարդակով։ Դրա համար էլ այսօր Հայաստանի Հանրապետությունը կանգնել է լուրջ խնդրի առջև, այն է՝ կատարել փոփոխություններ Սահմանադրության մեջ, թե՝ թողնել այն նույնը։

Առաջարկվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թվով 3 նախագծեր. 1-ինը՝ քաղաքական կոալիցիայի կողմից, 2-րդը՝ ՄԱԿ-ի կողմից և 3-րդը՝ ԱՌ պատգամավոր Ա. Սադոյանի կողմից։

Սահմանադրական բարեփոխումների շուրջ քննարկումները, անշուշտ, միայն դրականորեն կարող են անդրադառնալ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու գործընթացի վրա։

2.ՆԿԱՐԱԳԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Կուլտուրան գիտության այն կատեգորիաներից է, որը չունի միանշանակ բնորոշում։ Անդրադառնալով ժամանակակից կուլտուրային կարելի է միանգամից նկատել, որ այսօր դժվար է գտնել մի այնպիսի երևույթ, որն իր մեջ ընդգրկեր իրար այդքան հակասող նեկանքանություններ, ինչպիսին կուլտուրան է⁴⁰։ Իսկ կուլտուրան իր մեջ ներառում է նաև սահմանադրական-իրավական կուլտուրան, որը բազմասեկու երևույթ է և սերտորեն կապված է քաղաքական և իրավական կուլտուրայի հետ ու հաճախ չի անջատվում դրանցից։ Կարելի է առանձնացնել սահմանադրական-իրավական կուլտուրայի այնպիսի դրսարումներ, որոնք անհսկելիրեն կապված են Սահմանադրության որպես պետության հիմնական ակտի հետ։ Դրանք թույլ են տալիս ավելի խորը հասկանալ Սահմանադրության էությունը և դերը։ Օրինակ՝ Եվրոպական կուլտուրայում առանձնացվում է հումանիզմը, իսկ Վերածննդի ժամանակաշրջանի կուլտուրայի կենտրոնական միտքը մարդու արժանապատվության պաշտպանությունն էր⁴¹։ Վարքագծի կանոնը, որը կուլտուրայի նորմ չի դարձել, չի ընդգրկվում իրավունքի մեջ⁴²։ Ուրեմն Սահմանադրությունը պետք է հաշվի առնի տվյալ հասարակության իրավագիտակցությունը, իրավական կուլտուրան՝ դրանով իսկ պահովելով իր արդյունավետ գործողությունը երկար տարիների ընթացքում։

Երկրի կյանքում Սահմանադրության նշանակության վերաբերյալ, իհարկե, նոտեցումները տարբեր են։ Որոշ երկրներում պայքար է մղվում դեմոկրատիայի համար, քանի որ տվյալ հասարակությունները գտնում են, որ ամեն ինչ կախված է այն գաղափարաներից, որոնցով դեկավարվում է Սահմանադրությունը։ Բայց թթի վրա գրվածը պետք է իրականացնել։ Օրինակ՝ Բուլղարիայում, Ռումինիայում կոմունիստական ռեժիմի տարիներին սահմանվում էին այնպիսի իրավունքներ և դրանց իրականացման երաշխիքներ, որոնք նույնիսկ չկային արևոտյան եվրոպայի երկրներում, բայց իրականում

⁴⁰ Сальников В.П. Правовая культура: В. кн.: “Теория государства и права”, курс лекций. Под редакцией профессоров Н.И. Матузова и А.В. Малько. Москва: Юристъ, 1997

⁴¹ “Конституционное (государственное) право зарубежных стран”, издание 2-е, исправленное и дополненное, том 1, общая часть, под редакцией проф. Б.А. Страшуня

⁴² Л.И. Спиридонов, “Теория государства и права”. Учебник, М.: “Проспект”, 1996, ст.121

դրանք չեն գործում⁴³: Անցումային ժամանակաշրջանում գտնվող մեր հանրապետությունը ևս սպասում է դեմոկրատիայի հաստատմանը և սահմանադրական այս բարեփոխումների հետ է կապում լավ ապագայի հույսերը:

Սահմանադրությունն ունի պրեամբուլա (ներածություն), հիմնական մաս (հիմնական բովանդակությունը), եզրափակիչ և անցումային դրույթներ:

Սահմանադրությունը, բացի այն, որ օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, այն կատարում է նաև մի շարք սոցիալ-քաղաքական ֆունկցիաներ: Առաջին ֆունկցիան, որ կատարում է Սահմանադրությունը, դա, անշուշտ, իրավաբանականն է. այն երկրի իրավունքի գլխավոր աղբյուրն է, երկրորդ ֆունկցիան քաղաքականն է, մասնավորապես՝ Սահմանադրությունն է սահմանում պետության կառուցվածքը, նրա հարաբերությունները առանձին մարդկանց և նրանց խմբերի հետ: Սահմանադրությունը կատարում է նաև գաղափարական-դաստիարակչական ֆունկցիա: Այն հռչակում է արժեքներ ու ստիպում մարդկանց հետևել դրանց, եթե դրանք թանկ են նրանց համար:

Ներկայացված 3 նախագծերն էլ համապատասխանում են այս պահանջներին:

Պետության ինքնիշխանություն ասելով՝ պետք է հասկանալ պետության գերիշխանությունը երկրի ներսում և անկախությունը արտաքին հարաբերություններում⁴⁴: Պետության միջազգային պարտավորությունների պահպանման պայմանով դրա արտաքին քաղաքական գործունեության ազատությունը ոչ թե միջազգային հարաբերություններում նրա անկախության սահմանափակումն է, այլ դրա հաստատումը և ապահովումը, քանի որ միջազգային իրավունքի նորմերն ուղղված են հենց միջազգային շիման մեջ բոլոր պետությունների անկախության ապահովմանը, սակայն այս տեսակետը զնալով մերժվում է առայժմ երկու ոլորտներում՝ շրջակա միջազգային պահպանության և մարդու իրավունքների: Բոլոր 3 նախագծերի հեղինակներն են, գնալով ճիշտ ուղղությունը, «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում ընդգրկել են դրույթներ, որոնք անմիջականորեն վերցված են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրից: Դրական է նաև թիվ 1 և թիվ 2 նախագծերում ամրագրված այն դրույթը, որ յուրաքանչյուր որ իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանի աջակցությունը: Իհարկե, օմբուդսմենի ինստիտուտի սահմանադրական մակարդակով ամրագրումը, անխոս, կարևոր խթան է Հայաստանի Հանրապետությունում ստեղծված և դեռ մեկ տարին չըլորած այս ինստիտուտի հետագա արդյունավետ գործունեության համար:

Սակայն բոլոր 3 նախագծերն էլ կարծես թե ստացվել են ավելի երկարաշունչ, ինչը ողջունելի չէ, քանի որ ինքան դրույթները մանրամասնություն են, այնքան ավելի է մեծանուն դրանցում բացքողումների և սխալների հավանականությունը: Օրինակ՝ թիվ 1 և թիվ 2 նախագծերում նախատեսվում է վերացնել գործող Սահմանադրության 78-րդ հոդվածը և փոխարենը առաջարկվում 83-րդ հոդվածին ավելացնել նաև ու դրանում սահմանել ոլորտներ, որոնք բացառապես պետք է կարգավորվեն օրենքի մակարդակով: Զկաղապարզելով միակողմանի մոտեցմանք՝ այս հարցը քննարկենք երկու տեսանկյունից: Եթե ելնենք այն հանգանանքից, որ կառավարությունը, ընդունելով օրենքի ուժ ունեցող որոշումներ, դրանով նսենացնում է տվյալ ոլորտի կարևորությունը, ապա կսխալվենք, քանի որ Ազգային ժողովի կանոնակարգը նախատեսում է օրենքի ընդունման բավականին բարդ ընթացակարգ՝ 3 ընթերցում, ընդ որում պատգամավորների ընդհանուր թիվ կեսից ավելի կողմ ձայների առկայություն, որը գործնականում ապահովելը շատ դժվար է, մինչդեռ կարելի է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որից հետո, պահպանելով սահմանված ընթացակարգը, ընդունել օրենք և դրանով այդ որոշման գործողությունը դադարեցնել: Ուրեմն, մեր կարծիքով, ավելի ճիշտ է 3-րդ նախագծի մոտեցումը, այն է՝ պահպանել գործող Սահմանադրության 78-րդ հոդվածը անփոխիս: Թիվ 1 նախագծի 83.3-րդ հոդվածով նախատեսվող սահմանափակումները մյուս կողմից կարելի է արդարացնել, եթե հաշվի առնենք, որ ՀՀ Նախագահը կարող է ընդունել հրամանագրեր բոլոր ոլորտներում, այդ թվում նաև՝ 83.3-րդ հոդվածով ոլորտներում, ու դա կարող է շարաշահումների տեղիք տալ: Բայց այս հոդվածը համադրենք նույն նախագծի մեկ այլ՝ 55-րդ հոդվածի 13-րդ կետի 2-րդ և 3-րդ մասերի հետ: Ըստ այդ հոդվածի՝ զինված ուժերի օգտագործման կամ ռազմական դրության հայտարարվելու դեպքերում իրավունքի ուժով անհապաղ գումարվում է Ազգային ժողովի հատուկ նիստ, որը կընդունի օրենք՝ սահմանելով ռազմական դրության իրավական ռեժիմը: Կատացվի, որ նաև դեպքերում, առաջնորդվելով Սահմանադրության 71-րդ հոդվածում առաջարկվող փոփոխություններով, օրենք պետք է ընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ, բայց արդյոք հնարավո՞՞ է այդ կարծ ժամկետում ապահովել պատշաճ օրենսդրական գործընթաց 3 ընթերցումով կամ ձայների ընդհանուր թիվ կեսը, մինչդեռ Նախագահն այդ կապակցությամբ կարող է ընդունել հրամանագիր, որը, ճիշտ է, միանձնյա է, բայց նաև պարագայում առավել ողջամիտ: Ուստի ճիշտ կիներ կամ թիվ 1 և թիվ 2 նախագծում առաջարկվող համապատասխանարար 83.3-րդ և 83.1-րդ հոդվածներում ամրագրել՝ «բացի ռազմական և արտակարգ իրադրությունների» արտահայտությունը,

⁴³ В.Е. Чиркин, “Конституционное право зарубежных стран”, Юристъ, 1997

⁴⁴ “Теория государства и права”, курс лекций. Под редакцией проф. Н.И. Матузова и А.В. Малько. Юристъ, 1997

կամ Նախագահին ևս հնարավորություն տալ հրամանագիր ընդունել: Ընդ որում, սա այն դեպքում, եթե Սահմանադրության 45-րդ հոդվածում նշվում են որոշակի հոդվածներ, մասնավորապես՝ 17 (կյանքի հրավունք), 19 (մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան վերաբերմունքի և պատժի), 20 (անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջանտություններից, իր պատիկը և բարի համբավը ունձգություններից պաշտպանելու հրավունք), 39 (խախտված իրավունքները վերականգնելու և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության հրավունք) և 41-43, որոնք չեն կարող սահմանափակվել և ոչ մի դեպքում, իսկ մնացած իրավունքները, օրինակ՝ ազատ տեղաշարժվելու (22) և բնակավայր ընտրելու կամ այլ անձանց հետ միավորումներ կազմելու հրավունքը (25), կարող են սահմանափակվել, եթե դա բխում է պետության, հասարակության և հենց այդ անձանց անվտանգության շահերից:

Դայաստանի Հանրապետության Սահմանադրության 71-րդ հոդվածում նշվում են այն բոլոր բացառությունները, որոնց վերաբերյալ Ազգային ժողովն իրավունք ունի օրենք ընդունել նիստին ներկա պատգամավորների ձայների 2/3 մեծամասնությամբ՝ ձայների որակյալ մեծամասնությամբ: Թիվ 1 նախագիծը ելել է ճիշտ մոտեցումից՝ գտնելով, որ ավելի լավ է պետության համար այդ ծանր իրավիճակում ընդունել օրենք ձայների պարզ մեծամասնությամբ, քան այդ իրավիճակում թույլ տալ Նախագահին գործելու միանձնյա:

Գործող Սահմանադրության 71-րդ հոդվածում նշվում է, որ օրենքները և Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Նոյն հոդվածում նշված են նաև բացառություններ, որոնց ընդունումն իրականացվում է այլ կարգով: Այս դեպքում Սահմանադրությունն ի նկատի ունի ձայների որակյալ մեծամասնությունը, որի մասին, սակայն, ոչ մի նշում չի պարունակում այդ հոդվածը: Ավելին, կա հակասություն գործող Սահմանադրության 71-րդ հոդվածի և օրինակ՝ 72-րդ կամ 74-րդ հոդվածների միջև: Այսպես՝ հոդված 72-ը սահմանում է, որ հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում Ազգային ժողովը վերադարձված օրենքը վերստին ընդունում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կամ հոդված 74-ը սահմանում է, որ կառավարության անվտահություն հայտնելու մասին որոշումն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Բայց չէ՝ որ հոդված 71-ը դրանք դասել է բացառությունների շարքը, որոնք չեն կարող ընդունվել պատգամավորների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ: Տրամաբանական է, որ այս երկու դեպքերում էլ պետք էր նշել ձայների ոչ թե մեծամասնություն, այլ որակյալ մեծամասնություն: Թիվ 1 և թիվ 2 նախագծերը ընդլայնել են գործող Սահմանադրության 71-րդ հոդվածում սահմանված բացառությունները, բայց դարձյալ թե՝ մեկը, թե՝ մյուսը չեն պարունակում նշում այն մասին, որ որպես բացառություն նշված հարցերի վերաբերյալ օրենքներ կամ որոշումներ Ազգային ժողովն ընդունում է ձայների որակյալ մեծամասնությամբ: Ընդ որում, դա նշված չէ ոչ թիվ 1 նախագծի հոդված 75-ում առաջարկվող փոփոխություններում, և ոչ էլ թիվ 2 նախագծի հոդված 95-ում: Այդ մասին նշումներ չկան նաև դրանցում որպես բացառություն նախատեսված հոդվածների բովանդակությունների մեջ: Ավելին, թիվ 1 նախագծի 87 հոդվածում, որտեղ առաջարկվում է փոփոխել գործող Սահմանադրության 84-րդ հոդվածի 2-րդ նախադասությունը, չի շտկվում այն հակասությունը, որը բխում է հենց նոյն նախագծի 75-րդ հոդվածից, որտեղ 84-րդ հոդվածը նշվում է որպես բացառություն, որով նախատեսված հարցերի վերաբերյալ որոշումներ Ազգային ժողովը չի կարող ընդունել ձայների պարզ մեծամասնությամբ, այսինքն՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությամբ մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: Այս դեպքում անհրաժեշտ է շտկել գործող Սահմանադրության 84-րդ հոդվածի նաև առաջին նախադասությունը: Նոյնը վերաբերում է նաև գործող Սահմանադրության 79 հոդվածի 1-ին մասին, որով սահմանվում է, որ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ իր լիազորությունների ամբողջ ժամկետով ընտրում է Ազգային ժողովի նախագահ: Դա ևս նախատեսված է որպես բացառություն և թիվ 1, և թիվ 2 նախագծերում:

Թիվ 2 նախագծում առաջարկվում է 79-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընտրում է Ազգային ժողովի նախագահին, նախագահի երկու տեղակալներին»: Եթե հաշվենք, որ այս բացքորումը կշտկվի, ապա ամեն դեպքում արդարացված չէ, որ Ազգային ժողովի նախագահը և նրա երկու տեղակալները ընտրվեն ձայների ընդհանուր թվի 2/3-ով, իսկ եթե այս հոդվածի շարադրանքը մնալու է նոյնը, ապա պետք է 71-րդ հոդվածում նախատեսվող բացառությունների շարքից հանել 79-րդ հոդվածի 1-ին մասը: Նոյն տրամաբանությամբ պետք է առաջնորդվել նաև գործող Սահմանադրության 84-րդ հոդվածը քննարկելիս: Ուղղակի անտրամաբանական է, որ Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների որակյալ մեծամասնությամբ անվտահություն հայտնի կառավարությանը: Եվ սա հատկապես այն դեպքերում, եթե, ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, Ազգային ժողովի յուրաքանչյուր նոր ընտրության ժամանակ հանդես է գալիս մի հզոր կուսակցություն կամ

կուսակցությունների դաշինք, որը կարողանում է ստանալ ձայների 50%-ից ավելին: Օրինակ՝ ՀՀԾ-ն՝ 1995թ. կամ «Միասնություն» դաշինքը՝ 1999թ.: Նման պարագայում կառավարության անվտահություն հայտնելը գործնականում կդառնա ամիսնար, իսկ դա չի բխում ոչ ժողովորի շահերից, ոչ այտության շահերից, առավել ևս իշխանության երեք թերի միջև գործող «զսպումների և հակակշիռների» մեխանիզմի արդյունավետ գործունեությունից: Կամ նույն տրամաբանությունն է գործում նաև Ազգային ժողովի նախագահ ընտրելիս: Եթե հաշվի առնենք, որ թիվ 1, թիվ 2 նախագծերում առաջարկվում է պատգամավորների թիվը դրանել 121 նախկին 131-ի փոխարեն, ապա այս դեպքում, անշուշտ, պետք է հաշվի առնել մեծամասնական և հանամասնական ընտրական հանակարգերի միջև թվային հարաբերակցությունը, իսկ այս պայմաններում ձայների որակյալ մեծամասնություն ապահովելու պելի դյուրին է դառնում: Եվ սա այն պայմաններում, երբ նոր ընտրական օրենսգրքի նախագծում առաջարկվում է կուսակցություններին Ազգային ժողով ընտրվելու համար 7%-ի պատճեց գործող 5%-ի փոխարեն: Թիվ 1 նախագծի հոդված՝ 75-ում նշված բացառություններից է նաև գործող Սահմանադրության 83-րդ հոդվածի 3-րդ կետը, ըստ որի՝ Ազգային ժողովը Սահմանադրական դատարանի եզրակացության իիման վրա կարող է դրաբարեցնել Սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամն լիազորությունները, համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել նրան: Տվյալ դեպքում եթե սահմանվի ձայների որակյալ մեծամասնություն, ավելի կրթվարանա սահմանադրական դատարանի անդամին կալանավորելը, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը, որը չի բխում գործի քննության շահերից, բայց փոխարենը մեծանում է նրանց անձեռնմխելիությունը:

Դայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հատուկ հոդված է նվիրել հոդի նկատմամբ սեփականության իրավունքին: Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրվել է. «հոդի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»: Այս մոտեցումը կարելի է համարել արդարացված, սակայն ոչ մի պարագայում չի կարելի արդարացնել թիվ 1, թիվ 2 նախագծերում ամրագրված այն մոտեցումը, որ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ հոդի սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով: Ստացվում է, որ Սահմանադրությունը, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով, բույլատրում է օտարերկրացիների և պատրիդների սեփականության իրավունքը հոդի նկատմամբ և սահմանափակում բույլատրում հրավարանական ուժի տեսանկյունից ավելի ցածր մակարդակում գտնվող ակտով՝ օրենքով: Իսկ 3-րդ նախագիծը առհասարակ նախատեսում է երկրադաքացիության ինստիտուտը, որն արդեն վաղուց մերժվում է եվրոպական երկրների կողմից, և կստացվի, որ երկրադաքացին կարող է սեփականության իրավունքով հոդ ունենալ Դայաստանի Հանրապետությունում:

Քաղաքացիությունը պետության հետ անձի կայուն իրավական կապն է՝ հիմնված պետության կողմից տվյալ անձին որպես իր քաղաքացի իրավաբանական ճանաչման վրա, որն օրենքով նախատեսված դեպքերում պետության և քաղաքացու համար առաջ է բերում փոխադարձ իրավունքներ, պարտականություններ և պատասխանատվություն: Օտարերկրյա քաղաքացիների համար «Դայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» օրենքը (1994թ. հունիսի 17) սահմանում է կացության հետևյալ կարգավիճակները՝

- ա) ժամանակավոր,
- բ) սովորական,
- գ) հատուկ,
- դ) բացարիկ:

Կացության հատուկ կարգավիճակ տրվում է ծագումով հայ օտարերկրյա քաղաքացիներին, ինչպես նաև այն անձանց, ովքեր ցանկություն են հայտնում Հայաստանի Հանրապետությունում զբաղվելու տնտեսական և մշակույթային գործունեությամբ: Այս կարգավիճակի սահմանումը նպատակ ունի պայմաններ ստեղծել սփյուռքի հայությանը և օտարերկրյա գործարարներին հանրապետության տնտեսական և մշակույթային զարգացմանը ներգրավելու խնդրում: Եթե համարենք նույնիսկ, որ Սահմանադրության թիվ 1 և թիվ 2 նախագծերում ձևակերպված այն հոդվածը (հոդված 32), որ օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ հոդի սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել օրենքով, տրվել է շահագրգռելու օտարերկրյա քաղաքացիներին, ապա դա արդարացված չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության Հոդային օրենսգրքի 76 հոդվածի 4-րդ կետում նշվում է, որ հոդամասերը վարձակալության իրավունքով տրամադրվում են՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,
2. Հայաստանի Հարապետության և օտարերկրյա իրավաբանական անձանց,
3. օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց,
4. օտարերկրյա պետություններին և միջազգային կազմակերպություններին:

Պետք է այստեղ ուշադրությունը իրավիրել այն հանգամանքի վրա, որ առանձնահատուկ կերպով շեշտվում են Հայաստանի Հանրապետությունում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք, որոնք նաև սեփականության իրավունք ունեն հողի նկատմամբ:

Ենթադրությունը կազմության մեջ՝ հոդված 28-ում, գրված այն ձևակերպումը, որ հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բայց կա նաև այլ՝ ավելի ճիշտ տարրերակ, որն է՝ ինպերատիվ կերպով արգելել օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ հողի նկատմամբ սեփականության իրավունքը, քանի որ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրքն առանց այն էլ հոդված 48-ի 3-րդ կետում սահմանել է, որ պետության և համայնքների սեփականության հոդամասերի վարձակալությունը չի կարող լինել 99 տարուց ավելի ժամկետով, իսկ դա բավականին երկար ժամկետ է, և նոյնիսկ դիվանագիտական ներկայացուցչությունների համար է դա բավարար, անհրաժեշտության դեպքում կարելի է կատարել վերաձևակերպում, այլ ոչ թե տալ հողը՝ որպես հասարակության գոյության հիմնական միջոց, օտարերկրացուն, եթե այն պետքական է ոչ միայն ներկա, այլ նաև ապագա սերունդների համար՝ որպես պետական տարածքի մի մաս:

Սարդը բնության մասնիկն է: Առանց բնության, նրա ռեսուրսների մարդը գոյություն ունենալ չի կարող: Բնությունը մարդու համար կատարում է էկոլոգիական, տնտեսական և այլ ֆունկցիաներ: Բնություն-հասարակություն փոխներգործության ձևերից են բնօգտագործումը և բնապահպանությունը: Եվ հասարակություն-բնություն փոխներգործության ժամանակ, որքան էլ որ տվյալ հասարակությունը զարգացած լինի, ծագում են որոշակի պրոբլեմներ, որոնց լուծումը ճակատագրական է մարդկության համար: Իսկ այդ պրոբլեմների լուծման կարևոր նախապայմաններից մեկը պետական կամքի առկայությունն է: Իսկ պետության հոգածությունը բնության նկատմամբ դրսորվում է որոշակի իրավական նորմերի սահմանման և դրանց խախտման համար պատասխանատվություն նախատեսելու միջոցով: Հայաստանի Հանրապետության հոգածությունը դրսորվել է շրջակա բնական միջավայրի նկատմամբ գործող Սահմանադրության 10-րդ հոդվածում, որի համաձայն՝ պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը: Տվյալ հոդվածի բովանդակությունը հասկանալի է, բայց լեզվաբանական և իրավաբանական առումով, մեր կարծիքով, այն սխալ է շարադրված, քանի որ պետությունը՝ որպես հատուկ կազմակերպում, օժտված է ինքնիշխանությամբ (ըստ միջազգային իրավական ակտերի), չի կարող ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը, այլ միայն կարող է ստեղծել համապատասխան իրավական դաշտ, բնական պաշարների օգտագործման, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ կարող է միայն վարել որոշակի քաղաքականություն: Ստացվում է, որ ճիշտ կլինի գործող Սահմանադրության տեքստից հանել այդ հոդվածը, քանի որ թիվ 1 նախագծում առաջարկվում է հոդված, ըստ որի՝ «յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրել իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»: Պետությունը վարում է ներկա ու ապագա սերունդների բնապահպանական անվտանգությունն ապահովող քաղաքականություն: Պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար»: Սա անմիջականորեն բխում է Օրիուսի կոնվենցիայից: Եվ, թերևս, անհրաժեշտ է այս հոդվածում «անվտանգությունը» բառից հետո ավելացնել «քնական պաշարների ողջամիտ օգտագործումը և վերարտադրությունը» բառերը, և իմաստը կլինի ամբողջական:

Բացի այդ՝ ողջունելի է նաև, որ, ըստ նախագծի, Հայաստանի Հանրապետությունը հոգածությունը է դրսորվում ոչ միայն ներկա սերունդների, այլև ապագա սերունդների առողջության նկատմամբ, այսինքն՝ վերականգնվել է ԽՍՀՄ 1977թ. և ԽՍՀ 1978թ. սահմանադրություններում ամրագրված այդ ճիշտ մոտեցումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության թիվ 1, թիվ 2, նախագծերում սահմանվում է մարդու իրավունքների անօտարելի և բարձրագույն արժեք լինելը: Սակայն հաճախ անհրաժեշտ է լինում սահմանափակել անձի իրավունքները՝ դրանով հոգալով ողջ հասարակության անվտանգության մասին, և դրանք առավելապես սահմանափակվում են քրեական դատավարության ոլորտում: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսել է դատավարական հարկադրանքի 3 տիպի միջոցներ՝

- ձերբակալում,
- խափանման միջոցներ,
- դատավարական հարկադրանքի այլ միջոցներ:

Ընդ որում, անձին ձերբակալելուց հետո 72 ժամվա ընթացքում պետք է մեղադրանք առաջարկվի (քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 129): Ըստ քրեական դատավարության օրենսգրքի 128 հոդվածի՝ ձերբակալել կարելի է միայն՝

1) անձին, որը կասկածվում է այնպիսի հանցագործության մեջ, որի կատարման համար կարող է նշանակվել պատիժ՝ կարգապահական գումարտակում պահելու, կալանքի, որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով,

2) կիրառված խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալին:

Այսինքն՝ ստացվում է, որ ձերբակալումը կիրառվում է հասարակության համար մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների կատարման մեջ կասկածվողների նկատմամբ: Այս պարագայում Սահմանադրության թիվ 1, թիվ 2 նախագծերը, իհարկե, իրենց իսկ սահմանումով անարդյունավետ են դարձնում իրավապահ մարմինների աշխատանքը, իսկ վերջիններս ել այս դեպքում, տրամաբանական է, դիմելու են անօրինական քայլերի՝ հատկապես ժամկետների հետ կապված: Օրինակ՝ ոչ ժամանակին են հարուցելու քրեական գործ, սիսալ են ֆիքսելու քննչական գործողությունների ժամանակը: Իսկ Սահմանադրության նշված նախագծերով՝ ձերբակալման առավելագույն ժամկետը է սահմանվում 48 ժամը, որը անտրամարանական է, եթե հաշվի առնենք, որ անձի նկատմամբ հիմնավորված կասկած կարող է առաջանալ որոշակի քննչական գործողություններ կատարելուց հետո: Հարցը առավել իրատապ է դառնում, եթե ձերբակալվածին բերման ենթարկելուց հետո 24 ժամվա ընթացքում նրան պետք է մեղադրանք առաջադրվի: Նախագծում տրված շարադրանքից կարելի է եզրակացնել, որ ձերբակալվածն է դատարան բերման ենթարկվում և որի նկատմամբ կարելի է կիրառել կալանք՝ անձի իրավունքներն առավել սահմանափակող միջոց, և սա այն դեպքում, եթե նախարձնությամբ անձի նկատմամբ կան ուղղակի հիմնավորված կասկածներ, բայց ոչ բավարար ապացույցներ անձի կողմից հանցագործությունը կատարելու վերաբերյալ: Այսինքն՝ ընդամենը կասկածի հիմնա վրա անձին կարելի է ենթարկել այնպիսի դատավարական հարկադրանքի միջոցի, որը կարող է գուտ սրբեսների հիմք հանդիսանալ, եթե նա իրականում չի կատարել այդ հանցագործությունը: Իհարկե, նախագիծը փորձել է այս հարցին ճկում լուծում տալ՝ դատարանի վրա դնելով իրավունք կիրառելու ցանկացած խափանման միջոց: Սակայն այդ կերպ ծանրաբեռնվում են դատարանները: Բացի այդ՝ փաստորեն վերացվում է անձին որպես մեղադրյալ ներգրավելու ինստիտուտը, որի նշանակությունը շատ մեծ է քրեական դատավարությունում, և ստացվում է, որ ձերբակալվածին պետք է միանգամից մեղադրանք առաջադրվի: Քանի որ անձին ձերբակալելու արձանագրության մեջ նշվում են ձերբակալվածի կողմից հանցագործության կատարումը հասատող հիմքերը, ուստի ստացվում է, որ դրանում արդեն պետք է նշվեն անձի մեղավորությունը հաստատող բավարար ապացույցներ: Սահմանադրության թիվ 1, թիվ 2 նախագծերը գնում են այն ուղղով, որ կամ կասկածյալի նկատմամբ կիրառվի կալանքը որպես խափանման միջոց, կամ ուղղակի «ձերբակալված» տերմինը տվյալ դեպքում ծիծու չէ, միգուցե պետք է օգտագործել «մեղադրյալ» տերմինը:

Թիվ 1 նախագիծի հոդված 15-ի 4-րդ մասում նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր կալանավորման, ձերբակալման և խուզարկման օրինականությունն ու հիմնավորվածությունը վիճարկել վերադաս դատական ատյանում: Քննարկենք այս հոդվածը: Կալանքը կամ կալանավորումը հարկադրանքի միջոց է, որն առավել սահմանափակում է անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները, դա է պատճառը, որ Յայաստանի Յանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այն կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ և որ կալանավորումը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ՝ քննիչի կամ դատախազի միջնորդության հիմնա վրա կամ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ դատարանում գործը քննելիս (հոդված136, կետ 2): Դա բխում է Սահմանադրության հոդված 18-ից, որտեղ ասվում է, որ մարդը կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ օրենքով սահմանված կարգով: Մինչդեռ դատական փուլերում ընդունված ապօրինի և անհիմն որոշումները դատական կարգով վերացնելու կամ ինչ-որ գործողությունն կատարելու բույսով կատարելու տակալ միջնորդությունը մերժելու հնարավորությունը ստիպում է մինչդատական վարույթն իրականացնող մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց լուրջ, կշռադատված, պատասխանատու կերպով վերաբերվել անհատի իրավունքների և ազատությունների սահմանափակման որոշումների ընդունմանը կամ գործողությունների կատարմանը: Բայց քանի որ կալանքը, ինչպես նշեցինք, կարող է ընտրվել որպես խափանման միջոց միայն նախաքննության կատարման վայրի կամ ձերբակալման վայրի առաջին ատյանի դատարանի կողմից, ուստի թիվ 1 նախագիծի հեղինակները ծիծու են վարվել նշելով, որ անձի կալանավորման որոշումը կարող է բողոքարկվել վերադաս դատական ատյան, այսինքն՝ վերաբնիշ դատարան: Սակայն այս հոդվածում նախատեսվում է հնարավորություն քրեական հետապնդման մարմնի՝ ձերբակալման մասին որոշումը բողոքարկել ոչ թե առաջին ատյանի դատարան, այլ միանգամից վերադաս դատական ատյան, որն անտրամարանական է, կամ էլ նախագիծի հեղինակները պատրաստվում են ձերբակալման մասին որոշում կայացնելու լիազորությունը տալ դատարանին, որը սիսալ կլինի, քանի որ ձերբակալումը պետք է մտցնել այն դատավարական գործողությունների ամբողջության մեջ, որոնք, ըստ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի, իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով արգելված արարքը կատարած ամձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման

մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցների կիրառումը: Ըստ Քրեական դատավարության օրենսգրքի 128 հոդվածի 1-ին մասի՝ ձերբակալումը անձին արգելանքի վերցնելն է, նրան հետաքրնության մարմին կամ վարույթն իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելն է՝ օրենքով որոշված վայրերում և պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար: Այսինքն՝ դատարանին կվերապահվի քրեական հետապնդում իրականացնող մարմին բնորոշ հատկանիշներ, որոնցից հրաժարվեց մեր Սահմանդրությունը 1995թ., երբ սահմանվեց, որ դատարանները միայն արդարադատություն են իրականացնում: Սակայն թիվ 1 նախագծի նույն հոդվածի 3-րդ մասում ասվում է, որ ձերբակալված յուրաքանչյուր ոք պետք է 48 ժամվա ընթացքում բերման ենթարկվի դատարան. ստացվում է, որ անձը պետք է ձերբակալված լինի ավելի վաղ, և տրամաբանական է, որ դատարանը հանդես կգա քրեական հետապնդում իրականացնող մարմին դերում, ուստի նման դեպքում կրացառվի ձերբակալելու լիազորության տրամադրումը դատարանին, և անհմաստ կդառնա այն ձևակերպումը, որ ձերբակալան օրինականությունն ու իհմնավորվածությունը պետք է վիճարկվի վերադաս դատական ատյանում: Ուստի առաջարկում ենք «վերադաս դատական ատյան» արտահայտությունը փոխարիմնել «դատարան» տերմինով, հակառակ դեպքում ստացվում է, որ քաղաքացիները միահամար պետք է դիմեն վերաբերնի դատարան:

Իսկ ինչ վերաբերում է խուզարկմանը, ապա ներկայիս Սահմանադրության 18-րդ հոդվածում սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Հոդված 21-ում սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք.... բնակարանը կարող է խուզարկել միայն դատարանի որոշման հիմնան վրա՝ օրենքով սահմանված կարգով: Թիվ 1 և թիվ 2 նախագծերի հեղինակները, զնալով նույն ուղղությունը, այս երկու հոդվածները միացել են մեկ հոդվածի մեջ ու սահմանել են, որ մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Դայաստանի Դանրապետության Քրեական դատավարության օրենսգիրքը տարբերում է խուզարկության 3 տեսակ՝

- շենքի կամ այլ տեղի խուզարկություն,
- բնակարանի խուզարկություն,
- անձնական խուզարկություն:

Ըստ որում, եթե շենքի կամ այլ տեղի խուզարկությունը կատարվում է միայն քննիչ՝ խուզարկություն կատարելու մասին որոշման հիմնան վրա, ապա անձնական խուզարկությունը կարող է կատարվել նաև առանց այդ մասին որոշում կայացնելու: Բայց Քրեական դատավարության օրենսգիրքը, հետևելով Դայաստանի Դանրապետության Սահմանադրության 21-րդ հոդվածով, սահմանել է, որ բնակարանի խուզարկությունը կատարվում է միայն դատարանի որոշմամբ: Եթե վերլուծենք թիվ 1 նախագծի հոդված 15-ը, ապա ակներև է դառնում, որ դրանում որևէ խոսք չկա բնակարանի խուզարկության, առվել ևս դրա մասին որոշումը դատարանի կողմից կայացվելու վերաբերյալ: Միայն նշվում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ... խուզարկության որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը վիճարկել դատական ատյանում: Այս շարադասությունից լեզվաբանական առումով բխում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական կարգով վիճարկել միայն իր, այսինքն՝ անձնական խուզարկման մասին որոշման օրինականությունն ու իհմնանավորվածությունը, և այն էլ վերադաս դատական ատյանում, ինչը, իհարկե, սխալ է: Պետք է նախ շտկվի «վերադաս դատական ատյան» հասկացության հետ կապված շփոթությունը, և այս հոդվածում պետք է ավելացվի այն դրույթը, որ բնակարանը կարող է խուզարկել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Ի դեպք, նախագծերի որոշ հոդվածներում տեղափոխված է «դատարանի որոշմամբ» ու «օրենքով սահմանված կարգով» արտահայտությունների շարադասությունը: Օրինակ՝ թիվ 1 նախագծի հոդված 23-ում շարադրված է բնակարանը կարող է խուզարկել միայն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշմամբ: Ստացվում է, որ «դատարանի որոշմամբ» արտահայտությունն ուղղակի բացահայտում է օրենքով սահմանված կարգը, մինչդեռ ամփոփելու դատարանի որոշումը այդ քննչական գործողությունը սկսելու համար, որը պետք է իրականացվի օրենքի պահանջներին խստ համապատասխան:

Ողջունելի է, որ թիվ 1 նախագծի հոդված 19-ում սահմանվում են, որ յուրաքանչյուր ոք հարցաքննության, ձերբակալան, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք ունի: Ստացվում է, որ յուրաքանչյուր անձ, որն անցնում է գործով՝ անկախ իր դատավարական կարգավիճակից, կարող է պաշտպան ունենալ, ինչը երաշխավորում է գործի քննության ընթացքում նրա նկատմամբ քրեական հետապնդման մարմինների կողմից ծննդան գործադրման բացառումը կամ նրանց կողմից այն հանգամանքի չարաշահումն առ այն, որ անձը չի տիրապետում դատավարական օրենքի դրույթներին և չի կարող իրականացնել իր իրավունքների պահանջությունը: Մինչդեռ գործող Սահմանադրության 40-րդ հոդվածի 2-րդ մասում ասվում է, որ «յուրաքանչյուր ոք ձերբակալան, կալանավորման և մեղադրման պահից պաշտպան ունենալու իրավունք

ունի», իսկ քրեական դատավարության օրենսգիրը, հետևելով Սահմանադրության այս ձևակերպմանը, ուղղակիորեն չի նախատեսել, օրինակ, վկայի, տուժողի կողմից պաշտպան ունենալու իրավունք: Եվ նման պայմաններում չի բացառվում, որ քրեական գործով որպես վկա իրավուրված անձը մերկացվի որպես հանցագործություն կատարած անձ: Սա, իհարկե, գործի քննության և հանցագործությունների բացահայտման տեսանկյունից արդյունավետ է, բայց երբ բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտը սահմանում է, որ մարդու իրավունքները բարձրագույն արժեք են, տվյալ պարագայում անարդարացի է մարդուն, մոլորության մեջ գցելով, նրանից ցուցունք կորցել: Իսկ պաշտպանի առկայության դեպքում այդ անձին ցույց է տրվում որակյալ իրավաբանական օգնություն, և հնարավորություն է ստեղծվում այդ անձի համար ազատորեն չպատասխանելու այն հարցերին, որոնք ուղղված են իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ, որը դժվար է կատարել միայնակ՝ հայտնվելով քրեական գործով վարույթն իրականացնող պաշտոնատար անձի հետ դեմ առ դեմ:

Գործադիր իշխանություն և դատական համակարգ փոխարարելություններում կարևոր դեր է խաղում Արդարադատության խորհուրդոց: Գործող Սահմանադրությանը արդարադատության նախարարի, որը կառավարության անդամ և գործադիր իշխանության մերկայացուցիչ է, առաջարկով է Արդարադատության խորհուրդը կազմում և հանրապետության նախագահի հաստատմանը ներկայացնում դատավորների պաշտոնական պիտանելիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա էլ կատարվում են նշանակումները: Դրանով դատավորները, փաստորեն, կախվածության մեջ են ընկնում գործադիր իշխանությունից, և սահմանափակվում է նրանց անկախությունը: Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ թիվ 1, թիվ 2 նախագծերը առաջարկում են Արդարադատության խորհրդի ձևավորման այլ կարգ, իսկ թիվ 3 նախագիծը Արդարադատության խորհրդի ձևավորման հետ կապված փոփոխություններ չի առաջարկել: Թիվ 1 նախագծի համաձայն՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ մինչև 5 տարի ժամկետով ընտրված մինչև 9 դատավորներ և հանրապետության նախագահի կողմից նշանակված 3 իրավարան գիտնականներ, իսկ թիվ 2 նախագծի համաձայն՝ Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ 5 տարի ժամկետով ընտրված 6 դատավորներ, Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական փաստաբան ու իրավաբան գիտնական և արդարադատության նախարարն ու գլխավոր դատախազը՝ ի պաշտոնե: Զարմանալի չէ, որ խորհրդի ձևավորման նախանամանները թողնված են օրենքի կարգավորմանը: Մեր կարծիքով, ճիշտ չէ թիվ 2 նախագծում արված այն առաջարկությունը, որ պետք է Արդարադատության խորհրդի կազմից երկուական փաստաբան: Նախ երկու նախագծերն էլ գնում են այն ուղղով, որ վերացվի փաստաբանի հասուկ արտոնագրի հնատիտուտը, քանի որ և թիվ 1, և թիվ 2 նախագծերը գործող Սահմանադրության 93-րդ հոդվածի փոփոխված շարադրանքում չեն նշել վճռաբեկ դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, իսկ Արդարադատության խորհրդի կազմում նշվել է ուղղակի «փաստաբան» տերմինը: Արդարադատության խորհրդի նման կազմը կստիպի դատավորներին միրաշահել փաստաբաններին՝ չկարողանալով ապահովել գործի բազմակողմանի քննություն: Նման պայմաններում դատավորները, ճիշտ է, կփորձեն առավելագույն օբյեկտիվ լինել, բայց մյուս կողմից նսեմանում է քրեական մեղադրանքի դերը, որը կհանգեցնի նրան, որ դատավորները կսկսեն կայացնել անօրինական վճիռներ և դատավճիռներ, որոնք ձեռնտու կլինեն ամբաստանյալին և պատասխանողին, բայց բացասական ազդեցություն կունենան հանցավորության դեմ պայքարում: Ստացվում է, որ դատախազներից այլևս կախում չի լինի, որը, ինչպես տեսնում ենք, ունի իր և բացասական, և դրական կողմերը: 11 անդամ ունեցող Արդարադատության խորհրդից, չհաշված նախագահին (ըստ թիվ 1 նախագծի), առնվազն 4-ից դատավորն այս կամ այն կերպ գտնվում է կախվածության մեջ: 2 իրավաբան գիտնականի առկայությունը ևս բավարար չէ (ըստ թիվ 2 նախագծի): Ուստի թիվ 1 նախագիծը Արդարադատության խորհրդի գործողության և ձևավորման համենատարար ավելի արդյունավետ տարբերակ է առաջարկում՝ դրա կազմից հանելով արդարադատության նախարարին, փոխարենը կազմը համալրելով գաղտնի քվեարկությամբ ընտրված դատավորներով և 3 իրավաբան գիտնականներով:

Ուղղունելի է նաև, որ ընդլայնվել է Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, այդ քվում նաև՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմել որոշակի գործով, եթե առկա է դատարանի վերջնական ակտը, և վիճարկվում է իր նկատմամբ կիրաված օրենքի այս կամ այն դրույթի սահմանադրականությունը:

Թիվ 1 և թիվ 2 նախագծերում կարծես թե իշխանության թերի միջև «հակակշիռների և զսպումների» սահմանված համակարգը շարունակում է գործել:

Աշխարհի շատ երկրներում, օրինակ՝ ՌԴ-ում պրեզիդենտը, Մեծ Բրիտանիայում միապետն իրավունք ունեն արձակել համապատասխանաբար Դուման և Համայնքների պալատը. այնպես որ պետության գլխի կողմից խորհրդարանը արձակելու ինստիտուտն ընդունված է շատ երկրներում, այդ թվում նաև ՀՀ գործող Սահմանադրությամբ, սակայն թիվ 1 նախագիծը «արձակել» կամ «ցրել» տերմինի

փոխարեն օգտագործել է «կրճատել» տերմինը, որը, մեր կարծիքով, չի արտահայտում այդ ինստիտուտի իրական իմաստը: Կրճատել, ըստ եռթյան, նշանակում է, օրինակ, Ազգային ժողովի գործնեության 4 տարին դարձնել 2 կամ 3, բայց դա չի արտահայտում այն իմաստը, ինչ իրականում արտահայտում է պետության գլխի կողմից Ազգային ժողովն արձակելու ինստիտուտը: Այդ հանգամանքն ասկում է նաև նույն թիվ 1 նախագծի հոդված 78-ում առաջարկվող փոփոխությունում, երբ 74.1-ում նշվում է, որ հանրապետության նախագահը ... կրճատում է գործող Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը՝ նշանակելով արտահերթ ընտրություններ: Մրանից բխում է, որ մեզանում ընդունված է այն տեսակետը, որ պետք է խորշել, խուսափել հանրապետության Ազգային ժողովն արձակելու ինստիտուտից, որն իրականում ավելի արդյունավետ է և պատասխանատու է դարձնում Ազգային ժողովին հատկապես պետության համար վճռորոշ նշանակություն ունեցող պահերին, օրինակ, կառավարության գործունեության ծրագրի հիմնադրույթներն հաստատելիս և իրակացնելիս, որից կախված է մի ամբողջ ժողովողի ճակատագիրը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՍԱՍ

1995թ. հուլիսի 5-ին հանրարվեով ձայների բացարձակ մեծամասնությամբ ընդունվեց Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը, որն էականորեն տարբերվում էր խորհրդային ժամանակաշրջանում Հայաստանի ունեցած սահմանադրություններից: Դրանով սահմանվեցին մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք, ստեղծվեցին իրական նախադրյալներ ու մեխանիզմներ մարդու իրավունքների պաշտպանության համար:

Քաղաքացիական հասարակության կայացման համար անհրաժեշտ է ունենալ այնպիսի օրենսդրություն, որը ստեղծի իրական հանրավորություն ինքնակարգավորվելու համար: Իսկ դրա իրականացումն, իհարկե, հնարավոր չէ միանգամից, դա հնարավոր է ժամանակի ընթացքում, եթե ժամանակն ինքն է ապացուցում օրենսդրական ակտերում ամրագրված դրույթների ծննդրտացիությունը, արդյունավետությունը, կամ ժխտում դրանք՝ հավաստելով դրանց ոչ ծիշտ ու անարդյունավետ լինելը: Անհրաժեշտություն է առաջանում ստրատեգիական նպատակին՝ ինքնակարգավորվող քաղաքացիական հասարակությանը հասնելու համար փոփոխություններ կատարել օրենսդրության մեջ, իսկ դրանք պետք է սկսել իրավական համակարգի գագաթին կանգնած, բարձրագույն իրավաբանական ուժով օժտված ակտից՝ Սահմանադրությունից:

Այսօր Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կանգնած են նման խնդրի առաջ: Առաջարկված 3 նախագծերից յուրաքանչյուրն ունի իր դրական և բացասական կողմերը: Ինչպես արդեն նշել ենք, ողջունելի է, որ ստեղծվում է հնարավորությունը քաղաքացիների համար դիմելու Սահմանադրական դատարան, կամ նախատեսվում է քաղաքացիների համար իրավունք քրեական դատավարությունում, անկախ դատավարական կարգավիճակից, ունենալ պաշտպան, կամ որ պետությունը շրջակա միջավայրի նկատմամբ իրականացվող իր քաղաքականության մեջ պետք է ելնի ոչ միայն ներկա, այլ նաև ապագա սերունդների շահերից: Բացասական կարելի է գնահատել հողի սեփականության իրավունքի հետ կապված վերաբերմունքը՝ ամրագրված թիվ 1, թիվ 2 նախագծերում կամ երկրադարձության սահմանումը թիվ 3 նախագծում:

Սահմանադրությունը պարտադիր կերպով արտացոլում է տվյալ ժողովրդի, ազգի պատմական, տնտեսական, մշակութային, հոգեբանական, սովորությային, անգամ՝ աշխարհագրական տարածքի առանձնահատկությունները, որը նախագծերի հեղինակներին կարծես թե հաջողվել է անել:

Դեռևս կա ժամանակ կատարելու փոփոխություններ, ուղղումներ ներկայացված նախագծերում: Անհրաժեշտ է հասարակական լայն խավերին տեղյակ պահել առաջարկվող փոփոխությունների նախն, կազմակերպել հասարակական լսումներ, և հեղինակների կողմից բացատրել ու հիմնավորել առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտությունն ու հիմնավորվածությունը, հաշվի առնել բոլոր դիտողությունները և առարկությունները: Սա է սահմանադրական բարեփոխումների հաջողության գրավականը, այլապես այն դատապարտված է անհաջողության ի սկզբան:

Ընտրությունը մերն է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, և մենք էլ ինքներս պետք է որոշենք մեզ պատկանող իշխանության գործունեության սկզբունքները, լիազորել նրան հանդես գալու մեր անունից ու պաշտպանելու մեզ թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես ու բարոյապես:

Օգտագործված գրականության ցանկ

Տեսական աղբյուրներ

ՍՈՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՌԱՋԻՆ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔԱՅԼԵՐԸ ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԵՂՔ ԲԵՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1990թ. օգոստոսի 23-ին Հայաստանի նորընտիր Գերագույն Խորհուրդն իր առաջին նստաշրջանին ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին»՝ ընտրելով ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին հավատարմության ուղին: Դրանով հանրապետության խորհրդարանը հռչակեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետության, հռչակվեց ինքնիշխան պետություն՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ: Պետական դրոշ հաստատվեց եռագույնը (կարմիր, կապույտ, նարնջագույն):

Հռչակագրի ընդունմամբ հայ ժողովրդի կյանքում նոր ժամանակաշրջանի սկիզբ դրվեց:

Հայաստանում 1991թ. սեպտեմբերի 21-ին անցկացված հանրաքվեի միջոցով Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն⁴⁵:

Վերականգնելով դարեր առաջ կորցրած անկախությունը՝ հայ ժողովրդը ձեռնամուխ եղավ օրենսդրական և իրավական ծկուն համակարգի ստեղծման գործընթացին: Առաջին քայլերից էր հանդիսանում նորանկախ պետության համար Սահմանադրության ընդունումը:

Եվ հայ ժողովուրդը երկար չսպասեց. 1995թ. հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Սահմանադրության ընդունմամբ մարդու իրավունքները կարգավորվող օրենսդրական դաշտը էապես ընդլայնվեց ու հարստացավ, ձեռք բերեց սահմանադրական իինք: ՀՀ Սահմանադրությունն ամրագրեց 1991թ. ՀՀ Անկախության մասին հռչակագրով հայտարարված գորույթները. մասնավորապես, պետության ինքնիշխան, ժողովրդավարական իրավական, սոցիալական բնույթը (հողված 1), մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերին համապատասխան (հողված 4), վավերացված միջազգային պայմանագրերի գերապատվությունը (հողված 6) և այլն:

Սա պատահական չէր, քանի ներկայումս, երբ յուրաքանչյուր պետության կարևորագույն խնդիրը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, դժվար է պատկերացնել մի պետություն, որը չունի օրենսդրական այնպիսի համակարգ, որը կոչված է կարգավորելու բազմաբնույթ հասարակական հարաբերություններ, սահմանելու մարդկանց, կազմակերպությունների և իշխանությունների վարքագծի կանոններ: Ներկա հասարակության և պետության մեջ սկզբունքային, առաջնային նշանակության հասարակական և պետական ինստիտուտներն ամրապնդվում են սահմանադրություններում:

Սահմանադրությունը այնպիսի նորմատիվ ակտ է, որը պետության իրավական ողջ համակարգի նորմերի նկատմամբ ունի բարձրագույն իրավաբանական ուժ և կոչված է կարգավորելու՝ մի կողմից, մարդու և հասարակական, մյուս կողմից՝ մարդու և պետության միջև հարաբերությունները, ինչպես նաև՝ հենց իր՝ պետության կազմակերպման հիմունքները:

Իրավաբանական տեսակետից՝ Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է, որն ամրագրում է հասարակական և պետական կարգի կարևորագույն սկզբունքները, իշխանության աղյուրը, պետության կառուցվածքն ու կառավարման ծեզ, քաղաքացիների իրավական դրության հիմունքները:

«Սահմանադրություն» տերմինը առաջացել է լատիներեն constitutio բառից և բառացիորեն նշանակում է սահմանել կամ կառուցվածք: Այն կիրառվել է դեռևս հունական և հռոմեական փիլիսոփաների ու իրավագետների աշխատություններում, հռոմեական կայսրերի և եվրոպական պետությունների օրենսդրություններում, այդ են վկայում պատմա-իրավական հուշարձանները: Յարկ է նշել, որ ներկայումս սահմանադրության հասկացությունն իր հնաստային առունու տարբերվում է նախկինից: Սահմանադրական կարգերը արդյունք են բացարձակ միապետությունների դեմ տարած հաղթանակի և ազգային ազտագրական պայքարի⁴⁶:

Պատմության մեջ առաջին գրված Սահմանադրությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787թ. Սահմանադրությունն է, որը գործում է առ այսօր: 1791թ. մայիսի 3-ին ընդունվեց Լեհաստանի Սահմանադրությունը, որը կարևոր ուղենիշ հանդիսացավ լեհական պետականության համար: 1791թ. սեպտեմբերի 3-ին իր առաջին Սահմանադրությունն ընդունեց Ֆրանսիան: Հետագայում

⁴⁵ 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը՝ շուրջ 2 միլիոն 43 հազար մարդ (քեարկության իրավունք ունեցողների 94%-ը) հանրաքվեի միջոցով «այս» ասաց անկախությանը:

⁴⁶ Տե՛ս Հ. Խաչատրյան: Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը: Երևան, 1991, էջ 4

սահմանադրություններ ընդունելու ալիքը տարածվեց աշխարհով մեկ, և այսօր գրեթե բոլոր երկրներն ունեն իրենց գրված սահմանադրությունները: Այլ է Մեծ Բրիտանիան: Այս երկիրը, որը համարվում է անգլոսաքսոնական իրավունքի դասական երկիր՝ չումի «գրված» Սահմանադրություն՝ որոշակի համակարգով շարադրված միասնական իշխանական օրենք: Մեծ Բրիտանիայի Սահմանադրությունը 13-20-րդ դարերում ընդունված մի շարք ակտերի ու սահմանադրական սովորությունների ամբողջություն է (Ազատությունների մեջ խարտիա՝ 1215թ, Իրավունքների մասին հանրագիր՝ 1628թ, Իրավունքների մասին բիլ՝ 1689թ. և այլն):

Գրված Սահմանադրություն ունենալու գաղափարից անմասն չի մնացել նաև հայ ժողովուրդը: Որոշ հայ քաղաքական գործիչներ և մտավորականներ իրենց ներդրումն են ունեցել Սահմանադրություն ունենալու գործում:

Շահամիր Շահամիրյանը, լինելով 18-րդ դարի երկրորդ կեսի հայ ազգագրական շարժման գաղափարախոսության երևելի դեմքերից, մեծ ներդրում է ունեցել մարդու իրավունքների սահմանման հարցում: Իր ծրագրերն ու պատկերացումները նա ամփոփեց «Գիրք անուանեալ որոգայք փառաց» (Սադրաս, 1773թ.) աշխատությունում, որը մինչ օրս չի կորցրել իր այժմեականությունն ու ճանաչողական նշանակությունը և իրավանք հանարկում է հայ իրավագիտական և քաղաքական մտքի բացառիկ կորողներից մեկը:

«Որոգայք փառացը» բաղկացած է երկու մասից: Առաջինը տեսական բնույթ ունի, որտեղ հեղինակը շարադրել է հասարակական-քաղաքական կարգի սկզբունքները, իսկ երկրորդը՝ ապագա Հայաստանի Սահմանադրության նախագիծն է:

Ըստ Շահամիրյանի՝ մարդիկ բնությունից հավասար են ծնվում, հետևաբար հասարակական կյանքում պետք է միևնույն իրավունքներն ունենան⁴⁷: Մարդիկ իրենք պետք է սահմանեն օրենքներ՝ համաձայն մարդու «բնական և բանական բնությանը», և արտահայտեն նրա բնական իրավունքները՝ ազատությունը և հավասարությունը: Իսկ օրենքները պետք է պարտադիր լինեն հավասարապես բոլորի հանար՝ պաշտպանելով անձանց ապահովությունն ու ազատությունն այնպես, որ «ամենայն ոք ազատական կարող լինիցի խորհեց, խօսել և հաւատալ»:

Շահամիրյանն ապագա Հայաստանի հանար նախատեսում էր հանրապետական համակարգ, որտեղ ժողովուրդն ինքն է տնօրինում իր բախտը: Դա հնարավոր է, ըստ նրա, ժողովորդի կողմից ընտրյալների միջոցով, որոնք կարտահայտեն ամբողջ հասարակության կամքը, ինչպես ցորենի շեղջից վերցրած մի բուռ ցորենն է արտահայտում ամբողջ շեղջի էությունը:

«Որոգայքի» երկրորդ մասում, որը բաղկացած է 521 հոդվածից, տրված է պետական ամբողջական համակարգը: Շահամիրյանի տեսլական հանրապետությունում իշխանության բարձրագույն մարմինները՝ և օրենսդիր (Հայոց տունը), և գործադիր (Նախարարությունը), ընտրվում են երեք տարվա պարբերականությամբ: Պատգավորները և պաշտոնյաները չարդարացնելու դեպքում ետ են կանչվում կամ ազատվում պաշտոնից: Խորհրդարանը՝ Հայոց տունը, բարձրագույն մարմինն է, որին ենթակա և հաշվետու են մնացած բոլոր մարմինները:

Նախագծում բազմաթիվ հոդվածներ կամ, որոնք սահմանում են քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, ընտրական կարգը, դատարիավական համակարգը, պետական պաշտոնյաների նշանական չափանիշները և այլն:

Ավելորդ չեն նշել, որ հեռավոր Հնդկաստանի Մադրաս քաղաքում այս զարմանալի այրը, անշուշտ, ներշնչված ֆրանսիական լուսավորիչների գաղափարներով, մարդու իրավունքներ էր հրչակում ու պետական կառավարման ժողովրդավարական սկզբունքներ առաջադրում այն ժամանակ, երբ դեռ Ֆրանսիական Հանրապետության և ԱՄՆ սահմանադրությունները, թեպես մոտալուտ, բայց ապագա էին, իսկ անկախ Հայաստանի Հանրապետությանը հարկ էր լինելու սպասել մոտ մեկուկես դար:

Հետագայում, արդեն 19-րդ դարի երկրորդ կեսերին, երբ արևմտահայերին համակեց ազատագրկան շարժումները՝ ուղղված օսմանյան կայսրության լոժից ազատվելուն, 1853թ., Ազգային հոգևոր և գերազույն ժողովների համաձայնությամբ կազմված «Ուսումնական խորհրդուրդ» (անդամներ՝ Ն. Ռուսինյան, Գ. Օսյան, Ն. Պայյան և ուրիշներ) մշակում է (բեղջական սահմանադրության սկզբունքը և 1848թ. Ֆրանսիական հեղափոխության ազդեցությամբ) ազգային, մշակութային ու հասարակական կյանքին վերաբերող կանոնադրություն, որը 1857թ. ներկայացվել է Ազգային ժողովի հաստատմանը: Սակայն կղերամիրայականների կողմից այն մերժվեց՝ պատճառաբանությամբ, որ այն հակասում է պետության և ազգային շահերին: 1859թ. նեկտեմբերին սահմանադրական հանձնաժողովը ներկայացրել է բարեփոխված կանոնադրությունը, որը նորից մերժվում է: Առաջադիմականների և կղերամիրայականների սուր պայքարի պայմաններում, քննարկումից և փոփոխություններից հետո, 1860թ. մայիսի 24-ին Կոստանդնուպոլիսի Ազգային ժողովն ընդունեց կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկով անվանվեց «Ազգային Սահմանադրություն»: Սուլթանական կառավարությունը

47 Տե՛ս «Որոգայք փառաց», «Քննութիւն մարդոյ ի երես երկիր բնականապես հաւասար ծնանի», Թիֆլիս, 1913, էջ 102

ձգձգեց Ազգային Սահմանադրության հաստատումը, սակայն, Երկնչելով ժողովրդական հուզումներից, 1863թ. մարտի 17-ին վավերացրեց այն՝ էական փոփոխություններով:

«Ազգային Սահմանադրության» նախագիծն ունեցել է 150 հոդված, իսկ հաստատվածը՝ 99⁴⁸:

Վերը նշված փաստաթղթով թուրքահայերին պետք է տրվեր ինքնավարություն՝ իրենց ազգային ներքին գործերը (հիմնականում կրթական, եկեղեցական) տնօրիննելու համար:

«Ազգային Սահմանադրությունն» արգելվեց 1896թ. սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի հրամանով: Կրկին արտոնվեց 1908թ., իսկ 1915թ. վերջնականապես դադարեց գործելուց:

Այս «Սահմանադրությունն» իր իրավական բնույթով այն անկրկնելի փաստաթղթերից, որ գոյություն է ունեցել պատմության մեջ: Եվ պատահական չէ, որ այն թարգմանվել է տարբեր լեզուներով:

Այնուհետև, վերը նշված փաստաթղթերին պետք է հաջորդեին ՀՍՍՀ Երեք՝ 1922, 1937, 1978 թվականների սահմանադրությունները:

1922 թվականին Սովետական համահայաստանյան առաջին համագումարն ընդունեց Սովետական Հայաստանի առաջին Սահմանադրությունը: Այն մշակվել էր Վ. Ի. Լենինի «Աշխատավոր ու շահագործող ժողովրդի իրավունքների դեկլարացիայի» դրույթների հիման վրա և 1918 թ. հուլիսին ընդունված ՌՍՖՍՀ Սահմանադրության սկզբունքներով⁴⁹:

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների դեպուտատների սովետական առաջին համագումարում ընդունված Հայկական ՍՍՀ առաջին Սահմանադրությունը բաղկացած էր 5 հատվածից, ուներ 12 գլուխ և 89 հոդված⁵⁰:

Հայաստանի սովետների 9-րդ արտակարգ համագումարը 1937 թ. մարտի 20-ին վերսկսեց իր աշխատանքները: Համագումարի քննարկմանը դրված հարցերից մեկն էլ Հայկական ՍՍՀ 1937թ-ի Սահմանադրության նախագծի ընդունումն էր: ՀՍՍՀ նոր Սահմանադրությունը օրենսդրական կարգով ձևակերպեց Հայկական ՍՍՀ-ն որպես սուվերեն հանրապետություն և իրավահավասար անդամ ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու փաստը⁵¹:

Այնուհետև, 1978թ. ՀՍՍՀ 9-րդ գումարման Գերագույն սովետի արտահերթ նստաշրջանում ընդունվեց ՀՍՍՀ նոր Սահմանադրությունը, որն ուժի մեջ մտավ նոյն թվականի ապրիլի 14-ից: Այն գործեց մինչև Հայաստանի երրորդ հանրապետության առաջին Սահմանադրության ընդունումը:

ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում՝ Հայաստանում 1991թ. անցկացված հանրաքվեի միջոցով Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն և սկզբնավորվեց սոցիալիստական համակարգը ժողովրդավարականի փոխակերպելու գործընթացը:

Համակարգային փոփոխությունները ուղեկցվում էին քաղաքական, տնտեսական, իրավական, այդ թվում և մարդու իրավունքների և այլ բնագավառներում բարեփոփոխությունների իրականացմանը և մարդկային զարգացումն ապահովող իրական գործուների ձևավորմամբ:

Հայաստանի նախորդ Երեք սահմանադրություններն ընդունվել են ժողովրդի անունից: Միայն 1995թ. Սահմանադրության նախաբանում է գրված, որ «Հայ ժողովուրդը,... իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը... ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»: Հայոց պատմության մեջ առաջին անգամ, 1995թ. հուլիսի 5-ին հայ ժողովուրդը հանրաքվեի միջոցով ընդունեց իր Սահմանադրությունը:

Ծուրջ 9 տարի է, ինչ գործում է ներկայիս Սահմանադրությունը: Սակայն արդի աշխարհում տեղի ունեցող գործընթացներին համընթաց քայլելու, ինչպես նաև՝ Եվրոպուրիորիդին անդամակցելու առնչությամբ ստանձնած պարտավորությունները կատարելու, մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդման հիմնախնդիրները Սահմանադրության փոփոխությունների պահանջ են առաջանում:

2003թ. մայիսին հանրաքվեի դրվեց ՀՀ Սահմանադրության լրացումների և փոփոխությունների նախագիծը, որը չհավաքեց անհրաժեշտ քանակությամբ ձայներ: Եվ քանի որ առաջիկայում նախատեսվում է հանրաքվեի դնել փոփոխությունների և լրացումների նոր տարրերակը, անհրաժեշտ են հանրում քննարկել, թե գործող Սահմանադրությունը և նրա լրացումների և փոփոխությունների նախագծերն ինչ բացրողումներ և առավելություններ ունեն:

2. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

48 Տե՛ս «Հայկական համառոտ հանրագիտարան», հատոր 1, Երևան, 1990թ., էջ 59-60

49 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատոր 7, Երևան, 1967, էջ 200

50 Տե՛ս նոյն տեղում, էջ 200

51 Տե՛ս նոյն տեղում, էջ 378-384

Սահմանադրությունը մարդու իրավունքների ազատ իրականացման և իրավունքների պաշտպանության գործուն երաշխիքների զարգացման անհրաժեշտություն ունի: Վերջիններիս պակասը պայմանավորված է պետական կառույցների ամրագրված պարտականությունների բացակայության հանգանաճքով: Սահմանադրությունը պետք է հստակ ներկայացնի և մարդու իրավունքները, և դրանց ազատ իրականացումն ու պաշտպանությունն ապահովող ինստիտուցիոնալ կառույցների սահմանադրական խնդիրները: Կարծում ենք, որ այսպիսի մոտեցումը կարող է հիմք դնել մարդու իրավունքների ազատ իրականացման պետական երաշխավորմանը:

Սահմանադրական բարեփոխումների շրջանառության մեջ դրված նախագծերից է իշխող քաղաքական կուլիցիայի՝ ՀՀԿ, ՀՅԴ, «Օրինաց երկիր» կուսակցությունների, ՄԱ կուսակցության և Արշակ Սարյանի («Ազգային ժողովրդավարական դաշինք» կուսակցություն) կողմից ներկայացված սահմանադրության փոփոխությունների և լրացումների նախագծերը:

Աշխատանքում հիմնական ուշադրության է արժանացել ՀՀԿ, ՀՅԴ, «Օրինաց երկիր» կուսակցությունների կողմից առաջարկված Սահմանադրության նախագիծը: ՄԱԿ կուսակցության առաջարկած նախագիծը գոեթե համապատասխանում է Վերջինին՝ որոշ վերապահումներով:

Քանի որ ծավալային առօնութ հնարավոր չէ պարզաբանել Սահմանադրության նախագծերով առաջարկվող փոփոխություններն ու լրացումներն անբողջությամբ, այդ իսկ պատճառով աշխատանքում կներկայացվեն դրանցից միայն որոշները, որոնք, իմ կարծիքով, հրենցից ավելի կարևորություն, ինչպես նաև առաջնահերթություն են ներկայացնում:

Սահմանադրական բարեփոխումների նախագծերն ուղղված են սահմանադրական սկզբունքների ճիշտ վավերացմանը: Հստակեցված չէ մարդու իրավունքների՝ որպես անմիջական գործող իրավունքի անվիճելի բնույթը, չկա իրավունքի և օրենքի հատակ սահմանազատումն ու իրավաբանական արժեորումը: Այսինքն՝ օրենքի գերակայության սահմանադրական սկզբունքը պետք է իր տեղը զիջի իրավունքի գերակայության սկզբունքին: Եթե գործող Սահմանադրությունը (այսուհետ՝ Սահմանադրությունը) երաշխավորում է օրենքի գերակայությունը, ապա Սահմանադրության նախագծի (այսուհետ՝ նախագիծի) հոդված 6-ի 1-ին մասը սահմանում է. «Դայաստանի Դանրապետությունում երաշխավորվում են իրավունքի գերակայությունը և օրենքի իշխանությունը»:

Այսպես, եթե իրավունքը ազատության նորմ է⁵², բնության և մարդկային հանրության կողմից ճանաչված անօտարելի հնարավորություն, իսկ քաղաքացիական իրավունքները՝ օրենքներով սահմանված վարքագիծի կանոններ, ապա օրենքը այդ իրավունքներն ապահովող և պաշտպանող օրենսդրական հնարավորություն էն միայն: Եթե ընդունենք, որ իրավունքի արտահայտման ձևերից է նաև իրավական ակտի՝ տվյալ դեպքում օրենքը ընդունումը, ապա կարելի է եզրակացնել, որ ոչ բոլոր իրավունքները կարող են ստանալ «գրավոր» տեսք: Գերակայությունը տալով օրենքին՝ մենք որոշ իրավունքների գրկում ենք իրավական երաշխիքներից: Բնական իրավունքի ներկայացուցիչները գտնում են, որ պետության կողմից ստեղծված դրական իրավունքից բացի գոյություն ունի նաև դրական իրավունքից վեր կանգնած, բոլոր մարդկանց համար ընդհանուր, բնական իրավունքը: Բնական իրավունքի հասկացությունն իր մեջ ներառում է մարդու և քաղաքացու բնածին և անօտարելի իրավունքների նաև պատկերացուները, որոնք պարտադիր են ցանկացած պետության համար: Ըստ Ցիեղեռնի՝ եթե պետության օրենքը հակասում է բնական իրավունքին, այն չի կարող դիտվել որպես օրենք⁵³: Նետարար իրավունքը միշտ պետք է օրենքի նկատմամբ, և օրենքների չափանիշները դարձնում են իրավականությունը, իրավաչափությունը: Օրենքը իրավունքի համար միջոց է, իրականացման և պաշտպանության ճանապարհ:

ՀՀ Սահմանադրության նախագծի 7.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ասվում է. «Դայաստանի Դանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից»:

Դայաստանի Դանրապետությունը ճանաչում է Դայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու պատմական բացարձիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպաննամ գործում»:

Նորանկախ Դայաստանի Դերագույն խորհուրդը 1991թ. հունիսի 17-ին ընդունեց «Խողճի ազատության և կրոնական կազմակերպությունների նախան» ՀՀ օրենքը, որով Զայ Առաքելական Եկեղեցին հոչակվեց իբրև հայոց ազգային եկեղեցի, սակայն առանց որևէ օրենքի պաշտպանության:

301թ. քրիստոնեությունը ընդունելուց հետո Եկեղեցին և պետությունը, ազգը և հայութելիքը եղել և գոյատել են իբրև մեկ ամբողջություն: Զայ Եկեղեցու պատմությունը նույնացած է ժողովրդի պատմության հետ՝ հատկապես այն դարերում, երբ հայ ժողովուրդը օտարների լջի տակ էր և հայ Եկեղեցին իր վրա էր վերցրել պետական զանազան ֆունկցիաներ:

Ընդհանրապես, Եկեղեցու բաժանումը պետությունից միջոցառում է, երբ պետությունն օրենսդրությամբ իրամարվում է հարկադրել քաղաքացուն դավանելու այս կամ այն կրոնը, չի միջամտում

52 Տես Վ. Ն. Խրոպանյուկ: Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 207

53 Տես Վ. Ն. Խրոպանյուկ: Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997, էջ 208

Եկեղեցու ներքին կյանքին, արգելում է Եկեղեցու մասնակացությունը պետության կառավարմանը: ՈՄՖՍՀ ԺԿՍ 1918թ. հունվարի 23-ի (փետրվարի 5-ի) դեկրետով՝ Եկեղեցու բաժանումը պետությունից ստացել է օրենսդրական ուժ, որը հետագայում կիրառվել է ՍՍՀՄ-ում: Պետությունից Եկեղեցու բաժանման սկզբունքներն ամրագրված են Եղել նաև ՍՍՀՄ Երկրների սահմանադրություններում (այդ թվում նաև ՀՍՍՀ Սահմանադրությունում):⁵⁴

Նույն հոդվածի 3-րդ մասում ասվում է. «Յայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը»:

Յշշյալ հոդվածի ընդունման համար հիմք է հանդիսացել Եվրոպայի խորհրդին Յայաստանի անդամակցությունը, մասնավորապես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթները:

Այդ օրենքով պաշտոնապես գրանցված են տարբեր ուղղությունների կրոնական կազմակերպություններ (2001թ. դրությամբ հանրապետությունում գրանցված էին 50 կրոնական կազմակերպություններ): Այևայլ պատճառներով չեն գրանցվել մոլոկանները, «Եհովայի վկաները», անթրոպոսֆիստները, կրիշնայականները («Կրիշնա գիտակցության միջազգային ընկերություն»), մունականները («Միավորման Եկեղեցի»), Վկա Լիի ևս Վոչման Նիի հետևորդները («Կենդանի հոսք»):

«Եհովայի վկաները» Խոդի ազատության մասին օրենքի ընդունումից հետո քանիցս դիմել են կառավարության առներ Կրոնի գործերի պետական խորհրդության գրանցվելու խնդրանքով, սակայն մերժվել են, քանի որ կար հակասություն նրանց կանոնադրության և ՀՀ օրենսդրության միջև, մասնավորապես այլընտրանքային զինձառայության հարցի շուրջ:

2003թ. դեկտեմբերի 17-ին Աժ-ն ընդունեց «Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» օրենքը, որը միայն 2004թ. հուլիսի 1-ին մտավ ուժի մեջ: Այս օրենքի ընդունումը նպաստեց նաև «Եհովայի վկաներ»-ի գրանցմանը:

Սահմանադրության հոդված 14-ի 2-րդ մասը սահմանում է. «Յայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի»:

Նախագծում այս դրույթը չկա: Դրա բացակայությունը հնարավորություն է տալիս օտարերկյա պետության քաղաքացուն դիմելու ՀՀ իրավասու մարմիններին՝ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու համար՝ միաժամանակ պահպանելով իր նախկին քաղաքացիությունը, և հակառակը: Այսինքն, եթե Սահմանադրությունը չի սահմանափակում ցանկացած անձի ՀՀ քաղաքացի լինելու ցանկությունը, հետևաբար սահմանադրութեն «չի արգելում» Երկրադարձացիությունը:

Երկրադարձացիությունը բարիք է համարվում, սակայն այն կարող է որոշ տիհաճությունների պատճառ հանդիսանալ, անսպասելի տուգանքներ, հարկային պարտավորությունների կատարում, բանակում ծառայություն և այլն:

Յուրաքանչյուր անկախ պետություն ինքն է որոշում, թե ով պետք է լինի իր քաղաքացին և ով՝ ոչ: Որոշ անձինք կարող են ունենալ Երկու, երեք կամ ավելի պետությունների քաղաքացիություն միահամար և օգտվել իրավունքներից և ազատություններից, միաժամանակ կատարել նաև իր պարտականությունները:

Երկրադարձացիության մասին հարց կարող է առաջանալ այն դեպքում, եթե Երկու պետությունների միջև կա համաձայնություն՝ Երկրադարձացիության մասին: Մյուս դեպքերում խոսքը երկրորդ քաղաքացիության մասին է:

Տարբեր պետություններ տարբեր կերպ են մոտենում Երկրադարձացիության հարցին: Օրինակ՝ Իռլանդիան ընդունում է Երկրադարձացիությունը, Ռուլանդիայի և Խտալիայի կառավարությունը լրակյաց հանաձայնություն է տալիս, Թուրքիան և Հունաստանը ընդունում են Երկրադարձացիությունը, Նորվեգիան, Ֆրանսիան և Շվեյցարիան՝ ոչ: Շվեյցարիան այլ մոտեցում է ցուցաբերում. Թույլատորում է իր քաղաքացուն ձեռք բերել այլ Երկու քաղաքացիություն, բայց հակառակ՝ ոչ: Նույնը կարելի է ասել Յարավային Աներիկայի պետությունների մասին: Յարավ Աֆրիկյան Հանրապետությունը, ճապոնիան և Ֆիլիպինները չեն ընդունում Երկրադարձացիությունը և այլն: ԱՄՆ-ի օրենսդրությունը չի արգելում և, թերևս, չի էլ ողջունում Երկրադարձացիությունը:

Գտնում ենք, որ մեզ նման փոքր պետությունում չարժի Երկրադարձացիության հարց բարձրացնել: Այս ավելի բնորոշ է խոչըր և զարգացած պետություններին:

Անձին տալով Երկրադարձացիության իրավունք, նրան օժտում ենք, ինչպես արդեն նշեցի, քաղաքացու համար սահմանված բոլոր իրավունքներով, այդ թվում՝ նաև ընտրելու իրավունքով: Տվյալ դեպքում կարող է մտավախություն առաջանալ, որ իշխանական օղակները կարող են ձևավորվել կամ կազմակորվել՝ ընտրելով ՀՀ-ից դուրս: Ինչպես նաև, կա մտավախություն, որ այն կարող է միզրացիայի նոր պատճառ դառնալ:

⁵⁴ Տես «Յայաստանի Սովետական Հանրապիտարան», հասոր 3, Երևան, 1977, էջ 497

Եթե մտովի պատկերացնենք, որ Ֆրանսիայի քաղաքացին կարող է ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն, ապա ինչու ՀՀ քաղաքացին չի կարող ձեռք բերել Ֆրանսիայի քաղաքացիություն: Այդ դեպքում, ի՞նչ ենք կարծում, քաղաքացիություն ձեռք բերելու հոսքը ո՞ր «Նժարի» ուղղությանք կզնա:

Բազմաթիվ փոփոխություններ ու լրացրումներ են կատարվել Սահմանադրության 2-րդ՝ «Մարդու և քաղաքացու իշխանական իրավունքների և ազատությունների» գլխում:

Որպես մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք՝ նախագծով մահապատիժը՝ որպես բացառիկ պատժատեսակ չի նախատեսվում, ինչը բնական և օրինաչափ է: Թեև Սահմանադրությանը այն նախատեսված էր, սակայն ՀՀ-ում ոչ մի նահապատիժ ի կատար չէր ածվել⁵⁵:

ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր որևէ ունի կյանքի իրավունք: Սահապատիժը մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ժամը հացագործությունների համար»: Ինչպես տեսնում ենք, ՀՀ Սահմանադրությունը բույլ էր տալիս մահապատիժ կիրառումը, սակայն վերապահությանը՝ մինչև դրա վերացումը: Դրանց հետևում է, որ մեր հասարակությունը և պետությունը հեռանկարում նպատակ ուներ վերացնել մահապատիժը:

Վավերացնելով Մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանության նախն եվրոպական կոնվենցիայի 6-րդ արձանագրությունը՝ մահապատիժ վերացման նախն, Հայաստանը պարտավորություն ստանձնեց վերացնել մահապատիժը: Եվրոպական կոնվենցիայի թիվ 6՝ մահապատիժ վերացմանը վերաբերող լրացրույթը արձանագրության 1-ին հոդվածը հոչակում է. «Մահապատիժը վերացվում է: Ոչ ոք չպետք է մահապատիժ դատապարտվի կամ ենթարկվի»: Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն, մահապատիժ նախատեսվում է: «Յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ ոք չի կարող դիտավորությամբ (կանխամտածված) գրկել կյանքից այլ կերպ, քան մահապատիժ դատավճռով, որը կայացնում է դատարանը այն հանցագործության համար, որի վերաբերմաբ օրենքով այդպիսի պատիժ է նախատեսված»: Թիվ 6 արձանագրության 2-րդ հոդվածով նախնակից պետություններին համար, որոնք կատարվել են պատերազմի կամ պատերազմի վտանգ սպառնացող պայմաններում:

Սոորագրելով և իիմք ընդունելով արձանագրությունը՝ 2003թ-ի ապրիլի 18-ին Աժ-ի կողմից ընդունված նոր Քրեական օրենսգիրը, որը գործողության մեջ դրվեց նույն տարվա օգոստոսի 1-ից, որով մահապատիժը, որպես բացառիկ պատժատեսակ փոխարինվեց ցմահ բանտարկությամբ:

Նախագծի հոդված՝ 16-ի 6-րդ մասում ամրագրվել է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միաջազգային դաշնագրի» 11-րդ հոդվածը, ինչը Սահմանադրությանը սահմանաված չէ: Այն է. «Ոչ ոքի չի կարելի ազատությունից գրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու պայմանագրային պարտավորությունները»:

Նախագծով ամրագրվել է նաև մարդու իրավունքների պաշտպանի՝ օմբուդմենի ինստիտուտը: Հոդված 18-ում ասվում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունքը:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Յուրաքանչյուր ոք Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով դիմել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին, եթե սպառվել են ներաբետական իրավական պաշտպանության բոլոր միջոցները»:

Համաձայն «Մարդու իրավունքների պաշտպանի նախն» օրենքի հոդված 2-ի. «Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) իմբնուրույն և անկախ պաշտոնատար ամս է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի համրածանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և իշխանարար ազատությունների պաշտպանությունը»:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը կարգավորվում է օրենքով սահմանված կարգով:

Սահմանադրության մարդու իրավունքների բաժնում առաջարկվող փոփոխությունները դրական և առաջընթաց քայլ են, որոնք փոխում են մոտեցումը մարդու ազատությունների և իրավունքների գերակայության նկատմամբ:

⁵⁵ Նախկին Քրեական օրենսգրքի շուրջ 23 հոդվածներում որպես բացառիկ պատժամիջոց նախատեսված էր մահապատիժ՝ գեղակահարության եղանակով, ընդ որում թվարկվող հանցագործակների գերակշռող մասը առնչվում էր խաղաղ պայմաններին: Ավելին, տվյալ շարքում գերակշռում էին պետական հանցագործությունների համար նախատեսված հանցագործակները:

ՀՅ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէ իշխանությունների տարանջատման սկզբունքը, թերի է ապահոված տարանջատ, իրար հակակշիռ և հավասարակշռված օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գոյությունը:

Այսպես. նախագծի գլուխ 3-ը՝ «Հանրապետության նախագահը» վերանվանվել է. «Դայաստանի Հանրապետության նախագահը», որով հստակ երևում է ՀՅ նախագահի՝ որպես պատության գլխի ժամանակաշրջանում և նշանակալից դերը:

Փոփոխություն է կատարվել նաև գլուխ 4-ի և 5-ի անունների մեջ. «Ազգային ժողով» և «Կառավարություն» գլուխները վերանվանվել են համապատասխանաբար «Օրենսդիր իշխանությունը» և «Գործադիր իշխանությունը» ձևակերպմանը:

Այս ձևակերպմանը ավելի ճիշտ են, քանի որ ավելի են հստակեցվում այն սահմանադրահրավական նեխանիզմները, որոնք ամրագրում են իշխանությունների տարանջատման և փոխադարձ հակակշռման սկզբունքը:

Սահմանադրության հոդված 66-ի 2-րդ և 3-րդ մասերը նախագծով շարադրվել են նոր խմբագրությամբ. «Պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրամից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ բվում Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն գորարտություն կամ վիրավորանք չի պարունակում»:

«Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնածանության»:

Նույն հոդվածում ավելացել է հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս.

«Պատգամավորին չի կարելի ծերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ծերբակալությունը կատարվում է հանցագործության վայրում և բխում է գործի քննության շահերից, սակայն միաժամանակ նշելով, որ այդ մասին անհապաղ պետք է տեղեկացնել Աժ-ի նախագահին: Սահմանադրության մեջ ծերբակալումը կամ կալանավորումը թույլատրվում էր միայն Ազգային ժողովի համաձայնության դեպքում: Նախագծի նոտեցումն ավելի ճիշտ է, քանի որ այն բխում է քրեական դատավարության երաշխիքներից»:

Սահմանադրության 78 հոդվածում ասվում է. «Կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող է լիազորել կառավարությամբ՝ ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք գործում են Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չեն կարող հակասել օրենքներին: Այդ որոշումներն ստորագրում է Հանրապետության նախագահը»: Նախագծից ամբողջությամբ հանվել է այս հոդվածը, քանի որ մեզ նորմի կիրառման իմաստ չկա: Սահմանադրության ընդունումից հետո կառավարությունը ընդունենք 2 նման որոշում է կայացրել: Այս հոդվածի վերացնանք՝ կառավարության օրենքի ուժ ունեցող որոշումները որպես իրավունքի աղբյուր կդադարեն գոյություն ունենալ:

Նախագծով (հոդված 83.1) կարգավորվում է նաև կենտրոնական բանկի սահմանադրահրավական վիճակը:

Նախագծի հոդված 94.1-ի 2-րդ մասով սահմանվել է Արդարադատության խորհրդի նոր կազմ և անդամների ընտրության նոր կարգ. «Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Դայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ մինչև հինգ ժամկետով ընտրված մինչև ինը դատավորներ և Հանրապետության նախագահի կողմից նշանակված երեք իրավաբան գիտնականներ»:

Նախագծի 96-ի հոդվածի համաձայն իջեցվել է Սահմանադրական դատարանի անդամի պաշտոնավարման տարիքը՝ 70-ից դաշնալով 65-ի, այսինքն, ՍԴ-ի անդամի պաշտոնավարման և ընդհանուր իրավասության դատարանների ու վճռաբեկ դատարանի դատավորների պաշտոնավարման տարիքային ցենզը հավասարեցվել է:

Ավելացվել է նաև դրույթ, համաձայն որի ՍԴ-ի անդամները օգտվում են անձեռնմխելիությունից:

Նախագծի հոդված 100-ում ասվում է. «Դայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրավաբանացնում է Սահմանադրական դատարանը»:

ՀՅ Սահմանադրության ընդունումնամբ հանրապետությունում սահմանադրական վերահսկողության մասնակիությամբ ինստիտուտի՝ ՀՅ Սահմանադրական դատարանի հիմք դրվեց:

Սահմանադրական վերահսկողությունը հանդիս է զալիս որպես հնարավորություն և միջոց՝ Սահմանադրության գերակայության ապահովման ժանապարհով հասարակության զարգացմանը կայուն դիմանիզմ հաղորդելու համար:

Սահմանադրական արդարադատությունը, որպես դատական սահմանադրական վերահսկողության ինքնուրույն, նաև ազիտագված ու ամբողջական համակարգ, դատական սահմանադրական իրավունքի նորմերի և սահմանադրական դատավարության միջոցով ապահովում է Սահմանադրության գերակայության ու կայունության պահպանումը, բացահայտում, գնահատում և վերականգնում է խախտված սահմանադրական հավասարակշռությունը, երաշխավորում է նարդու և քաղաքացու իրավունքների ու իիմնական ազատությունների սահմանադրական պաշտպանությունը⁵⁶:

Սահմանադրական արդարադատությունն առանձնահատուկ դեր ունի նարդու իրավունքների պաշտպանության բնագավառում, առանց որի վերջինս չի կարող երաշխավորված ու ամբողջական բնույթ ունենալ:

Նախագծի հոդված 101-ի համաձայն՝ ՍԴ դիմելու իրավունք են ստացել նաև կառավարությունը, տեղական ինքնակառավարման մարմինները, յուրաքանչյուր ոք, դատարանը, մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրությամբ սահմանված դեպքերում և կարգով: Նշենք, որ Սահմանադրությունը ՍԴ-ն դիմելու իրավունք էր վերապահել միայն Հանրապետության Նախագահին և պատգամավորներին՝ առնվազ 1/3-ի առկայության դեպքում:

Հանաձայն նախագծի հոդված 108-ի. «Երևան քաղաքը համայնք է»:

Հարց է առաջանում. Եթե Երևան քաղաքը համայնք է, ապա ո՞ր մարզի մեջ է այն մտնում: Եթե Երևանը համարենք համայնք, նույն նախագծի հոդված 104.1-ի 2-րդ մասի՝ «Համայնքն իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ»: Հանաձայն քաղաքացիական օրենսգրքի հոդված 50-ի՝ «Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ծեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող»:

Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ»:

Նետևաբար, մայրաքաղաքը իրավաբանական անձ լինել չի կարող. նախ՝ այն կազմակերպություն չէ, երկրորդ՝ քաղաքը չի կարող ծեռք բերել ու իրականացնել անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Նախագծի հոդված 111.1-ում ասվում է. «Սահմանադրական փոփոխություններ կարող են նախատեսվել նաև օրենքով, որի նախաձեռնությամբ կարող է հանդես գալ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կամ Հանրապետության Նախագահը»:

Սահմանադրական փոփոխություն նախատեսող օրինագիծն ընդունվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդով»:

Այս հոդվածի բովանդակությունը հակասում է Սահմանադրության հենց հոդված 111-ի 1-ին մասին, որի համաձայն. «Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքենա միջոցով», և հոդված 112-ի 2-րդ մասին՝ «Հանրաքենա միջոցով ընդունված օրենքները փոփոխվում են միայն հանրաքենավով»:

Սահմանադրությունը հանդիսանալով երկրի հիմնական օրենքը՝ ընդունվել է հանրաքենա միջոցով: Նետևաբար նրանում փոփոխություններ կարող են կատարվել միան հանրաքենա միջոցով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հանգում ենք այն եղանակացության, որ թեև Սահմանադրության նախագծում կան մի շարք դրական, ներկա ժամանակին համապատասխան դրույթներ, միևնույն է, այն գերծ չի մնացել թերություններից:

Մինչև նախագծի հանրաքենա դնելը՝ անհրաժեշտ է, որպեսզի մեկ անգամ ևս վերանայվեն և շտկվեն այլ բացթողումները:

Սահմանադրությունից դուրս է մնացել Անկախության մասին հոչակագի 11-րդ հոդվածով ամրագրված դրույթը, ինչը, մեր կարծիքով, բացթողում է: Յոչակագի նշված հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915թ-ի Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճամաչնան գործին»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Եր., Նաիրի, 1995
2. Յոչակագի «Հայաստանի անկախության մասին», 23 օգոստոսի 1990
3. ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծ, հեղինակներ՝ Իշխող քաղաքական կուլիցիա՝ ՀՀԿ, ՀՅԴ, «Օրինաց երկիր» կուսակցություններ

⁵⁶ Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրական վերահսկողություն

4. ՀՅ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, հեղինակներ՝ ՄԱԿ կուսակցություն
5. ՀՅ Սահմանադրությամ փոփոխությունների նախագիծ, հեղինակ՝ «Ազգային ժողովողավարների դաշինք» կուսակցություն
6. Դայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրը: ՀՅ պաշտոնական տեղեկագիր 17: Եր., 1998թ.
7. «Մարդու իրավունքների համբռիանուր հոչակագիր», ընդունված և հոչակագիր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1948թ. դեկտեմբերի 10-ին
8. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր՝ ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1966թ. դեկտեմբերի 16-ին
9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա, 4 նոյեմբերի 1950, Նոու
10. Մարդու իրավունքների վերաբերյալ Դայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, պաշտոնական հայերեն թարգմանություն, փաստաթղթերի ժողովածու, Գիրք Ա, Երևան, 2001
11. Մարդու իրավունքները և մարդկային գարգացումը. Գործողություն հանուն առաջընթացի, /Մարդկային գարգացման ազգային գեկույց/, Դայաստան, 2000թ.
12. ՀՅ քրեական օրենքսգիրը, 2004 օգոստոսի 1
13. ՀՅ քրեական դատավարության օրենսգիրը, 1999 հունվարի 13
14. Դ. Խաչատրյան, Աներիկայի միացյալ նահանգների Սահմանադրությունը, Երևան, 1991թ.
15. «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913թ.
16. Դայ ժողովրդի պատմություն, հատոր 7, Երևան, 1967
17. Դայկական Համառոտ Հանրագիտարան, հատոր 1, Երևան, 1990
18. Դայաստանի Սովետական Հանրագիտարան, հատոր 3, Երևան, 1977
19. Վ. Ա. Խորովանյուկ, «Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 1997
20. «Դիտորդ» ամսագիր, 3/2002
21. Գ. Գ. Դարությունյան, Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2002

«Սահամանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով իրավաբան ուսանողների հանրապետական 1-ին գիտաժողով

. Հայաստանի Երիտասարդ իրավաբանների Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն



«Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» (ՅԵԻԱ) հասարակական կազմակերպությունը ստեղծվել է 1995թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մի խումբ ուսանողների և Երիտասարդ իրավաբանների կողմից: Այն ՅՀ Արդարադատության նախարարությունում, որպես հասարակական կազմակերպություն, գրանցվել է 1995թ. մարտի 14-ին: 1997թ.-ի մայիսի 23-ին, 1999թ.-ի դեկտեմբերի 14-ին և 2002թ.-ի դեկտեմբերի 27-ին վերագրանցվել է: Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի հիմնական նպատակն է զարգացնել նոր սերնդի իրավաբանների ներուժը և աջակցել Հայաստանի կայացմանը, որպես իրավական և ժողովրդավարական պետություն: Իր կանոնադրական նպատակների կատարման համար Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիան իրականացնում է բազմազան ծրագրեր, այդ թվում՝ ուղղված իրավաբանական գիտելիքների զարգացմանն ու տարածմանը: ayla@ayla.am :

. Հայաստանի իրավաբանական հիմնադրամ

Հայաստանի իրավաբանական հիմնադրամը հիմնադրվել է 2003 թվականի օգոստոսի 23-ին և ՅՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնում գրանցվել 2003 թվականի սեպտեմբերի 9-ին: Քիմնադրամի հիմնական նպատակներից է նպաստել ՅՀ-ում իրականացվող դատադրավական բարեփոխումներին և ՅՀ-ում փաստաբանական ինստիտուտի զարգացմանը, փաստաբանների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը և փաստաբանի դերի բարձրացմանը, ինչպես նաև նպաստել ՅՀ իրավաբանական ԲՈՒՆ-երի և ԲՈՒՆ-երի իրավաբանական ֆակուլտետների կայացմանը, օժանդակել իրավաբանական ԲՈՒՆ-երի և ԲՈՒՆ-երի իրավաբանական ֆակուլտետներում ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպմանը: lfa@ayla.am :



ՅԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ
ԻՐԱՎԱԲԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՅԵԻԱ-ի իրավաբան ուսանողների բաժանմունքը հիմնադրվել է Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի որոշմամբ և հանդիսանում է Հայաստանի Երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կառուցվածքային ստորաբաժնում: Իրավաբան ուսանողների բաժանմունքի հիմնադիր համաժողովը տեղի է ունեցել 2004թ.-ի ապրիլի 23-ին: Իրավաբան ուսանողների բաժանմունքն իր շարքերում միավորում է ավելի քան 20 պետական և ոչ պետական իրավաբանական ԲՈՒՆ-երուն և ԲՈՒՆ-երի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների: Իրավաբան ուսանողների բաժանմունքի հիմնական նպատակներից է նպաստել ՅՀ-ում իրավաբան ուսանողների հնքնակազմակերպմանը և իրավաբանական ԲՈՒՆ-երուն և ԲՈՒՆ-երի իրավաբանական ֆակուլտետներում իրավաբանական կորության որակի բարձրացմանը, դասավանդման արդի մեթոդների արմատավորմանը և իրավաբանական կրթության զարգացմանը, ինչպես նաև նպաստել փաստաբանական ինստիտուտի զարգացմանն ու կայացմանը:

lsd@ayla.am :